Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ
Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ի Ց

27 մայիսի 2015 թվականի N 23

---

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՆԱՊԱՏԱՅՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հավանություն տալ Հայաստանի Հանրապետությունում անապատացման դեմ պայքարի ռազմավարությանը և գործողությունների ազգային ծրագրին՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2015 թ. մայիսի 27
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2015 թ.
մայիսի 27-ի նիստի N 23
արձանագրային որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՆԱՊԱՏԱՑՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Անապատացումը որպես գլոբալ էկոլոգիական հիմնախնդիր

1) Անապատացումը բնութագրվում է որպես չորային շրջաններում հողի դեգրադացիայի եզրափակիչ փուլ: Այն, որպես գլոբալ էկոլոգիական հիմնախնդիր, ներառում է շրջակա միջավայրում ընթացող անցանկալի գործընթացների ու դրանց հետևանքների ամբողջությունը, որի հետևանքով նվազում կամ վերանում է տվյալ տարածքի կենսաբանական կարողությունը: Այդ է պատճառը, որ անապատացման դեմ պայքարն ընդգրկում է ոչ միայն բնական էկոհամակարգերի, դրանց բաղադրիչների և բնական պաշարների պահպանության ու օգտագործման աշխատանքների արդյունավետ կազմակերպումը, այլև շրջակա միջավայրի էկոլոգիական հավասարակշռության խախտմանը նպաստող այնպիսի գործոնների ազդեցության մեղմացմանն ուղղված ջանքերը, ինչպիսիք են սոցիալական և տնտեսական գործոնները: Հետևաբար, անապատացման դեմ պայքարի արդյունավետությունը, նախ և առաջ, պայմանավորված է տվյալ երկրի սոցիալ-տնտեսական պայմանների խորը վերլուծությունից և բնական պաշարների ներուժի բացահայտումից: Անապատացման, հողերի դեգրադացիայի և երաշտի հետևանքները վառ արտահայտվում են աղքատ գյուղական շրջաններում: Այս խնդիրների հետ առնչվում են ավելի քան 110 երկրներ: Աշխարհում մոտ 1.5 միլիարդ մարդ ուղղակի կախվածության մեջ են չորային հողերից:

2) Ռիո+20-ի ավարտական զեկույցում նշված է, որ անապատացումը, հողի դեգրադացիան և երաշտը գլոբալ խնդիրներ են, որոնց լուծումը հողերի չեզոք դեգրադացիայի վիճակին հասնելն է, ինչը կխթանի ֆինանսական ռեսուրսների մոբիլիզացմանը: Հողերի չեզոք դեգրադացիան ենթադրում է հողային ռեսուրսների վիճակի բարելավում՝ նպատակաուղղված տնտեսական, սոցիալական և բնապահպանական օգուտների աճին: Ըստ ՄԱԿ-ի <<Անապատացման դեմ պայքարի>> կոնվենցիայի կողմերի կոնֆերանսի 8/COP.11 որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի կողմից մշակված սահմանման՝ <<Հողերի չեզոք դեգրադացիան վիճակ է, երբ բերրի և առողջ հողային ռեսուրսների քանակը մնում է անփոփոխ կամ ավելանում որոշակի ժամանակահատվածի և տարածական ծավալների սահմաններում, ինչն

անհրաժեշտ է կենսական նշանակություն ունեցող էկոհամակարգային ծառայությունների ապահովման համար>>: Հողերի չեզոք դեգրադացիան ազգային մակարդակով քաղաքականության մեջ ներառելու ուղիներն են՝

ա. ընդգրկել հողերի չեզոք դեգրադացիայի վերաբերյալ դրույթները ՄԱԿ-ի <<Անապատացման դեմ պայքարի>> կոնվենցիայի 10-ամյա ռազմավարությանը ներդաշնակեցված Գործողությունների ազգային ծրագրում.

բ. մշակել հողերի չեզոք դեգրադացիայի իրականացման ծրագիր:

2. <<Հայաստանում անապատացման դեմ պայքարի գործողությունների ազգային ծրագրի>> իրականացման գործընթացը

1) <<Հայաստանում անապատացման դեմ պայքարի գործողությունների ազգային ծրագիրը>> հավանության է արժանացել ՀՀ կառավարության 2002 թ. մարտի 28-ի N 13 արձանագրային որոշմամբ: Անցած ժամանակահատվածում միջազգային կազմակերպությունների օժանդակությամբ իրականացվել են հետևյալ աշխատանքները:

ա. հայերեն լեզվով թարգմանվել և հրատարակվել է <<Անապատացման դեմ պայքարի>> Կոնվենցիայի տեքստը և Հայաստանում անապատացման երևույթները լուսաբանող գիտահանրամատչելի ձեռնարկներ.

բ. ՀՀ Վայոց Ձորի, Սյունիքի և Արարատի մարզերում իրականացվել են տեղեկատվական և ուսումնական սեմինարներ՝ անապատացման երևույթների կանխարգելման վերաբերյալ.

գ. 2002-2004 թթ. ընթացքում ՀՀ բնակավայրերի տարածքներում իրականացվել է առաջնահերթ հակասողանքային միջոցառումների ծրագիրը, որը ներառել է նաև սողանքների ռեժիմային ուսումնասիրման աշխատանքները.

դ. 2003-2006 թթ. իրականացվել են <<ՀՀ Կոտայքի մարզի Գառնի համայնքի անապատացման ենթարկված հողատարածքների վերականգնում>> և <<ՀՀ Տավուշի մարզի Մակարավանք հուշահամալիրի տեղամասի ինժեներաերկրաբանական հետազոտական աշխատանքներ>> ծրագրերը, որոնց արդյունքում ընդլայնվել են Գառնի համայնքի ոռոգվող տարածքները, տրվել են հակասողանքային միջոցառումների վերաբերյալ առաջարկություններ՝ Մակարավանքի հուշահամալիրի պահպանության նպատակով.

ե. 2002-2009 թթ. <<Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման>> ծրագրի շրջանակներում ՀՀ Տավուշի և Գեղարքունիքի մարզերում իրականացվել են նաև անապատացման երևույթների մեղմացմանն ուղղված միջոցառումներ.

զ. <<Հազարամյակի մարտահրավերներ>> ծրագրի շրջանակներում իրականացվել են ոռոգելի տարածքների ընդլայնման, ինչպես նաև՝ դրենաժային

համակարգերի վերականգնման աշխատանքներ: Ոռոգելի հողատարածքները, 2007 թ. համեմատ, ավելացել են շուրջ 1300 հա-ով: Իրականացվել են բնական կերհանդակների բարելավման և ջրարբիացման աշխատանքներ, որի շրջանակներում վերականգնվել են շուրջ 12 կմ ջրարբիացման համակարգեր, ինչի շնորհիվ օգտագործելի են դարձել ավելի քան 18000 հա հեռագնա բնական արոտներ.

է. <<Իրիգացիոն համակարգի վերականգնում>> ծրագրի շրջանակներում վերականգնվել է 260 կմ ջրագիծ, վերականգնվել և կառուցվել են 238 խորքային հոր, մաքրվել և անցկացվել է գործող 310 կմ դրենաժային ցանց:

2) <<Անապատացման դեմ պայքարի>> ՄԱԿ-ի կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների և <<Հայաստանում անապատացման դեմ պայքարի գործողությունների ազգային ծրագրով>> նախատեսված գործողությունների կատարման ընթացքի վերաբերյալ մշակվել և կոնվենցիայի քարտուղարությանն է ներկայացվել հինգ Ազգային զեկույց: Վերջիններս հավանության են արժանացել կոնվենցիայի քարտուղարության կողմից և տեղադրվել են կոնվենցիայի պաշտոնական կայքում (http://www.unccd.int):

3. Անապատացման դեմ պայքարի 10-ամյա ռազմավարությունը

1) 2007 թվականին ՄԱԿ-ի <<Անապատացման դեմ պայքարի>> կոնվենցիայի Կողմ երկրների 8-րդ կոնֆերանսը հաստատեց կոնվենցիայի իրականացման 10-ամյա ռազմավարական ծրագիրը 2008-2018 թվականների համար, որի հիմնական նպատակն է մինչև 2018 թվականը ձևավորել գլոբալ համագործակցություն՝ նպատակաուղղված վնասվող տարածքներում հողերի դեգրադացիայի երևույթների կանխարգելմանը, երաշտի հետևանքների մեղմացմանը, աղքատության նվազեցմանը և շրջակա միջավայրի կայունության ապահովմանը: Արդյունքում որոշվել են հետևյալ չորս ռազմավարական նպատակները.

ա. բարելավել բնակչության կյանքի պայմանները վնասվող տարածքներում.

բ. բարելավել վնասվող էկոհամակարգերի վիճակը.

գ. հասնել գլոբալ օգուտների՝ կոնվենցիայի արդյունավետ իրականացման հաշվին.

դ. արդյունավետ համագործակցություն հաստատել ազգային և միջազգային սուբյեկտների միջև՝ մոբիլիզացնելով ռեսուրսները:

2) Ռազմավարությունն ընդգրկում է հինգ օպերատիվ նպատակներ, որոնք կարճաժամկետ կամ միջնաժամկետ (3-5 տարի) ժամանակահատվածում իրականացնելով պետք է նպաստեն ռազմավարական նպատակների կատարմանը: Անապատացման, հողերի դեգրադացիայի դեմ պայքարի և երաշտի հետևանքների մեղմանն ուղղված օպերատիվ նպատակները հետևյալն են.

ա. իրականացնել կրթական, տեղեկատվական և քարոզչական գործունեություն՝ միջազգային, ազգային և տեղական մակարդակներով.

բ. նպաստել որոշումներ կայացնելու գործընթացների արդյունավետությանը.

գ. օժանդակել գիտատեխնիկական գիտելիքների տարածմանը.

դ. բացահայտել կարիքները՝ ներուժի հզորացման համար.

ե. նպաստել ազգային, երկկողմ և բազմակողմ մակարդակներում ֆինանսական և տեխնոլոգիական ռեսուրսների մոբիլիզացմանը:

3) Յուրաքանչյուր օպերատիվ նպատակի իրականացման համար որոշված են ակնկալվող վերջնական արդյունքներ, որոնք արտացոլում են կարճաժամկետ և միջնաժամկետ ազդեցությունները: Ռազմավարությունում բերված են նաև գործունեության իրականացման շրջանակները, որոնք սահմանում են կոնվենցիայի տարբեր հաստատությունների, մարմինների, գործընկերների և շահագրգիռ կողմերի դերերն ու պարտականությունները: Ռազմավարական նպատակների կատարումն ապահովելու համար մշակվել է հաշվետվությունների և մոնիթորինգի համակարգ, որը ստեղծվել է ազդեցության և արդյունավետության ցուցանիշների օգտագործմամբ: Ընդ որում՝ ազդեցության ցուցանիշների կիրառմամբ հաշվետվությունները կոնվենցիային անդամակցած երկրները պետք է ներկայացնեն 4 տարին մեկ, իսկ արդյունավետության ցուցանիշների կիրառմամբ հաշվետվությունները, որոնք վերաբերում են օպերատիվ նպատակների կատարմանը, ներկայացվում են 2 տարին մեկ:

4. ՄԱԿ-ի <<Անապատացման դեմ պայքարի>> կոնվենցիայի կապը <<Կենսաբանական բազմազանության մասին>> և <<Կլիմայի փոփոխության մասին>> կոնվենցիաների հետ

1) Կենսաբազմազանության պահպանությունը, կլիմայի փոփոխությունը և հողերի դեգրադացիան/անապատացումը խիստ փոխկապակցված գործընթացներ են:

2) Երկրի մթնոլորտ արտանետվող ջերմոցային գազերի քանակի ավելացումն ու մարդու կողմից կանաչ զանգվածների կրճատումը նպաստում են գլոբալ տաքացման ակտիվացմանը, որի արդյունքում մեծանում է կլիմայական բաղադրիչի բացասական ազդեցությունը կենսաբազմազանության վրա: Այն արտահայտվում է պոպուլյացիաների և տեսակների թվաքանակի կրճատմամբ, տեսակների տարածման արեալների և կենսացիկլի տարածաժամանակային փոփոխությամբ, տեսակների դեմոգրաֆիկ ցուցանիշների փոփոխությամբ, վնասատուների թվաքանակի և հիվանդությունների զանգվածային բռնկումների ավելացմամբ, մրցակից տեսակների միջև հավասարակշռության խախտմամբ, ինվազիվ տեսակների տարածմամբ և այլն: Այսպիսի բազմաբնույթ փոփոխությունները խոր ազդեցություն են թողնում ինչպես բնական պաշարների վիճակի, այդպես էլ հասարակության առողջ ապրելակերպի վրա:

3) Բուսականությունը և դրա ֆիզիկական կառուցվածքի բազմազանությունը օժանդակում են հողերի պահպանությանը և կազմավորմանը, ինչպես նաև կարգավորում են ջրերի մակերևութային հոսքը, միկրոկլիման, տարբեր հողերում մթնոլորտային տեղումների ներծծումը՝ ապահովելով չորային և կիսաչորային տարածքներում էկոհամակարգային ծառայությունների պահպանությունը: Ընդ որում՝ էկոհամակարգային ծառայությունների փոխկապակցվածության խախտումը հանդիսանում է չորային և կիսաչորային տարածքների անապատացման առանցքային գործոններից մեկը, երբ բնական պաշարների էկոլոգիապես անթույլատրելի երկարատև տնտեսավարումը (օգտակար հանածոների արդյունահանում, գերարածեցում, ջրային և անտառային ռեսուրսների գերօգտագործում և այլն) չի համապատասխանում բնական լանդշաֆտների ու էկոհամակարգերի էկոլոգիական բարվոք վիճակն ապահովող պայմաններին: Տնտեսական օգտագործման ենթարկված տարածքներում անապատացման գործընթացների դրսևորման մակարդակը և արագությունը կախված են ոչ միայն հողօգտագործման սխալ եղանակներից և մեթոդներից, այլև հողերի օգտագործման և պահպանության հարաբերության միջև հավասարակշռության բացակայությունից: Յուրաքանչյուր կոնկրետ տարածաշրջանում անապատացման գործընթացների կանխումը/մեղմացումը հնարավոր է միայն տարածքի բնական պաշարների ներուժի <<օգտագործում-բարելավում-պահպանում>> հարաբերության գնահատման դեպքում, որը կապահովի բնական միջավայրի լանդշաֆտա-էկոլոգիական հավասարակշռության պահպանությունը: Վերջինս հանդիսանում Լանդշաֆտի Եվրոպական կոնվենցիայի կարևորագույն դրույթներից մեկը, որի կիրառումը կնպաստի դեգրադացված տարածքների վերականգնման և կառավարման գործընթացին:

II. ԱՆԱՊԱՏԱՑՄԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ

5. Անապատացման չափանիշները. Հայաստանի Հանրապետության տարածքում անապատացման չափանիշներն են՝

1) խոնավացման գործակցի նվազեցման միտումը.
2) օդի և հողի ջերմաստիճանային օրական տատանումների մեծացումը.
3) բացարձակ ջերմաստիճանների լայնույթը (ամպլիտուդան) և մեծացումը.
4) գոլորշիացման մեծացումը.
5) տեղումների քանակի նվազեցումը.
6) հողագոյացման պրոցեսի բնույթի փոփոխությունը.
7) կենսաբազմազանության նվազումը.
8) գետային հոսքի նվազեցումը.
9) հողերի վատթարացման (բեդլենդացման) պրոցեսի ակտիվացումը.

10) հողերի ֆիզիկական, քիմիական և կենսաբանական կազմի վատթարացումը.

11) սելավաբերության և էրոզիայի աճը.

12) ցանքատարածությունների արդյունավետության իջեցումը և հումուսի նվազեցումը.

13) մարդածին ներգործության ակտիվացումը.

14) հողերի չեզոք դեգրադացիան:

6. Անապատացման գործոնները. Հայաստանի Հանրապետության տարածքում անապատացման գործոնները բաժանվում են երկու խմբի՝ բնական և մարդածին:

1) Բնական գործոններն են՝

ա. երաշտները, որոնց հաճախականությամբ աչքի են ընկնում Արարատյան գոգավորության ցածրադիր և նախալեռնային գոտիները, Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի և Սյունիքի մարզերի առանձին շրջաններ.

բ. խորշակները, որոնք պայմանավորված են արևադարձային օդային զանգվածների ներխուժմամբ և ինտենսիվ դիտվում են Արարատյան դաշտում, Վայքում, Սյունիքում.

գ. խոնավության պակասորդը, որը պայմանավորված է տեղումների նվազմամբ և ջերմաստիճանի աճով.

դ. գեոմորֆոլոգիական առանձնահատկությունները (ռելիեֆի մասնատման խտությունը, խորությունը, լեռնալանջերի թեքությունը, լանջերի կողմնադրությունը).

ե. սողանքային երևույթները, որոնք ընդգրկում են շուրջ 1216 կմ^2 մակերես (հանրապետության տարածքի շուրջ 4.1 %).

զ. սելավները, որոնք ինտենսիվ արտահայտված են միջին բարձրության լեռնային գոտում, որը զբաղեցնում է հանրապետության տարածքի կեսից ավելին.

է. ջրածածկումներն ու ողողումները, որոնք լայն տարածում ունեն Արարատյան ու Շիրակի հարթավայրերում, Սևանա լճի շրջակա գոտու որոշ հատվածներում, ինչպես նաև ՀՀ Լոռու, Սյունիքի, Վայոց Ձորի մարզերի առանձին բնակավայրերում.

ը. բնական աղակալումը, որը տարածված է հարթավայրերի ցածրադիր տարածքներում, ուր ստորգետնյա ջրերի մակարդակը մոտ է երկրի մակերևույթին:

2) Հայաստանի Հանրապետության տարածքում հուլիս-սեպտեմբեր ամիսներին եղանակի ձևավորման գլխավոր գործոնը Արաբական թերակղզու շրջաններում ձևավորված արևադարձային Ջերմային ցիկլոնն է (Ջերմային դեպրեսիան): Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ էքստրեմալ բարձր ջերմաստիճանները, ուժեղ երաշտները և խորշակները պայմանավորված են այս բարիկական դաշտի հետ: Ջերմային դեպրեսիան Հայաստանի տարածք ներթափանցում է տարեկան միջինը 17 անգամ, առավելագույնը դիտվել է 2006 թ.՝ 51, նվազագույնը՝ 1967 թ.՝ 1 անգամ: Ըստ ամիսների այս պրոցեսի ամենամեծ կրկնելիությունը դիտվում է հուլիս-օգոստոս

ամիսներին՝ միջինը 7-8 օր: 1978-2008 թթ.-ին Ջերմային դեպրեսիայի ազդեցության դեպքերի թիվը, համեմատած 1948-1978 թթ.-ի հետ, աճել է 61 %-ով (նկար 1), ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ Հայաստանի տարածքում մեծացել է բարձր ջերմային ֆոնով և սակավ տեղումներով ամառների կրկնելիությունը: Ընդ որում՝ Հայաստանի տարածքի մոտ 12789.5 քառ.կմ (Սևանա լճի շրջակա տարածքը 860.6 քառ.կմ) կազմում են կիսաչոր և չոր կիսախոնավ շրջանները, կամ տարածքի 43 % (նկար 2):



Նկար 1. Ջերմային ցիկլոնի ազդեցությամբ օրերի թիվը 1948-2008 թթ.



Նկար 2. Երաշտային տարածքները ՀՀ-ում (մանուշակագույն)

3) Մարդածին գործոններն են՝

ա. քաղաքաշինական գործունեությունը, երբ շինարարության համար բարենպաստ հողատարածքների խիստ սակավության պատճառով յուրացվել են ինժեներաերկրաբանական բարդ պայմաններով տարածքներ, մասնավորապես՝ մեծ թեքությամբ լանջեր, կտրտված ռելիեֆով տեղամասեր, սելավավտանգ, ողողվող, ջրածածկման ենթակա և այլ տարածքներ, որտեղ զգալիորեն ակտիվացել են արտածին երկրաբանական պրոցեսները, հատկապես՝ սողանքները.

բ. գյուղատնտեսությունը, երբ խախտվում են վարի կանոնները, բացակայում կամ ճիշտ չի կիրառվում ցանքաշրջանառությունը, ոռոգման ջուրն արդյունավետ չի օգտագործվում, գերծանրաբեռնվում են արոտավայրերը.

գ. ոռոգման և դրենաժային ցանցերի խափանումները (այդ թվում՝ փոքր ՀԷԿ-երի կողմից ամռան ամիսներին իրականացվող ջրառը) և դրանց չվերականգնելը.

դ. ճանապարհային էրոզիան, երբ թեք լեռնալանջերում ավտոմեքենաների անիվների տեղում ջրաշիթերի միջոցով ձևավորվում են ձորակներ ու հանդակներ, էրոզիոն օջախներ.

ե. ապօրինի անտառահատումները.

զ. ընդերքօգտագործումը, հատկապես, երբ այն իրականացվում է բաց եղանակով.

է. արտեզյան ջրերի պաշարների չարաշահումը.

ը. հողերի աղտոտումը, որի աղբյուրն են՝ էներգետիկան, արդյունաբերությունը, շինանյութերի արտադրությունը, կոմունալ տնտեսությունը, աղբյուսները.

թ. կենսաբանական բազմազանության խախտումը:

4) 2009-2013 թթ. Հայաստանի Հանրապետության բնապահպանության, գյուղատնտեսության, տարածքային կառավարման, էներգետիկայի և բնական պաշարների, արտակարգ իրավիճակների նախարարությունների, մարզպետարանների, Գիտությունների ազգային ակադեմիայի և այլնի հաշվետվությունների, ամփոփ զեկույցների վերլուծությունը վկայում է, որ համեմատած նախորդ ժամանակահատվածի հետ, մարդածին ազդեցությամբ պայմանավորված, էկոհամակարգերին սպառնացող վտանգները հիմնականում փոփոխություններ չեն կրել: Հարկ է նշել, որ բնական պաշարների կորուստները և էկոհամակարգային ծառայությունների փոփոխությունները շատ դեպքերում միայն մեկ գործոնի արդյունք չեն, այլ համալիր ներգործությունների հետևանք են: Էկոհամակարգերի դեգրադացման տեմպերի աճը պայմանավորված է տնտեսական և հասարակական գործունեության որոշակի ակտիվացմամբ, որն արտահայտվում է կենսառեսուրսների գերօգտագործմամբ, հանքավայրերի շահագործմամբ, հողերի սեփականաշնորհմամբ, կառուցապատված տարածքների ընդլայնմամբ, գյուղատնտեսության աշխուժացմամբ, զբոսաշրջության զարգացմամբ:

7. Լանդշաֆտների անապատացման առանձնահատկությունները

1) Հայաստանի լեռնային ռելիեֆը նպաստել է 10 տարբեր տիպի լանդշաֆտային գոտիների ձևավորմանը (նկար 3): Գոյություն ունեն նաև մի շարք ինտրազոնալ լանդշաֆտներ (ջրաճահճային, ժայռային, փլվածքային, քարակուտակային), որոնք տարածված են գրեթե բոլոր բարձրունքային գոտիներում: Հետազոտությունները հաստատում են, որ երկրաբանական զարգացման ընթացքում ամբողջ Հայկական լեռնաշխարհում լանդշաֆտների էվոլյուցիան ունեցել է մեկ ընդհանուր միտում՝ թույլ արտահայտված խոնավ մերձարևադարձային տիպի լանդշաֆտների տրանսֆորմացիան փոփոխական խոնավ անտառային և բարեխառն խոնավ մարգագետնա-տափաստանային, ապա ճմատափաստանային և բուն տափաստանային

տիպի լանդշաֆտների: Դա նշանակում է, որ տիրապետել է արիդացման միտումը, որը շարունակվում է նաև ներկայումս:



Նկար 3. Հայաստանի Հանրապետության լանդշաֆտային գոտիները

2) Հայաստանի Հանրապետության լանդշաֆտների վերընթաց գոտիականության կառուցվածքի ուսումնասիրությունները վկայում են, որ հանրապետության հյուսիս-արևելյան, հարավ-արևելյան և ներքին շրջանների լանդշաֆտների սպեկտորները զգալիորեն տարբերվում են միմյանցից: Ջերմության և խոնավության հարաբերակցության տարբերությունների հիման վրա առանձնանում են վերընթաց գոտիականության երկու լանդշաֆտա-էկոլոգիական շարքեր: Հանրապետության հյուսիս-արևելքին և մասամբ հարավ-արևելքին բնորոշ են մեզոֆիտ, իսկ ներքին շրջաններին՝ քսերոֆիտ լանդշաֆտային էկոլոգիական շարքերը: Բարձրադիր գոտիականության կառուցվածքի նման առանձնահատկությունը հանդիսանում է լանդշաֆտների արիդայնությունը բնութագրող կարևոր լանդշաֆտա-երկրաֆիզիկական երևույթ (նկար 4):



Նկար 4. Արիդայնության գործակցի փոփոխությունը ըստ տեղանքի բարձրության (Н,մ)

3) Հանրապետության հյուսիսում, հյուսիս-արևելքում և, մասամբ, հարավ-արևելքում ձևավորված մեզոֆիտ շարքը ներառում է ցածր լեռնային հետանտառային, չոր տափաստանային, չորային նոսր անտառային և անտառային, միջին լեռնային, անտառային խոնավ տափաստանային և տափաստանացված մարգագետնային, բարձր լեռնային մերձալպյան և ալպյան մարգագետնային լանդշաֆտները: Քսերոֆիտ շարքը բնորոշ է Հայաստանի մնացած ներքին շրջաններին և ներառում է ցածր լեռնային կիսաանապատային և չոր տափաստանային, միջին լեռնային բարեխառն-չորային, բարեխառն-խոնավ և խոնավ տափաստանային, նոսրանտառային, մարգագետնատափաստանային, բարձր լեռնային մերձալպյան և ալպյան մարգագետնային, ինչպես նաև մերձննային լանդշաֆտները: Վերլուծությունը ցույց է տալիս նաև, որ ըստ արիդայնության աստիճանի առանձնացվում են լանդշաֆտների հինգ խմբեր՝ չոր, կիսաչոր, չափավոր չոր, կիսախոնավ և խոնավ: Դրանք տեղաբաշխված են տարբեր հիդրոթերմիկ արեալներում՝ իրենց բնորոշ չորայնության գործակցի և խոնավության պայմանների տարբեր ցուցանիշներով (նկար 5): Առավել հարմար չափանիշ է համարվում ըստ տեղադիրքի արիդայնության գործակցի բանաձևը՝ $K = \frac{r}{5.12 \sum_{x}^{IV} t^\circ + 306}$, որտեղ K – արիդայնության գործակիցն է, r – միջին տարեկան տեղումներն են (մմ), t – միջին ամսական ջերմաստիճանը վեգետացիայի ընթացքում (ապրիլից մինչև հոկտեմբեր C^0): Այս բանաձևի առավելությունը կայանում է

նրանում, որ կարող են օգտագործվել բոլոր օդերևութաբանական կայանների տվյալները՝ առանց հաշվի առնելու տեղումների և ջերմաստիճանների ներտարեկան բաշխվածությունը:

4) Հայաստանի տարածքի բարձրադիր գոտիականության լանդշաֆտա-էկոլոգիական շարքերի կլիմայական արեալների վերլուծությունը ցույց է տալիս, որ մեզոֆիտ շարքը աստիճանաբար վերածվում է քսերոֆիտ շարքի, որը բնութագրվում է հետևյալ առանձնահատկություններով.

ա. ցածր լեռնային չոր տափաստանները զգալիորեն տեղաշարժվում են վեր իրենց տակ առնելով միջին լեռնային չոր տափաստանները: Ավելի քիչ միախառնվում են չոր տափաստանային և կիսաանապատային լանդշաֆտների արեալները: Նման պատկերը ըստ երևույթին ձևավորվել է ոչ վաղուց և վկայում է, որ առավել չորային լանդշաֆտներն ընդարձակում են իրենց տարածքները.

բ. բարեխառն չոր և բարեխառն խոնավ տափաստանային լանդշաֆտները տեղաշարժվում են վեր՝ զբաղեցնելով տափաստանացված մարգագետինների արեալները.

գ. տափաստանացված մարգագետինների և նոսր անտառային լանդշաֆտների արեալները գրեթե ամբողջությամբ ծածկում են իրար, ինչն ակնհայտորեն ապացուցում է արիդացման միտումը՝ անտառները վերափոխվում են նոսր անտառների և ապա մարգագետնատափաստանների.

դ. մերձձնային լանդշաֆտները փոխարինվում են ալպյան մարգագետնային լանդշաֆտներով (օրինակ՝ Արագածի մերձգագաթային հատվածում արդեն դիտվում է առաջնային հողառաջացման գործընթաց և սկսել են ձևավորվել մաքուր մարգագետնային բուսական համակեցությունների էլեմենտներ):



I Արիդ (K<1.0) ոչ բավարար խոնավությամբ(i>3.3) (ցածր լեռնային կիսանապատային).
II Սեմիարիդ (K<1.1-1.7).
Ա- անբավարար խոնավության (i=2.6-3.2) (2-ցածր լեռնային չոր տափաստանային).
Բ- չափավոր անբավարար խոնավությամբ (i=1.6-2.5) (3-ցածր լեռնային հետանտառային չոր տափաստանային և չորային նոսրանտառային. 5ա-միջին լեռնային չափավոր չորային տափաստանային).
III Թույլ արիդ (K<1.8-2.5).
Ա- չափավոր անբավարար խոնավությամբ (4-ցածր լեռնային անտառային, 5բ-միջին լեռնային չափավոր խոնավ տափաստանային).
Բ- օպտիմալ խոնավությամբ (6-միջին լեռնային անտառային).
IV Սեմիհումիդ (K<2.6-3.0) օպտիմալ խոնավությամբ (5գ- միջին լեռնային խոնավ տափաստանային. 7-միջին լեռնային նոսրանտառային. 8- միջին լեռնային տափաստանացված մարգագետնային)
V Հումիդ (K<3.1) ավելցուկային խոնավությամբ (9-բարձր լեռնային մերձալպյան մարգագետնային. 10-բարձր լեռնային ալպյան մարգագետնային. 11--բարձր լեռնային մերձձնային):

Նկար 5. ՀՀ լանդշաֆտների գնահատականը ըստ արիդայնության աստիճանի

5) Բարձրադիր գոտիականության վերը նշված առանձնահատկությունները հանդիսանում են արիդայնության արտահայտվածություն, որը ոչ միայն տվյալ վայրի համար նոր կլիմայական, այլև լանդշաֆտա-երկրաֆիզիկական դրսևորում է:

6) Համեմատելով լանդշաֆտների արեալները չորրորդական և ավելի ուշ դարաշրջանների հետ (մ.թ.ա. III-I հազ.-ում և ժամանակակից)՝ պարզվում է, որ մ.թ.ա. III մինչև I հազարամյակը Հայաստանի ներկա տարածքի 37-38 %-ը զբաղեցված է եղել անտառներով, իսկ ներկայումս՝ հանրապետության ընդամենը 11.17 %-ը: Դա խոսում է այն մասին, որ կլիմայի արիդացմանը զուգընթաց ակտիվացել է նաև մարդածին գործոնը (հրդեհներ, անտառահատումներ և այլն), որի ազդեցությամբ կտրուկ ընդարձակվել են տափաստանների, չոր տափաստանների և կիսաանապատների տարածքները՝ համապատասխանաբար 16 %-36 % և 6 %-13 %: Ներկայումս Արարատյան դաշտի, Արարատի և Արմավիրի մարզերի որոշ համայնքների աղակալված, ինչպես նաև աղակալման ենթակա հողերում ձևավորվել է նաև անապատային լանդշաֆտ (մոտ 3 %): Այս ֆոնի վրա մերձալպյան լանդշաֆտների տարածքը մեծացել է 12 %-ից 26 %՝ ի հաշիվ ավելի չոր մարգագետնատափաստանային լանդշաֆտների ընդարձակման և ալպյան լանդշաֆտային գոտու կրճատման (նկար 6):



Նկար 6. ՀՀ լանդշաֆտների տրանսֆորմացիան և արիդացման միտումները (հետչորրորդական ժամանակաշրջանում)

7) Վերլուծելով կլիմայի գլոբալ փոփոխության հետևանքով բուսածածկի, հողածածկի, կլիմայական պայմանների կանխատեսվող փոփոխությունները՝ պարզվել է, որ Հայաստանի այժմյան լանդշաֆտների զբաղեցրած տարածքներն առաջիկա տասնամյակներում ունեն արիդացման միտում, որի հետևանքով անապատային լանդշաֆտը կզբաղեցնի տարածքի 7 %-ը, կիսաանապատայինը 20-21 %, տափաստանները և չոր տափաստանները 30-31 %, անտառները 7-8 %, մերձալպյան գոտին մինչև 17 %, իսկ ալպյանը 5 %: Այսպիսով՝ մ.թ.ա. III-I հազարամյակներից սկսված արիդացումը առաջիկա տասնամյակներում շարունակվելու է՝ նպաստելով անապատացման ընթացքին: Ընդ որում՝ արիդ լանդշաֆտների ընդարձակումը պայմանավորված է ոչ միայն կլիմայի փոփոխությամբ, այլև բնական միջավայրի վրա մարդածին գործոնի ահագնացող ճնշմամբ:

8. Անապատացման և բնօգտագործման փոխկապակցվածությունը

1) Անապատացումը և այն պայմանավորող երևույթները ոչ միայն նպաստում են տնտեսության զարգացման խոչընդոտմանն ու անկմանը, այլև բացասական ազդեցություն ունեն սոցիալական, մշակութային և բնապահպանական ոլորտների վրա՝ արագացնելով առանձին բացասական գործոնների ազդեցությունը և սրելով առկա սոցիալական, քաղաքական, տնտեսական ու բնապահպանական հիմնախնդիրները:

2) Բնապահպանության տեսանկյունից, տնտեսության ոչ հավասարակշռված զարգացումը բացասական ազդեցություն է թողնում շրջակա միջավայրի վրա, վատթարացնում տիրող էկոլոգիական իրավիճակը և վերջնական արդյունքում արագացնում անապատացման ընթացքը: Հետևաբար, անապատացման գործընթացների և տնտեսության վիճակի փոխհարաբերությունները երկկողմանի են, փոխշաղկապված և շատ հաճախ վերջինիս ազդեցությունն է ավելի գերակշռող: Տնտեսության վրա անապատացման ազդեցությունը գնահատելու համար նախ անհրաժեշտ է տարանջատել այն ծախսերը, որոնք պետությունը իրականացնում է՝

ա. անապատացման գործոնների ուսումնասիրման վրա.

բ. անապատացման ազդեցությունը կանխարգելելու վրա.

գ. անապատացման ազդեցությունը մեղմացնող միջոցառումների վրա.

դ. անապատացման ազդեցության հետևանքների վերացմանը նպատակաուղղված միջոցառումների իրականացման վրա:

3) Նշված ծախսերի հանրագումարը կարելի է ընդունել որպես տնտեսության վրա անապատացման ազդեցության անմիջական արժեքային գնահատական, որոնք պետությունն իրականացնում է անապատացման ազդեցությունը կանխարգելելու, նվազեցնելու/մեղմելու և դրանց հետևանքները վերացնելու նպատակով: Գործնականում

անհնար է ծախսերը կամ միջոցառումները հստակ բաժանել վերը նշված չափանիշներով, քանի որ դրանք շատ հաճախ զուգորդվում են:

4) Հայաստանում անապատացման հետ առավել սերտ առնչվող տնտեսության ճյուղերն են՝

ա. Գյուղատնտեսությունը, որի դեպքում շրջակա միջավայրին առնչվող խնդիրներն են՝ ոռոգման անարդյունավետության հետևանքով առաջացող ջրի կորուստները, հողի աղակալումը, էրոզիան, գյուղատնտեսական թափոններով աղտոտումը: Վերջիններս հանգեցնում են՝ էկոհամակարգերի դեգրադացիայի, կենսաբազմազանության փոփոխության և կորուստի, ինչն ի վերջո արտահայտվում է էկոհամակարգային ծառայությունների քանակական և որակական խորը փոփոխություններով:

բ. Անտառտնտեսության բնագավառը, որի դեպքում սոցիալ-տնտեսական տարբեր խնդիրների և փայտանյութի բարձր պահանջարկի հետևանքով անտառհատումները դեռևս գերազանցում են անտառի բնական վերականգնման ծավալները: Դրան նպաստում են փայտանյութի համեմատաբար մատչելիությունը, էներգակիրների գների բարձրացումը, բնակչության սոցիալապես անապահով խավերի ցածր վճարունակությունը: Փայտանյութը շարունակում է մնալ անտառամերձ տարածքների բնակչության վառելիքի հիմնական աղբյուրը:

գ. Ընդերքից օգտակար հանածոների արդյունահանումը, որի դեպքում հանրապետության տարածքի հազարավոր հեկտարներ ծածկված են բաց հանքերով և թափոնների պոչամբարներով: Ըստ Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշռի՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերը 2009 թ. կազմել են 29.36 հազ.հա, 2011 թ.-ին՝ 33.0 հազ.հա, 2012 թ.-ին՝ 33.6 հազ.հա, 2013 թ.-ին՝ 34.9 հազ.հա, 2014 թ.-ին՝ 36.4 հազ.հա, այսինքն՝ օգտագործվող հողատարածքների մակերեսն աստիճանաբար մեծանում է, հատկապես՝ ընդերքօգտագործման հողերի հաշվին: Առավել մտահոգիչ է բաց եղանակով հանքերի շահագործումը, որի արդյունքում շրջանառությունից հանվել է ավելի քան 7 հազ. հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

դ. Հիդրոէներգետիկան, որի դեպքում փոքր հիդրոէլեկտրակայանների (այսուհետ՝ ՓՀԷԿ) նախագծման և շահագործման ընթացքում հիմնականում հաշվի չեն առնվում ջրային ֆաունայի կարիքները, իսկ լեռնային գետերի ջրային ռեժիմի փոփոխության ազդեցությունը ափամերձ և ջրային էկոհամակարգերի ու կենսաբազմազանության վրա ոչ միայն չի գնահատվել, այլև չի ուսումնասիրվել: 2014 թ. Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի շրջանակներում ստեղծված աշխատանքային խմբի կողմից իրականացված մոնիթորինգը բացահայտել է, որ ծվադրավայր հանդիսացող գետերի վրա կառուցված ՓՀԷԿ-երը, որոնք

հիմնականում չունեն նորմերին համապատասխանող ձկնանցարաններ և ձկնապաշտպան կառույցներ, ուղղակիորեն վտանգում են ձկնատեսակների սեռահասուն առանձնյակների գոյությունը, որոնք ձվադրավայրեր հասնելու համար գետերով բարձրանում են դեպի վեր: Բացի այդ, որոշ ՓՀԷԿ–եր չեն պահպանում ջրի թույլատրելի էկոլոգիական թողքերի սահմանված չափաքանակները, ինչը նույնպես բերում է գետերի էկոհամակարգերի դեգրադացման:

5) Հայաստանում անապատացման և տնտեսության փոխկապակցվածության խորացող գործընթացները բացասական են ներգործում բնակչության սոցիալական վիճակի վրա, որն արտահայտվում է ուղղակի և անուղղակի ազդեցությամբ:

6) **Ուղղակի ազդեցության** շարքին են դասվում անապատացման գործընթացների հետևանքով բնակչությանը պատճառված նյութական վնասները, որոնք առաջացնում են լրացուցիչ ծախսեր կատարելու անհրաժեշտություն՝ ուղղված դրանց հետևանքների վերացմանը: Բնակչության սոցիալական վիճակի վրա անապատացման բացասական ազդեցությունները դրսևորվում են հետևյալ ձևերով.

ա. դրամական եկամուտների նվազմամբ, որը պայմանավորված է՝ հողի բերրիության նվազմամբ, հողամասերի կտրտվածությամբ, օգտագործվող հողատեսքերի մակերեսների կրճատմամբ, բնակչության կողմից օգտագործվող կենսապաշարների ծավալների նվազմամբ, անապատացման գործընթացների բացասական ազդեցությունը վերացնելու կամ մեղմացնելու համար կատարվող լրացուցիչ ծախսերով.

բ. բնակկենցաղային պայմանների վատթարացմամբ, որի արդյունքում ներկայումս շատ բնակավայրեր լքվում են: Ընդ որում՝ միգրացիոն գործընթացները կրում են երկու ուղղվածություն՝ արտագաղթ և ներհանրապետական: Ներհանրապետական միգրացիան բնորոշվում է գյուղական բնակչության տեղաշարժով դեպի քաղաքներ և ցածրադիր վայրեր, հատկապես Արարատյան հարթավայր: Այդ տեսակետից վիճակը տագնապալի է սահմանամերձ և լեռնային բնակավայրերում, որտեղ արձանագրվել է տնտեսական ներուժի զգալի անկում:

7) **Անուղղակի ազդեցությունը** պայմանավորված է երկրի տնտեսական հենքով, որը կանխորոշում է բնակչության սոցիալական փաստացի վիճակը:

9. Անապատացման ռիսկի գնահատման քարտեզը՝ ըստ կոնվենցիայի առաջարկած անապատացման ռիսկի գործակցի՝ $\frac{P}{E_0} \leq 0.65$

1) Անապատացման ռիսկի հավանականության որոշումը բարդ խնդիր է: Այդ նպատակով մշակվել է անապատացման ռիսկի գործակից՝ $\frac{P}{E_0} \leq 0.65$ (P - տեղումների ամենամյա միջին մակարդակ, E_0-պոտենցիալ գոլոշիացում), որի օգտագործմամբ

ստացված տվյալների հիման վրա առանձնացվել ու քարտեզագրվել են Հայաստանի Հանրապետության խոցելի տարածքների սահմանները (նկար 7): Այս բանաձևով մշակված քարտեզի առավելությունը կայանում է նրանում, որ հնարավորություն է ստեղծվում մեր տարածքի պատկերը համեմատել աշխարհի այլ ռեգիոնների նույն մեթոդով կազմած քարտեզների հետ: Մոտավոր հաշվարկները ցույց են տալիս, որ Հայաստանի տարածքի 7233 կմ^2 (24.3 %) գտնվում է անապատացման ռիսկի գոտում, 14519 կմ^2 (48.8 %) տարածքի վրա (Լոռու և Տավուշի մարզերում 900-1000-ից մինչև 2000-2200 մ, իսկ ներքին շրջաններում 1500-1600-ից մինչև 2800-3000 մ բարձրությունները) անապատացվում են, որն ավելի արագանալու է կլիմայի գլոբալ փոփոխության հետևանքով: Միայն տարածքի 6742 կմ^2 (22.6 %)-ի վրա առայժմ անապատացման պրոցեսներն արտահայտված չեն:



Նկար 7 Անապատացման ռիսկի գոտին Հայաստանում

III. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԸ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

10. Բնական պաշարները

1) Հողերը. Հայաստանի Հանրապետությունը սակավահող երկիր է, սակայն աչքի է ընկնում իր խայտաբղետ հողային ծածկույթով, որում ընդգրկված են հետևյալ հողային գոտիները (աղյուսակ 1).

Աղյուսակ 1

Բնահողային գոտիները և հողատիպերը*

Գոտիները	Մարզերը	Հողերի տիպերը	Տարածքը		Բարձրությունը ծ.մ. (մ)
			Հազ.հա	%	
Կիսաանապատային	Արագածոտն, Արարատ, Արմավիր, Կոտայք, Երևան	**1.Կիսաանապատային գորշ.**	152	5.8	850-1250
		2.Ոռոգելի մարգագետնային գորշ.	53	2.0	
		3.Պալեոհիդրոմորֆ, կապակցված ալկալիացած.	2	0.1	
		4.Աղուտ-ալկալի.	29	1.1	
		Ընդամենը	**236**	**9.0**	
Չոր տափաստանային	Արագածոտն, Արարատ, Կոտայք, Սյունիք, Վայոց Ձոր	**Շագանակագույն**	242	9.2	1250-1900
Տափաստանային	Արագածոտն, Արարատ, Գեղարքունիք, Լոռի, Կոտայք, Սյունիք, Վայոց Ձոր, Շիրակ	**1.Սևահող.**	718	27.4	1300-2450
		2.Մարգագետնա-սևահողային.	13	0.5	
		3.Գետահովտա-դարավանդային.	48	1.8	
		4.Հողագրունտներ.	18	0.7	
		Ընդամենը	**797**	**30.4**	
Անտառային	Արագածոտն, Արարատ, Գեղարքունիք, Լոռի, Կոտայք, Սյունիք, Վայոց Ձոր, Տավուշ	**Անտառային գորշ.**	133	5.2	500-2400
		Ճմակարբոնատային.	15	0.6	
		Դարչնագույն.	564	21.6	
		Ընդամենը	**712**	**27.4**	
Լեռնա-մարգագետնային	Արագածոտն, Արարատ, Գեղարքունիք, Լոռի, Կոտայք, Սյունիք, Վայոց Ձոր, Տավուշ	**Լեռնամարգագետնային.**	346	13.2	2200-4000
		Մարգագետնա-տափաստանային.	283	10.8	
		Ընդամենը	**629**	**24.0**	
Ընդամենը			**2616**	**100**	

*** 358.3 հազար հա՝ արմատական ապարների ելքեր են, ավազներ, ջրեր, ճանապարհներ և շինություններ:**

2) **Ջրային պաշարներ.** Հայաստանում անապատացման դեմ պայքարի առաջնահերթ խնդիրներից են ջրային ռեսուրսների ճիշտ հաշվառումը, բաշխումը և աղտոտումից պահպանումը: Հանրապետության մակերևույթային ջրային պաշարները տարեկան կազմում են 6250 մլն.մ^3, իսկ հաստատված շահագործական ստորերկրյա ջրային պաշարները՝ 1200 մլն.մ^3: Հայաստանի Հանրապետության գետային ցանցի խտության գործակիցը 0.8 կմ/կմ^2 է, որը պատկանում է Կասպից ծովի ավազանին: Գետերն ունեն խառը սնուցում՝ հալոցքային, ստորերկրյա, անձրևային, որոնց հոսքը տարվա ընթացքում մեծ փոփոխություններ է կրում: Միջին տարեկան հոսքը կազմում է մոտ 7.187 մլրդ.մ^3, սակավաջուր տարիներին այն հասնում է 5.2 մլրդ.մ^3-ի: Հանրապետության աշխարհագրական դիրքն այնպիսին է, որ գրեթե բոլոր գետերը արտահոսում են նրա սահմաններից դուրս: Ամռանը և աշնանը, երբ ջրի պահանջը հասնում է իր առավելագույնին, տարեկան ջրերի հոսքի մասնաբաժինը կազմում է 20-25 %, ձմռանը՝ ընդհանուր հոսքի 10-12 %-ը, այն դեպքում, երբ գարնանը՝ շուրջ 55-70 % է: Հայաստանի Հանրապետությունը լճերով հարուստ չէ: Հանրապետության և Կովկասի ամենամեծ լիճը Սևանն է, որի հայելու մակերեսը 2013 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 1275.28 կմ^2 , իսկ մակարդակի նիշը՝ 1900.16 մ: Հանրապետության մնացած լճերը (Քարի, Ակնա, Սև և այլն) փոքր են և հիմնականում գտնվում են բարձր լեռնային գոտիներում: Միջին բարձրության լեռնային գոտում են գտնվում Արփի և Պարզ լճերը: Ցածրադիր լճերից է Այղր լիճը, որը սնվում է ստորերկրյա ջրերով: Ստորերկրյա ջրերը, որոնց պաշարները գնահատվում են 4.017 մլրդ. մ^3, հանրապետությունում բաշխված են շատ անհավասարաչափ: Դրանք հանդես են գալիս աղբյուրների, ճահճուտների, ստորերկրյա հոսքերի ձևով (արտեզյան և գրունտային): Ջրային ռեսուրսների շուրջ 70 %-ը հոսում է դեպի Արարատյան դաշտ, որի ջրային պաշարները գտնվում են 40-ից մինչև 300 մ խորություններում: Խորը գտնվող ջրային պաշարները հիմնականում օգտագործվում են խմելու և տնտեսական նպատակներով: Վերին ջրային շերտը (մինչև 40 մ խորությամբ) օգտագործվում է միայն գյուղատնտեսական և արդյունաբերական նպատակներով: Տարվա ընթացքում ստորերկրյա ջրերի մակարդակը տատանվում է շուրջ 1 մետրով: Հայաստանում, ոռոգման ջրի կարիքների բավարարման նպատակով, կառուցվել են 75 ջրամբարներ՝ 986.0 մլն.մ^3 ընդհանուր տարողությամբ: Միայն Մանթաշի ջրամբարն է, որ կառուցվել է համալիր՝ նաև խմելու և տնտեսական ջրամատակարարման նպատակով: Նախատեսված է կառուցել ևս տաս ջրամբար՝ 396 մլն.խոր.մ ընդհանուր տարողությամբ:

3) Կենսաբազմազանությունը. Հայաստանի աշխարհագրական դիրքը, միգրացվող կենդանիների և չվող թռչունների տարանցիկ ճանապարհների խաչմերուկում գտնվելը, լանդշաֆտային ու բարձունքային գոտիների բազմազանությունը և տեսակառաջացման ակտիվ գործընթացները ստեղծել են

նպաստավոր պայմաններ հարուստ և ինքնատիպ կենսաբազմազանության ձևավորման համար: Հանրապետության տարածքում գրանցված են ավելի քան 4500 տեսակի սնկեր, մոտ 9000 տեսակի ստորակարգ և բարձրակարգ բույսեր, որոնց խտությամբ Հայաստանն աշխարհում գրավում է առաջնակարգ տեղերից մեկը՝ յուրաքանչյուր 1 կմ^2-ու վրա հաշվարկվում է մոտ 107 տեսակ: Կենդանական աշխարհն ընդգրկում է շուրջ 17 500 տեսակի անողնաշար և ողնաշարավոր կենդանիներ: Գենոֆոնդում առկա են ոչ միայն բազմաթիվ էնդեմիկ տեսակներ, մշակովի և ընտելացված տեսակների վայրի ցեղակիցներ, այլև արժեքավոր օգտակար տեսակներ: Կենսաբազմազանությունը Հայաստանում ունի բնապահպանական և սոցիալ-տնտեսական կարևոր նշանակություն, որի բաղադրիչները դարերով օգտագործվել են հասարակական կյանքի տարբեր ոլորտներում՝ գյուղատնտեսությունում, սննդարդյունաբերությունում, շինարարությունում, դեղագործությունում և այլն:

4) **Օգտակար հանածոներ.** Հայաստանի Հանրապետության տարածքը հարուստ է օգտակար հանածոներով: Համաձայն հնագիտական տվյալների՝ Հայաստանում պղնձի, ոսկու, երկաթի և մի շարք այլ օգտակար հանածոների հանքավայրեր հայտնի են եղել դեռևս հնագույն ժամանակներում, իսկ դրանցից մի քանիսը նույնիսկ մասամբ շահագործվել են: Հայաստանում հայտնի օգտակար հանածոները բաժանվում են հետևյալ խմբերի.

ա. մետաղային օգտակար հանածոներ - պղնձամոլիբդենային հանքավայրեր (ՀՀ Սյունիքի և Լոռու մարզեր), հրաքարային (կոլչեդանային) հանքավայրեր (ՀՀ Սյունիքի և Լոռու մարզեր), ոսկու հանքավայրեր (ՀՀ Գեղարքունիքի և Կոտայքի մարզեր), երկաթի հանքավայրեր (ՀՀ Կոտայքի մարզ).

բ. ոչ մետաղային օգտակար հանածոներ – Արթիկ տուֆի, Անիպեմզայի պեմզայի և տուֆի, Արագածի պեռլիտի, Սարիգյուղի բենտոնիտային կավերի, Թումանյանի հրակայուն կավերի, Ավանի աղի, Ջրվեժի գիպսաբեր կավերի հանքավայրեր.

գ. հանքային ջրեր - Ջերմուկի տաք (Կառլսբադի նմանակ), Հանքավանի և Լիճքի (Եսենտուկի նմանակ), Արզաքանի և Բջնիի գոլ (Վիշիի նմանակներ), Դիլիջանի սառը (Բորժոմի նմանակ), Արարատի և Տաթևի (Նարզանի տիպի) գոլ ջրերի հանքավայրեր, Իջևանի շրջանում հայտնի են սուլֆատային Նարզանի տիպի հանքային ջրեր, մերձերևանյան շրջանում լայն տարածում ունեն տարբեր չափերով հանքայնացված աղաալկալային ջրեր՝ Արզնի, Գետամեջ, Ավազան:

5) **Վառելիքա-էներգետիկ հումքի** պաշարներից Հայաստանում հայտնի են ածխի, այրվող թերթաքարերի, տորֆի, բիտումի, բիտումածին ավազների հանքավայրեր, ինչպես նաև գազի հետքեր: Ըստ առանձին փորձագետների և հետազոտողների տվյալների՝ Հայաստանի ընդերքի վառելիքա-էներգետիկ հումքի չհաստատված պաշարները հետևյալն են՝

ա. քարածխի և այրվող թերթաքարերի հետախուզված պաշարները, որոնք կազմում են շուրջ 400 մլն. տ.

բ. այրվող թերթաքարերի հետախուզված հեռանկարային պաշարները Դիլիջանի հանքավայրում կազմում են շուրջ 30 մլն. Տ.

գ. քարածխի պաշարները Իջևանի հանքավայրում մոտ 100 մլն. տ.

դ. հանրապետության Արմավիրի, Արարատի, Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի տարածքում առկա են նավթագազային շերտերի հեռանկարային պաշարներ:

6) **Նոր և վերականգնվող էներգապաշարները.** Հայաստանի տարածքը օժտված է արևային էներգիայի զգալի պոտենցիալով: 1մ^2 հորիզոնական մակերևույթի վրա արևային էներգիայի հոսքի միջին տարեկան արժեքը կազմում է 1720 կՎտժ/մ^2 (միջին եվրոպականը 1000 կՎտժ/մ^2): Սևանի ավազանի արևափայլը կարող է համարվել ռեկորդային՝ 2800 ժամ: Տարեկան կտրվածքով ուղիղ ճառագայթման մասնաբաժինը ամբողջ տարածքում ևս զգալի է՝ մոտ 65-70 %, որը համակենտրոնացնող կոլեկտորների կիրառման տեսանկյունից բավականին հատկանշական է: Հայաստանի օդերևութաբանական տեղեկատվական հենքի մշակումը թույլ է տալիս հողմաէներգիայի պաշարների մասին տալ մոտավոր գնահատական: Տեսական պոտենցիալը գնահատվում է 10.7 ՏՎտժ, տեխնիկապես մատչելին, 15 % հզորության օգտագործման գործակցի դեպքում, մոտ 1.6 ՏՎտժ: Ցանցային հողմաէներգետիկ սարքավորումների համար առանձնացվում են Պուշկինի և Սիսիանի լեռնանցքները և Արագած լեռը: Այս շրջաններում քամու հոսքի տևողությունը տարեկան կտրվածքով հասնում է մինչև 5200 ժամ/տարի, երբ քամու նվազագույն արագությունը 5-6 մ/վ է: Ցանցային տեղակայանքների տնտեսապես նպատակահարմար պոտենցիալը բնութագրվում է 15-20 Մվտ և 40-50 ԳՎտժ/տարի: Հայաստանն ունի երկրաջերմային էներգիայի զգալի պաշարներ և հնարավորություններ՝ էլեկտրաէներգիայի և ջերմության արտադրության համար: Տարբեր մասնագետների կարծիքով լրիվ իրատեսական է համարվում 150-200 ՄՎտ հզորությամբ էլեկտրաէներգիայի արտադրությունը՝ 5 ցենտ ԱՄՆ/կՎտժ-ից ցածր ինքնարժեքի պայմաններում (ներկայումս ՀՀ-ում 10.6 ցենտ): Առավել հեռանկարային է համարվում երկրաէներգետիկ պաշարների օգտագործումը ջերմամատակարարման բնագավառում, հատկապես՝ կենտրոնական հրաբխային գոտում: Երկրաբանական աշխատանքները այդտեղ թույլ տվեցին հայտնաբերել հեռանկարային երկրաջերմային և ապարա-ջերմային հանքավայրեր (Ջերմաղբյուր, Սիսիան և այլն):

7) **Ռեկրեացիոն ռեսուրսներ.** Ռեկրեացիոն ռեսուրսների տեսանկյունից Հայաստանի Հանրապետությունը բավականաչափ հարուստ երկիր է, որը պայմանավորված է երկրաաշխարհագրական դիրքով և լանդշաֆտային բազմազանությամբ, կլիմայա-բուժական բարենպաստ պայմաններով, հանքային ջրերի առկայությամբ, անտառներով, բնության և պատմամշակութային անկրկնելի

հուշարձաններով: Այդ ռեսուրսները կարևոր դեր ունեն երկրի սոցիալ-տնտեսական զարգացման համար: Հայաստանի ռեկրեացիոն ռեսուրսները բնական պաշարների ինքնատիպ, առողջարարական հարուստ բազմազանությունն է, որն աչքի է ընկնում տարածքային բաշխվածության մեծ խտությամբ և պատմամշակութային արժեքների տարածքային ներդաշնակ զուգորդմամբ: Ռեկրեացիայի զարգացման համար իրենց բարենպաստությամբ մեծ դեր են խաղում՝

ա. լանդշաֆտների բարձրադիր գոտիական բազմազանությունը.

բ. կլիմայական ռեսուրսները.

գ. ջրային ռեսուրսները, այդ թվում՝ հարուստ հանքային ռեսուրսները.

դ. ռելիեֆի երկրաբանական ու երկրաձևաչափական բարենպաստ պայմանները.

ե. բուսակենդանական ռեսուրսները.

զ. բնության հազվագյուտ օբյեկտները (բնության հուշարձանները):

11. Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքները

1) Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում գործում են հետևյալ բնության հատուկ պահպանվող տարածքները (այսուհետ՝ ԲՀՊՏ).

ա. 3 պետական արգելոցներ (<<Խոսրովի անտառ>>, <<Շիկահող>> և <<Էրեբունի>>)՝ զբաղեցնելով 35 439.6 հա տարածք՝ Հայաստանի ընդհանուր տարածքի 1.19 %-ը.

բ. 4 ազգային պարկեր (<<Սևան>>, <<Դիլիջան>>, <<Արփի լիճ>> և <<Արևիկ>>)՝ զբաղեցնելով 236 802.1 հա տարածք՝ Հայաստանի ընդհանուր տարածքի 7.96 %-ը.

գ. 232 բնության հուշարձաններ.

դ. 27 պետական արգելավայրեր՝ զբաղեցնելով 117 565.74 հա տարածք՝ Հայաստանի ընդհանուր տարածքի 3.95 %-ը:

2) Հայաստանի ԲՀՊՏ-ներում դեռևս անբավարար են ներկայացված կիսաանապատային և տափաստանային լանդշաֆտները: Ինչ վերաբերում է ջրային լանդշաֆտներին, ապա, առանց Սևանա լճի հայելու, դրանց մակերեսը կազմում է 2 495.08 հեկտար կամ Հայաստանի ընդհանուր տարածքի 0.08 %-ը: Հետևաբար՝ նոր ԲՀՊՏ-ների ստեղծման գործընթացում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև ջրային կամ խոնավ տարածքներին, որոնք հարուստ են հազվագյուտ կենսաբազմազանությամբ և ինքնատիպ համակեցություններով:

12. Բնօգտագործման տնտեսական մեխանիզմները

1) Բնօգտագործման և բնապահպանության ոլորտի կարգավորման գործում զգալի դեր են խաղում բնօգտագործման տնտեսական մեխանիզմները, որոնք,

համակցվելով սահմանափակման և վերահսկողական իրավասությունների հետ, ամբողջացնում են շրջակա միջավայրի կառավարման գործառույթները:

2) Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական և բնօգտագործման տնտեսական մեխանիզմների հիմքը դրվել է դեռևս 1990-ական թվականների սկզբից, սակայն օրենքի ուժ են ստացել 1998 թվականին ընդունված <<Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով, որով սահմանվել են բնապահպանական և բնօգտագործման վճարների հասկացությունները, վճարողների շրջանակը, վճարների տեսակները, հաշվարկման և վճարման կարգը, խախտման համար պատասխանատվությունը և այլն: 2006 թվականի դեկտեմբերի 20-ին ընդունված <<Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանվել են շարժական և անշարժ աղբյուրներից օդի աղտոտման, ջրի աղտոտման, թափոնների տեղադրման և շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների ներմուծման և արտադրման համար վճարների դրույքաչափերը: Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թ. դեկտեմբերի 30-ի N 864 որոշմամբ սահմանվել են ջրօգտագործման, պինդ օգտակար հանածոների, ստորերկրյա քաղցրահամ ու հանքային ջրերի, աղի արդյունահանված պաշարների, կենսապաշարների օգտագործման համար վճարների դրույքաչափերը: Նշված իրավական ակտերի կիրարկման շնորհիվ հավաքագրվող բնապահպանական և բնօգտագործման վճարների, այդ թվում՝ նաև մետաղական օգտակար հանածոների արդյունահանումից վճարվող ռոյալթիի հանրագումարը 1999 թվականի տարեկան 600 մլն. դրամից ավելացել է և 2013 թվականին կազմել է մոտ 30 մլրդ. դրամ՝ ապահովելով ավելի քան 50 անգամյա աճ:

3) **Հողային ռեսուրսների օգտագործման տնտեսական մեխանիզմը.** Հայաստանի Հանրապետությունում հողային ռեսուրսների օգտագործման մեխանիզմի բնույթը և տեսակները պայմանավորված են հողի սեփականության ձևերով ու կարգավորվում են <<Հողի հարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության Հողային և Քաղաքացիական օրենսգրքերով: Հողի օգտագործումը վճարովի է: Հողից օգտվելու վճարը սահմանվում է հողային հարկի ձևով, որը գանձվում է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով: <<Հողի հարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքն ապահովում է տնտեսական լծակների կիրառումը հողօգտագործման ոլորտում: Հողի հարկը պետական կամ համայնքների բյուջե գանձվող պարտադիր վճար է, որի չափը կապված չէ վճարողների տնտեսական գործունեության արդյունքների հետ և սահմանվում է հողակտորի միավոր մակերեսի համար հաստատագրված վճարի ձևով տարվա համար: Հողի հարկով հարկման օբյեկտ են հանդիսանում՝ գյուղատնտեսական նշանակության հողերի համար՝ հողի կադաստրային գնահատմամբ որոշված հաշվարկային զուտ

եկամուտը, իսկ ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի համար՝ հողի կադաստրային գնահատման արժեքը: Հողի հարկի գծով սահմանված են մի շարք արտոնություններ: Այդ վճարումից ազատված են բյուջետային հիմնարկներն ու կազմակերպությունները, այդ թվում՝ պետական արգելոցների, արգելավայրերի, ազգային պարկերի, դենդրոպարկերի, բուսաբանական այգիների ու պատմամշակութային նշանակության հողերը՝ բացառությամբ վարձակալության և ծառայողական օգտագործման տրված հողերի: Հողի հարկի, որպես Հայաստանում հողօգտագործման մեխանիզմը կարգավորող տնտեսական լծակի, դերը բացահայտելու համար կարևոր է գնահատել, թե ինչպես են ապահովվում այն հիմնական խնդիրները, որի համար կոչված է ծառայելու քննարկվող հարկատեսակը, մասնավորապես, որպես՝ հանրապետության պետական և համայնքային բյուջեների համալրման աղբյուր. հողօգտագործման բնագավառում բնապահպանական խնդիրների լուծման համար անհրաժեշտ միջոցների կուտակման աղբյուր. արդյունավետ հողօգտագործմանը խթանող տնտեսական լծակ: Բացի այդ, Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներով (2006 թ. հուլիսի 20-ի 1026-ն, 2006 թ. մայիսի 26-ի N 750-Ն, 2006 թ. օգոստոսի 24-ի N 1277-Ն և այլն) կանոնակարգվում է հետևյալը.

ա. հողի բերրի շերտի խախտումը, աղտոտումը և աղբոտումը.

բ. հողերի աղտոտումը ռադիոակտիվ ու քիմիական նյութերով, արտադրական թափոններով, կեղտաջրերով, պեստիցիդների և հանքային պարարտանյութերի նորմատիվները գերազանցող քանակություններով.

գ. հողերի ջրային և հողմնային հողատարումը, ճահճացումը, ողողումը, աղակալումը, կարծրացումը, անապատացում առաջացնող գործողությունների իրականացումը, հողի բարելավման, հողի հողմնային և ջրային հողատարումից պահպանման, հողի վիճակը վատթարացնող այլ գործընթացների կանխմանն ուղղված պարտադիր միջոցառումների չիրականացումը, ինչպես նաև հողի, դրա բերրի շերտի, բնական պաշարների, հնէաբանական և պատմամշակութային ժառանգության օբյեկտների փչացումն ու ոչնչացումը կանխարգելող միջոցառումների չձեռնարկումը.

դ. գյուղատնտեսական աշխատանքների վարման նորմաների խախտման հետևանքով էրոզիայի զարգացումը, հողում օրգանական միացությունների պարունակության նվազեցումը, գյուղատնտեսական հանդակների դեգրադացման, հողի պահպանության և բարելավման պարտադիր միջոցառումները, ինչպես նաև ագրոտեխնիկական միջոցառումներ չկատարելու հետևանքով գյուղատնտեսական հանդակների վնասումը, բերքատվության և կադաստրային արժեքի նվազեցումը, արոտավայրերի գերարածեցումը, հողն այլ բնական պաշարների ոչնչացմանը կամ պարբերաբար վնաս պատճառելուն հանգեցնող եղանակներով օգտագործումը և այլն.

ե. ազդեցության ճշգրիտ գնահատման համար օգտագործվում են տարբեր գործակիցներ, որոնք կիրառվում են ըստ հողային ռեսուրսի բնապահպանական արժեքի, աղտոտման վտանգավորության աստիճանի, աղտոտվածության մակարդակի, խորության և այլ չափորոշիչների:

4) ***Ջրային ռեսուրսների օգտագործման տնտեսական մեխանիզմը.*** Հայաստանում ջրօգտագործման տնտեսական մեխանիզմները կարգավորվում են՝ Հայաստանի Հանրապետության Ջրային օրենսգրքով և <<Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով: Ջրօգտագործման հարաբերությունները կարգավորվում են թույլտվություններով, որոնցում նշվում են ջրօգտագործման ծավալները, ժամկետները, վարձաչափերը և այլ պայմաններ: Ջրօգտագործողները պարտավոր են վճարել ստացված ջրի համար՝ Հայաստանի կառավարության կողմից հաստատված կարգով և դրույքաչափերով: Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 14-ի N 1110-Ն որոշմամբ կանոնակարգված են ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման բնութագիրն ու ընթացակարգը, ինչպես նաև աղտոտող նյութերի քանակությունը, վնասակար նյութերի սահմանային թույլատրելի մակարդակը, ազդեցության ժամանակահատվածը, վնասակար նյութերի ազդեցության և գերնորմատիվային ջրօգտագործման կանխարգելման ծախսերը: Տնտեսական գործունեության հետևանքով աղտոտված ջրերի ազդեցության գնահատումը ներառում է աղտոտված միջավայրում ջրային, անտառային և հողային ռեսուրսների նվազման հետևանքով արտադրանքի քանակական ու որակական կորուստների փոխհատուցման, աղտոտված ջրային ռեսուրսների վերականգնման համար պահանջվող լրացուցիչ ծառայությունների, աղտոտման հետևանքով հիվանդացած բնակչության առողջության վերականգնման և աշխատանքի արտադրողականության նվազեցման հետևանքով (այդ թվում՝ աշխատանքից բացակայության) զուտ աշխատանքի կորստի փոխհատուցման, ինչպես նաև հիմնական ֆոնդերի վրա աղտոտման ազդեցության հետևանքով արդյունաբերական արտադրանքի կորստի փոխհատուցման ծախսերը:

5) ***Կենսաբանական պաշարների օգտագործման տնտեսական մեխանիզմը.*** Հայաստանում կենսաբանական պաշարների օգտագործումը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության անտառային և հողային օրենսգրքերով, <<Բուսական աշխարհի մասին>>, <<Կենդանական աշխարհի մասին>>, <<Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքներով: Հայաստանում կենսապաշարների օգտագործումը վճարովի է և դրանց օգտագործման համար սահմանված են դրույքաչափեր: <<Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման

սակագների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքը կարգավորում է իրավաբանական և ֆիզիկական անձանց հետևյալ գործողությունները՝

ա. առանց սահմանված կարգով տրամադրված թույլտվությունների, կնքված պայմանագրերի և դրանցով սահմանված պայմանների խախտմամբ իրականացվող կենսապաշարների օգտագործումը.

բ. ագրոքիմիկատների և պեստիցիդների չկանոնակարգված օգտագործումը, որը վնաս է հասցնում կենդանական աշխարհին.

գ. հազվագյուտ, անհետացող և Կարմիր գրքում գրանցված կենդանիների, դրանց ձվերի, բնադրավայրերի, ձվադրավայրերի ոչնչացումը և այնպիսի գործողությունների կատարումը, որոնք հանգեցնում են այդ կենդանիների թվաքանակի կրճատմանը և ապրելավայրերի վատթարացմանը.

դ. օրենսդրությամբ սահմանված որսի և ձկնորսության կատարման կանոնների խախտումները.

ե. կենդանական աշխարհի օգտագործման և պահպանության գծով օրենսդրության այլ խախտումներ, որոնց հետևանքով վնաս է հասցվում կենդանական աշխարհին:

6) ***Օգտակար հանածոների օգտագործման տնտեսական մեխանիզմը.*** Հայաստանում օգտակար հանածոների արդյունահանումը կանոնակարգվում է Հայաստանի Հանրապետության Ընդերքի մասին օրենսգրքով: Ընդերքի շահագործումը վճարովի է, բացառությամբ այն դեպքերի, երբ՝ սեփական կարիքների համար իրենց հատկացված հողամասի (անկախ սեփականության ձևից) սահմաններում կատարում են ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանում. իրականացնում են ռեգիոնալ երկրաբանական ուսումնասիրություններ (հրաբխային, սեյսմաբանական և արտածին երկրաբանական երևույթների մշտադիտարկում, այդ թվում՝ ինժեներաերկրաբանական, հիդրոերկրաբանական հետազոտություններ և այլն). ստեղծում են միներալոգիական, հնէաբանական և այլ հավաքածուներ. իրականացնում են եզակի երկրաբանական գոյացությունների, բնության հուշարձանների ուսումնասիրություն, նկարագրում և պահպանում: Ընդերքն օգտագործելիս համապատասխան վճարները կատարվում են համաձայն Հայաստանի Հանրապետության Ընդերքի մասին օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների: Օգտակար հանածոյի արդյունահանում իրականացվում է լիազոր մարմնի կողմից տրված թույլտվության հիման վրա, որին կցվում են համապատասխան փորձաքննություններ անցած օգտակար հանածոյի արդյունահանման նախագիծը, հանքարդյունահանման պայմանագիրը և լեռնահատկացման ակտը, որոնք թույլտվության անքակտելի մասերն են: Օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվությունը տրվում է հանքավայրի շահագործման ողջ ժամկետով, բայց ոչ ավելի, քան 50 տարի, որը հաշվարկվում է տվյալ հանքավայրի

օգտակար հանածոների արդյունահանման տեխնիկատնտեսական ցուցանիշների հիման վրա:

7) ***ԲՀՊՏ-ների օգտագործման տնտեսական մեխանիզմը.*** Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դրույթներով, ԲՀՊՏ-ներում բնօգտագործման հետ կապված բոլոր վճարները (արդյունագործական ձկնորսություն, խոտհունձ, փայտանյութի մթերում և այլն), բնապահպանական օրենսդրության խախտումների համար գանձվող տուգանքները, բնությանը պատճառված վնասի վերականգնվող փոխհատուցման գումարները ամբողջությամբ մուտքագրվում են պետական բյուջե: ԲՀՊՏ-ներում տնտեսական մեխանիզմների տարբեր տեսակների կիրառումը կարգավորվում է <<Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով: Տնտեսական մեխանիզմների կիրառման շրջանակները և հնարավորությունները, կախված ԲՀՊՏ-ների կատեգորիաներից և պահպանության ռեժիմից, տարբեր են: ԲՀՊՏ-ների տնտեսական նոր մեխանիզմների կիրառումը լրացուցիչ ուսումնասիրությունների և վերլուծությունների կարիք ունի: Դրանց օգտագործումը պետք է համապատասխանի այս բնագավառի համար ընտրված զարգացման ռազմավարությանը, համահունչ լինի իրականացվող կառուցվածքային և տնտեսական բարեփոխումների հետ:

IV. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

13. Բնակչության սոցիալական ապահովության արդի վիճակը

1) Անապատացմանը նպաստող մարդածին գործոնների վերլուծությունը ցույց է տալիս, որ անապատացման և տնտեսական հարաբերությունների ձևավորման հետ կապված սոցիալ-տնտեսական վիճակով, ինչպես նաև ժողովրդագրական գործընթացներով պայմանավորված, բնակչության աղքատացման միջև գոյություն ունի ուղղակի կապ: Տնտեսության առանձին ճյուղերի զարգացման անբավարար տեմպերի, համախառն ներքին արդյունքի, ազգային եկամտի և պետական բյուջեի եկամուտների դանդաղ աճի, ստվերային տնտեսության գոյության պայմաններում սահմանափակված է սոցիալական ապահովության բնագավառում արդյունավետ և զարգացած երկրներին բնորոշ հարաբերությունների ձևավորման ու ներդրման հնարավորությունը:

2) ՀՆԱ-ի ցուցանիշները. 2004-2008 թվականներին տնտեսության գրեթե բոլոր հատվածների զարգացումները նպաստեցին համախառն ներքին արդյունքի, ՀՆԱ-ի, երկնիշ ցուցանիշով աճին՝ միջինը 11.6 % (նկար 8): Սակայն, համաշխարհային տնտեսական ճգնաժամը լրջորեն վտանգեց երկրի տնտեսության կայունացումը: Արդեն 2009 թ. արձանագրվեց տնտեսության 14.1 տոկոս անկում: Չնայած հետագա տարիներին փաստվեց ՀՆԱ-ի նախորդ տարվա համեմատ աճի միտումներ, սակայն

տնտեսության մի շարք առաջատար ճյուղեր դեռևս խոր ճգնաժամ էին ապրում: 2010 թ. տեղի ունեցան դրական փոփոխություններ: Բավականին զգալի էր 2012 թ. ՀՆԱ-ի աճը՝ 7.2 %, սակայն դա դեռևս բավարար չէր հասնելու 2008 թ.-ի մակարդակին:



Նկար 8. ՀՆԱ-ի դինամիկան (Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ):

3) Արդյունաբերությունը. 2010 թ.-ին արդյունաբերությունում նույնպես գրանցվեց տնտեսական աճ՝ 9.7 %, 2009 թ.-ի 7.6 % անկման դիմաց, որը 1.4 տոկոսային կետով նպաստեց 2010 թ. ՀՆԱ-ի հավելաճին: 2011 թ.-ի երկնիշ աճից (13.9 %) հետո արդյունաբերական արտադրանքի ծավալը որոշակի նվազում ապրեց և արդեն 2013 թ.ին, նախորդ տարվա համեմատ, կազմել է 6.8 %: Զգալի զարգացում է ապրում հանքարդյունաբերությունը, սակայն հանքավայրերի ոչ արդյունավետ շահագործումը և մետաղական վերջնական ապրանքի արտադրության բացակայությունը սպասվելիք տնտեսական արդյունք չեն ապահովում: Որոշակի աճ է արձանագրվել գունավոր և թանկարժեք մետաղների արդյունահանումում, իսկ ոչ մետաղական հանածոների, մասնավորապես՝ շինարարական հանածոների մի մասի մոտ (քար, ավազ և այլն) դեռևս պահպանվում են նվազման միտումներ: Վերջին տարիներին տնտեսության աճը բնութագրվեց նաև արտահանման ծավալների աճով, սակայն այն հիմնականում սահմանափակվում էր հանքահումքային խտանյութերով:

4) Գյուղատնտեսության վիճակը մինչև 2008 թ. համեմատաբար բարվոք էր՝ 2000-2008թ-ի համադրելի գներով միջին տարեկան աճը կազմել է 38.5 %: 2009 թ. գրանցվեց տնտեսական անկում՝ 12.1 % (ՀՆԱ-ի կառուցվածքում 23.7 %-ից իջավ մինչև 17.6 %)՝ հիմնականում պայմանավորված բնակլիմայական անբարենպաստ պայմաններով: 2010-2013 թթ. տվյալներով գյուղատնտեսությունում արձանագրված համախառն արտադրանքի աճն ապահովեց դրա մասնաբաժնի աճ երկրի համախառն ներքին արդյունքի նկատմամբ՝ 18.4 %-ից աճեց մինչև 21.5 %-ի (տես՝ http://www.armstat.am/file/doc/99489233.pdf): Ըստ Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության (այսուհետ՝ ՀՀ ԱՎԾ) կողմից իրականացված

ուսումնասիրությունների՝ գյուղացիական տնտեսությունների 21 տոկոսից ավելին իրենց հողերը չեն մշակում տնտեսապես ձեռնտու չլինելու պատճառով (աղյուսակ 3): Չնայած որոշակի աշխուժացում է ապրում բանկային ֆինանսավորմամբ հողի մշակումը, սակայն յուրաքանչյուր չորրորդ գյուղացի ունի աշխատանքների կատարման համար ֆինանսական դժվարություններ: Ներկայումս գյուղատնտեսության համախառն արտադրանքի գերակշռող մասը ապահովվում է մասնավոր հատվածի կողմից (աղյուսակներ 4, 5): Գյուղատնտեսական նշանակության հողերի ոչ արդյունավետ մշակման արդյունքում զգալի հողային տարածքներ արդեն իսկ կարիք ունեն որակի բարելավման լուրջ միջացառումների (նկար 9), որոնց բացակայությունը կհանգեցնի հողերի դեգրադացիայի (տես՝ http://www.armstat.am/file/article/poverty_2013a_2.pdf):

Աղյուսակ 3.

Հող ունեցող բնակչության հողի չմշակման պատճառներն ըստ աղքատության քվինտիլային խմբերի, 2011-2012 թթ., %

Պատճառները	Ընդամենը	Սպառման ագրեգատի քվինտիլային խմբեր				
		Առաջին	Երկրորդ	Երրորդ	Չորրորդ	Հինգերորդ
Շատ հեռու է	9.2/8.2	4.1/11.2	12.8/17.0	10.3/14.3	8.7/14.8	9.5/13.3
Հողը վատորակ է	11.2/7.8	10/11.6	12.3/14.1	12/14.5	10.6/14.6	11.1/12.7
Հողը չի ոռոգվում	15.8/19.0	19.3/13.4	14.5/17.8	13.3/14.6	14.6/11.8	17.4/15.0
Մշակելը ձեռնտու չէ	23.8/21.2	21.1/23.4	23/22.4	23/22.1	26.2/24.4	24.1/22.8
Մշակելու համար ֆինանսներ չկա	22/28.7	33/22.2	25.3/13.6	23.4/14.6	20.7/13.3	15.9/18.0
Հիվանդ է, ծեր է	12.9/10.2	8.9/13.5	10/11.0	13.4/15.1	14.1/12.8	14.5/12.7
Այլ	5.1/4.9	3.6/4.7	2.1/4.1	4.6/4.8	5.1/8.3	7.5/5.5

Աղյուսակ 4.

ՀՀ-ում գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը 2010-2014 թթ.-ի հունվարի 1-ի դրությամբ (հազ.գլուխ)

Գյուղատնտեսական կենդանիներ, հունվարի 1-ի դրությամբ	2010 թ.	2011 թ.	2012 թ.	2013 թ.	2014 թ.
Խոշոր եղջերավոր անասուն	570.6	571.4	599.2	661.0	677.6
որից՝ կով	273.9	272.6	283.3	303.3	309.6
Խոզ	112.6	114.8	108.1	145.0	139.8
Ոչխար և այծ	511.0	532.5	590.2	674.7	717.6
Թռչուն	4134.6	3462.5	4023.5	4050.0	4101.0

Աղյուսակ 5.

Գյուղատնտեսական մշակաբույսերի ցուցանիշները

Մշակաբույսեր	Ցանքային տարածությունները (հազ. հա)					Համախառն բերքը (հազ. տոննա)				
	2009 թ.	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.
Հացահատիկային և հատիկաընդեղենային	171.6	159.3	157.8	172.2	178.4	374.9	326.4	440.7	456.1	548.8
Բանջարանոցային	23.9	23.5	25.0	25.2	25.4	819.8	707.6	787.1	849.0	876.0
Բոստանային	6.2	4.5	5.8	5.1	5.4	216.1	132.5	180.9	205.1	208.1

Կարտոֆիլ	32.0	28.4	28.7	31.2	30.7	593.6	482.0	557.3	647.2	660.5
Ընդամենը	**300.0**	**283.6**	**286.7**	**304.2**	**318.1**	**2004.4**	**1648.5**	**1966.0**	**2157.4**	**2293.4**







Նկար 9. Բարելավման կարիք ունեցող հողեր

5) Էներգաանվտանգության ապահովումը. Ազգային քաղաքականության նպատակներից է էներգախնայողության բարելավումը և վերականգնվող էներգետիկ աղբյուրների հետագա զարգացումը: Հարկ է նշել, որ վերականգնվող էներգիայի առավելագույն մասնաբաժին արձանագրվել է 2010 թ.-ին՝ 39.5 % (աղյուսակ 6), ինչն հետագայում նվազել է և 2012 թ.-ին կազմել է 28.8 %: Դեռևս աննշան է այլընտրանքային

էներգիայի մասնաբաժինը, սակայն Հայաստանի համար այն ունի ռազմավարական նշանակություն:

Աղյուսակ 6.

Վերականգնվող էներգիայի մասնաբաժինը ընդհանուրում, %

2000	2005	2010	2011	2012
21.16	28.07	39.48	33.56	28.81

Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության ապահովման հիմքում դրված են 1992 թ. Ռիոյի համաժողովի և հետագա գագաթաժողովների ընդունած Կայուն զարգացման գործողությունների գլոբալ ծրագիրը, Յոհաննեսբուրգի գագաթաժողովի՝ Կայուն զարգացման նախանշած սկզբունքները, Եվրահանձնաժողովի Կանաչ Գրքում արտացոլված «Էներգամատակարարման անվտանգության, մրցունակության և կայունության ապահովման Եվրոպական ռազմավարությունը», Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված մի շարք այլ բնապահպանական կոնվենցիաներով ստանձնած պարտավորությունները:

6) Ժողովրդագրական իրավիճակ և միգրացիոն գործընթացներ. Հայաստանի Հանրապետությունում 1990-ական թվականներից հետո տեղի ունեցած սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական իրողությունները հանգեցրին ժողովրդագրական իրավիճակի կտրուկ փոփոխության՝ ծնելիության, մահացության, արտաքին միգրացիայի ցուցանիշների վատացում (աղյուսակ 7): Ընդ որում՝ 1990 թ. տարեկան ունենալով շուրջ 80 000 ծնունդ, 2001 թ. այն շուրջ 2 անգամ նվազել է՝ արձանագրելով 32 065 ծնունդ: 1990 թ. արձանագրվել է 22.0 հազար մահ (1000 բնակչի հաշվով՝ 6,2 մահ), 2011 թ. գրանցվել է 28 030 մահ (1000 բնակչի հաշվով՝ 8,6 մահ): Ստացվում է, որ Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության թվաքանակը նվազել է 196.4 հազ. մարդով: Այդ տասնամյակում բնական հավելաճը կազմել է 105.7 հազ.մարդ: Հայաստանի ժողովրդագրական լրջագույն մարտահրավերներից է միգրացիան: Ըստ 2010 թ. և 2012 թ. տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջական հետազոտության (ՏՏԿԱՀ) անցկացված ընտրանքային հետազոտության արդյունքների՝ 2007 թ.-ի հունվարի 1-ից սկսած տնային տնտեսությունների 15 և բարձր տարիքի անդամներից 11 %-ը ներգրավված են եղել արտաքին և ներքին միգրացիոն տեղաշարժերում, իսկ միգրացիայի հիմնական պատճառ են հանդիսացել Հայաստանում աշխատանքի բացակայությունը, ընտանեկան պատճառները և այլն: 2009 թ.-ի տարեսկզբից միգրացիոն գործընթացներում ներգրավված և 2012 թ.-ի դրությամբ դեռևս չվերադարձած տնային տնտեսությունների 15 և բարձր տարիքի անդամների մասնաբաժինը կազմել է 40.8 %: Հարկ է նշել, որ դեռևս մտահոգիչ է աշխատանքային միգրացիայի գերակա ցուցանիշները ընդհանուր միգրանտների շրջանում:

Աղյուսակ 7.
Մշտական բնակչության թվաքանակի և բաղադրիչների փոփոխության դինամիկան (հազ. մարդ) (Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ)

Տարի	Բնակչության թվաքանակը (տարեսկզբին)	Բնական հավելաճ	Միգրացիայի մնացորդը	Բնակչության թվաքանակը (տարեվերջին)	Տարեկան հավելաճ/ նվազում, %
1990	3514.9	57.9	1.7	3574.5	1.70
1992	3633.3	44.7	-214.3	3463.7	-4.67
1995	3260.3	24.1	-35.6	3248.8	-0.35
1996	3248.8	23.2	-26.0	3246.0	-0.09
2001	3215.3	8.1	-10.5	3212.9	-0.07
2005	3215.8	11.1	-7.7	3219.2	0.11
2006	3219.2	10.4	-6.7	3222.9	0.12
2007	3222.9	13.3	-6.1	3230.1	0.22
2008	3230.1	13.8	-5.9	3238.0	0.26
2009	3238.0	16.8	-5.3	3249.5	0.36
2010	3249.5	16.9	-3.8	3262.6	0.40
2011	3018.9	15.3	-12.8	3021.4	0.26
2012	3021.4	14.9	-9.4	3026.9	0.18
2013	3026.9	14.6	-24.1	3017.4	-0.31

7) Սոցիալական պաշտպանություն. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իրականացվող հակաճգնաժամային քաղաքականությունը ուղղվեց սոցիալական ծախսերի առնվազն նույն մակարդակով պահպանելուն: Թեև սոցիալական տրանսֆերտներին ուղղված համախմբված բյուջեի ծախսերը տարեց տարի ավելանում են, դրանք շարունակում են ՀՆԱ-ի նկատմամբ մնալ բավական սահմանափակ մակարդակում (աղյուսակ 8): Ընդ որում՝ համախմբված բյուջեի սոցիալական ոլորտներին ուղղված փաստացի ծախսերի տոկոսային ցուցանիշը ՀՆԱ-ի նկատմամբ հաշվարկվել է հիմք ընդունելով պետական և համայնքների բյուջեներից կատարված ծախսերի հանրագումարը (աղբյուր՝ http://www.armstat.am/file/article/finansner_14_1.pdf): Եթե դադարեցվի սոցիալական տրանսֆերտների վճարումը, իսկ տնային տնտեսությունները, բավարար ռեսուրսների բացակայությամբ պայմանավորված, չկարողանան փոխհատուցել այդ կորուստը, ապա աղքատության մակարդակը զգալիորեն կաճի, աղքատության ընդհանուր մակարդակը կավելանա 18.4 տոկոսային կետով կամ 51 %-ով (35.8 %-ից՝ 54.2%): Իրավիճակն ավելի կսրվի հատկապես սոցիալական տրանսֆերտներ ստացող բնակչության համար:

Աղյուսակ 8.

Համախմբված բյուջեի սոցիալական ոլորտներին ուղղված փաստացի ծախսերը, %-ով ՀՆԱ-ի նկատմամբ

	2008	2009	2010	2011	2012	2013
Կրթության ոլորտ	2.9	3.9	3.7	3.6	3.3	3.1
Առողջապահության ոլորտ	1.4	1.8	1.6	1.7	1.6	1.5
Մշակույթ, տեղեկատվություն, սպորտ, կրոն	0.4	0.6	0.6	0.8	0.7	0.6
Սոց նպաստներ, կենսաթոշակներ,	5.8	7.7	7.1	6.8	7.3	7.0

8) Առողջապահություն. 2013 թ. հանրապետությունում գործել են 129 հիվանդանոցներ, 514 ամբուլատոր պոլիկլինիկական հիմնարկներ (տես՝ http://www.armstat.am/file/article/soc_13_17-18.pdf): Դրան զուգահեռ՝ առողջապահության ծառայություններից բնակչության օգտվելու աստիճանը դեռևս բավական ցածր է, հատկապես գյուղական բնակավայրերում և աղքատ բնակչության շրջանում: Եթե հիվանդության դեպքում ոչ աղքատների 41.6 %-ն է դիմել բժշկական խորհրդատվության կամ բուժման, ապա աղքատների՝ 30.0 %-ը և ծայրահեղ աղքատների՝ 24.1 %-ը: Բուժհիմնարկներ չդիմելու հիմնական պատճառն ինքնաբուժումն է՝ 52 % և ֆինանսական վատ վիճակը՝ 24 % (տես http://www.armstat.am/am/?nid=81&id=1618):

9) Կրթական համակարգը. Անապատացման հիմնախնդիրների լուծումը պահանջում է անհրաժեշտ գործողությունների արդյունավետություն, որն էականորեն պայմանավորված է հասարակության համապատասխան կրթական մակարդակով: Ընդ որում՝ կրթական համակարգը պետք է հիմնված լինի անընդհատ էկոլոգիական կրթության սկզբունքի վրա՝ ներառելով հասարակության բոլոր տարիքային խմբերը և շերտերը: Այդ տեսակետից շրջակա միջավայրին վերաբերող գիտելիքների լուսաբանումը հանրապետությունում արտացոլված են դպրոցական և բուհական ուսումնակրթական ծրագրերում, սակայն խորացված գիտելիքներ ստանում են միայն համապատասխան մասնագիտական կրթություն ստացող ուսանողները: Սակայն էկոլոգիական կրթությունը չպետք է սահմանափակվի միայն ուսումնակրթական ծրագրերի առկայությամբ և դրանց կատարելագործմամբ: Այդ տեսակետից, ըստ Հայաստանի Հանրապետության մարդահամարների ամփոփ արդյունքների, բնակչության 99.9 %-ը գրագետ է: Հանրակրթությունը մատչելի է բոլորի համար: Ի տարբերություն հիմնական կրթության, սովորողների ընդգրկվածությունը միջնակարգ դպրոցի բարձր դասարաններում, ավագ դպրոցում և մասնագիտական կրթական հաստատություններում համեմատաբար ցածր է, իսկ աղքատների և ոչ աղքատների ընգրկվածության տարբերությունը բավական նկատելի: Բարձրագույն կրթության հետ

կապված բարձր ծախսերը, կրթություն ստանալուց հետո համապատասխան աշխատանք գտնելը, բարձր աշխատավարձ ստանալու ցածր հավանականությունն այն հիմնական պատճառներն են, որով կարելի է բացատրել հիմնական և, մասնավորապես, ընդհանուր միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո աղքատ տնային տնտեսությունների համապատասխան տարիքի բնակչության կրթական համակարգից դուրս մնալը: Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների տեսակարար կշիռը կտրուկ տարբերվում է ըստ աղքատության մակարդակի: Ոչ աղքատ տնային տնտեսություններում այն կազմել է 20.3 %, աղքատ տնային տնտեսություններում՝ 8.7 %, ծայրահեղ աղքատ տնային տնտեսություններում՝ 4.5 %: Այնուամենայնիվ հանրապետությունում բավական բաձր է ընդգրկվածությունը կրթական համակարգերում և այն փոփոխական զարգացումներով ունի աճի միտում (նկար 10):



Նկար 10. Սովորողների ընդգրկվածությունը՝ %-ով համապատասխան տարիքի բնակչության թվաքանակից

10) Բնակչության բնակության պայմանները. Հայաստանում 2011 թ. տնային տնտեսությունների գերակշիռ մասը (93 %-ը) հանդիսանում է իր կացարանի սեփականատերը: Քաղաքային բնակավայրերում տնային տնտեսությունները հիմնականում բնակվում են բազմաբնակարան շենքերում՝ 69.4 %, իսկ գյուղական բնակավայրերում՝ առանձնատներում (90.1 %): Հանրակացարաններում, ժամանակավոր և այլ տեսակի կացարաններում բնակվող ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական բնակչության համամասնությունը կազմում է մոտ 4 %: Զգալի թիվ կազմող բնակարանի (կացարանի) կարիք ունեցողներ դեռևս ունեն լուրջ դժվարություններ դրա ձեռք բերման համար: Մասնավորապես՝ բարձր գներ, հիփոթեքային ծառայությունների անհասանելի պայմաններ, բնագավառի պետական կարգավորման անբավարար վիճակ: 2013 թ.-ի տարեվերջի դրությամբ բնական գազով գազաֆիկացված են 650495 բնակարան՝ բազմաբնակարան շենքերում և բնակելի տներում: Այն կազմում է հանրապետության համապատասխան բնակարանային ֆոնդի 75.5 %-ը: Ընդ որում, գազաֆիկացված են քաղաքային բնակավայրերի 92 և գյուղական բնակավայրերի 57.6 տոկոսը: Մնացածը ստեղծում են որոշակի ռիսկեր՝ կացարանի ջեռուցման, կերակուրի պատրաստման

համար վառելափայտի օգտագործումով: Գործնականորեն բոլոր քաղաքային բնակավայրերը և գյուղական բնակավայրերի մեծամասնությունը ներառված են կենտրոնացված ջրամատակարարման համակարգում: Այլ է վիճակը կեղտաջրերի հեռացման և պատշաճ մաքրման բնագավառում: Չնայած քաղաքային բնակավայրերի համարյա ամբողջական կոյուղացմանը, հոսքաջրերի կենսաբանական մաքրում չի իրականացվում: Կեղտաջրերը թափվում են գետեր, ջրամբարներ և լճեր՝ ավելացնելով դրանց աղտոտումը: Կարևոր հիմնախնիրներից է բնակավայրերից աղբահանությունը: Աղբավայրերը չեն համապատասխանում սանիտարական, քաղաքաշինական և բնապահպանական նորմերին և լուրջ վտանգ են ներկայացնում շրջակա միջավայրի աղտոտման համար, տեղակայված են բաձր ռիսկայնություն ունեցող այնպիսի վայրերում, ինչպիսիք են ջրաղբյուրները, գյուղատնտեսական հողհանդակները: Չնայած աղբը հիմնականում հավաքվում և հեռացվում է, սակայն սանիտարական նորմերին չհամապատասխանող աղբույսների ցաք ու ցրիվ բաշխվածությունը հիմք է տալիս փաստելու թափոններով հողերի աղտոտվածության իրականությունը:

14. Բնակչության զբաղվածությունը և գործազրկությունը

1) Զբաղվածության բնագավառում պետական քաղաքականությունը միտված է արժանապատիվ, լրիվ և արդյունավետ զբաղվածության ապահովման համար պայմանների ստեղծմանը, աշխատաշուկայի լարվածության մեղմմանը, աշխատանք փնտրողների մրցունակության բարձրացմանը, թափուր աշխատատեղերի արդյունավետ համալրմանը: Զբաղվածության պետական քաղաքականության 2000-2013 թթ. ընկած ժամանակաշրջանը բնութագրվում է որպես զբաղվածության ոլորտի օրենսդրական բարեփոխումների, զբաղվածության պետական ծառայության համակարգի ինստիտուցիոնալ կարգավորման ժամանակաշրջան: 2008-2013 թթ. ընթացքում տնտեսության մեջ զբաղված են եղել միջին հաշվով 1172.1 հազ. մարդ: Ընդհանուր առմամբ արձանագրվել է 1.6 %-ով զբաղվածության ցուցանիշի անկում կամ 19.3 հազ. մարդ տարբեր պատճառներով կորցրել են աշխատանքը: Հարկ է նշել, որ զբաղվածների թվաքանակի նվազմանը հակառակ՝ տնտեսության մասնավոր հատվածում նկատվել է զբաղվածության 0.5 %-ի աճ: Զբաղվածների առավելագույն թվաքանակ է արձանագրվել 2010 թ.-ին՝ 1185.2 հազ. մարդ: Ճգնաժամի առաջին տարիներին այն նվազեց ավելի քան 20.5 հազ. մարդով, սակայն հետագայում, տնտեսության մասնավոր հատվածի որոշակի աշխուժացմամբ պայմանավորված, արդեն 2010 թ.-ին համարյա վերականգնվեց նախկին ցուցանիշը (աղյուսակ 9): Ներկայումս տնտեսությունում զբաղված են 1163.8 հազ. մարդ, որի 78.3 %-ը զբաղված են մասնավոր հատվածում: Հարկ է նշել, որ չհաշվառվող տնտեսությունում և ոչ ֆորմալ հատվածում ամբողջական զբաղվածության հաշվառումը դեռևս ընթացքի մեջ է: Ոչ ֆորմալ զբաղվածության վերլուծությունը

հիմնված է աշխատատեղերի թվաքանակի վրա: Հետևաբար, զբաղվածությունն ըստ աշխատանքի բնույթի (ֆորմալ, ոչ ֆորմալ) կլինի ավելի մեծ, քան զբաղվածների թվաքանակը: Աշխատատեղերի սակավությամբ պայմանավորված՝ անցումային երկրների շարքում Հայաստանը 2008-2013 թթ. գրանցել է գործազրկության ամենաբարձր, միջինը 17.7 %, մակարդակներից մեկը: Գործազուրկների թվաքանակը վերոնշյալ տարիների ընթացքում նվազել է 3 %-ով, իսկ գործազրկության մակարդակը՝ 0.2 տոկոսային կետով: Գործազրկության համեմատական բարձր մակարդակ արձանագրվել է 2010 թ.-ին՝ կազմելով 19.0 %:

Աղյուսակ 9.

Հայաստանում աշխատանքի շուկայի հիմնական ցուցանիշները 2008-2013 թթ.
(Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ)

հազ. մարդ	2008	2009	2010	2011	2012	2013
Աշխատանքային ռեսուրսներ,	2376.9	2397.6	2389.7	2286.3	2260.8	2189.1
Տնտեսապես ակտիվ բնակչություն,	1414.6	1418.8	1463.3	1440.9	1418.3	1388.4
Ոչ ակտիվ բնակչություն	962.3	978.9	926.3	845.4	842.5	800.7
Զբաղվածներ	1183.1	1152.8	1185.2	1175.1	1172.8	1163.8
Գործազուրկներ	231.6	265.9	277.8	265.5	245.2	224.6
Տնտեսական ակտիվության մակարդակը, %	59.5	59.2	61.2	63.0	62.7	63.4
Զբաղվածության մակարդակը, %	49.8	48.1	49.6	51.4	51.9	48.1
Գործազրկության մակարդակը, %	16.4	18.7	19.0	18.4	17.3	16.2
Միջին ամսական անվանական աշխատավարձի աճի տեմպը, %	117.8	109.9	106.9	105.3	104.7	104.8

2) Աղքատությունը. 2000-ականների սկզբին տնտեսության կայուն զարգացումը բերեց աշխատավարձերի բարձրացման, զբաղվածության մակարդակի կայունացման և բյուջեից սոցիալական ոլորտներին ուղղվող ծախսերի ավելացման: Այդ ամենը, մասնավոր տրանսֆերտների աճող հոսքի հետ մեկտեղ, նպաստեցին աղքատության մակարդակի զգալի կրճատմանը: Հայաստանի անկախացմանը հաջորդած տարածաշրջանային քաղաքական իրավիճակը, շրջափակումը, վառելիքաէներգետիկ ճգնաժամը կազմալուծեցին երկրի տնտեսությունը, իսկ բնակչության աղքատությունը հասավ 55 %-ի (աղյուսակ 10): Հայաստանում աղքատության աստիճանի հաշվարկի համար ներկայումս կիրառվում է Համաշխարհային Բանկի կողմից սահմանված աղքատության աստիճանի հաշվարկի երրորդ մեթոդը - աղքատության կոր (1996-2003 թթ. – 1-ին, 2004-2008 թթ. – 2-րդ): 2012 թ.-ի ընթացքում Հայաստանում աղքատության մակարդակը կազմել է 32.4 %՝ 2008 թ.-ին արձանագրված 27.6 %-ի դիմաց: Շատ աղքատների տեսակարար կշիռը 2012 թ.-ին կազմել է 13.5 %՝ 2008 թ.-ին արձանագրված 12.6 %-ի դիմաց: Իսկ ծայրահեղ աղքատության մակարդակը 2012 թ.-ին կազմել է 2.8 %՝ 2008 թ.-ին արձանագրված 1.6 %-ի դիմաց (աղյուսակ 11): Հարկ է նշել,

որ զգալի փոփոխության են ենթարկվել բնակչության ապրելակերպի որոշակի սովորությունները: Մասնավորապես՝ պակասեցրել են սննդի սպառումը (31.5 %), թանկարժեք սննդամթերքը փոխարինել են էժանով (59.2 %), դադարեցվել կամ նվազեցվել են ոչ պարենային ապրանքների ձեռք բերելը (48.3 %), ավելի քիչ են օգտվում զվարճանքներից (66.1 %) ու ընկերային հանդիպումներից (64.6 %) և այլն: Աղքատության հաղթահարման համար, ըստ դիտարկումների և հաշվարկների, Հայաստանին անհրաժեշտ է 69.4 մլրդ. դրամ կամ ՀՆԱ-ի 1.7 % կազմող գումար՝ ենթադրելով, որ սոցիալական աջակցությունը բարձր հասցեականությամբ կտրամադրվի միայն աղքատներին: Ծայրահեղ աղքատության վերացումը կպահանջի 2.0 մլրդ.դրամ կամ ՀՆԱ-ի 0.1 %-ը՝ ի հավելումն ծայրահեղ աղքատներին արդեն իսկ ուղղված սոցիալական աջակցության և ապահովելով բարձր հասցեականություն: Միջազգային փորձը վկայում է, որ սոցիալական աջակցության տրամադրման անթերի հասցեականություն ապահովելը շատ անհավանական է, ուստի աղքատության հաղթահարման համար պահանջվող փաստացի միջոցներն իրականում շատ ավելին են: Բարձր հասցեականություն ապահովելու նպատակով պահանջվող ռեսուրսների համեմատ, ազատական տնտեսակարգով երկրներում, աղքատության հաղթահարման համար պահանջվող նվազագույն ռեսուրսները հարկ է առնվազն կրկնապատկել: Ընդհանուր առմամբ, աղքատության մակարդակի փոփոխությունը պայմանավորված է կենսամակարդակը գնահատող սպառման ագրեգատի փոփոխությամբ և վերջինիս բաշխվածության անհավասարության աստիճանով: 2008-2012 թթ.-ի ընթացքում Հայաստանում աղքատության ընդհանուր մակարդակի 4.79 տոկոսային կետով աճը պայմանավորված է և՛ սպառման, և՛ վերաբաշխման բաղադրիչների ներգործությամբ:

Աղյուսակ 10.

Աղքատության մակարդակը Հայաստանում 2001-2012 թթ.-ին.
Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, ՏՏԿԱՀ

	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012
1996 թ. մեթոդաբանությամբ	50.9	49.7	42.9	39.0	---	---	---	---	---	---		
2004 թ. մեթոդաբանությամբ	---	---	---	34.6	29.8	26.5	25.0	23.5	28.7	28.9		
2009 թ. մեթոդաբանությամբ	---	---	---	53.5	---	---	---	27.6	34.1	35.8	35.0	32,4

Աղյուսակ 11.

Աղքատության ցուցանիշների դինամիկան 2004 և 2008-2012 թթ.-ին (ըստ 2009 թ.-ի մեթոդաբանության) (տոկոսներով) Աղբյուրը՝ ՏՏԿԱՀ 2004 և 2008-2012 թթ.

Տարիներ	Աղքատ	այդ թվում՝ շատ աղքատ	որից՝ ծայրահեղ աղքատ	Ոչ աղքատ
2004	53.5	32.6	4.4	46.5
2008	27.6	12.6	1.6	72.4

2009	34.1	20.1	3.6	65.9
2010	35.8	21.3	3.0	64.2
2011	35.0	19.9	3.7	65.0
2012	32.4	13.5	2.8	67.6

V. ԱՆԱՊԱՏԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻՆ ԱՌԸՆՉՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

15. Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի ընդունումից հետո Հայաստանի կառավարության կողմից ընդունվեց 2002 թվականի հունվարի 14-ի <<Հողային պաշարների պետական կառավարման լիազոր մարմիններ սահմանելու մասին>> N 26 որոշումը, որի համաձայն սահմանվեց լիազոր մարմինների համակարգը, դրանց լիազորությունների շրջանակը: Հետագայում հողային հարաբերությունների բնագավառում կառավարման լիազորություններ իրականացնող մարմինների շրջանակը հստակեցվեց մի շարք իրավական ակտերով, մասնավորապես՝ <<Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին>>, <<Բնապահպանական վերահսկողության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության անտառային և ընդերքի մասին օրենսգրքերով:

16. 2011 թվականի նոյեմբերի 28-ին ընդունվել է Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգիրքը: Օրենսգրքում նախատեսված են մի շարք դրույթներ, որոնք վերաբերում են՝ հողերի պաշտպանության հարաբերություններին (59-րդ հոդվածի 3-րդ մասի 11-րդ և 13-րդ կետերը, 64-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերը, 67-րդ հոդվածի 1-ին մասը): Օրենսգիրքը նախատեսում է <<ռեկուլտիվացիոն աշխատանքներ>> հասկացությունը, որի համաձայն՝ ռեկուլտիվացիոն աշխատանքները օգտակար հանածոների արդյունահանման նախագծով կամ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության ծրագրով բնության և շրջակա միջավայրի պահպանության նպատակով նախատեսված ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի վերականգնմանն ուղղված միջոցառումներ են (49-րդ հոդվածի 2-րդ մասը, 50-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը):

17. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թ., ապրիլի 8-ի N 387 որոշմամբ հաստատվել են ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության ապահովմանն ուղղված ՀՀ բնապահպանության նախարարության գործունեության ուղղությունները: Նշված որոշմամբ ներքին սպառնալիքների թվին են դասվում՝ անտառների և հողերի դեգրադացիան, անապատացումը, բնապահպանական հարցերի վերաբերյալ հասարակության թերի կրթվածությունն ու անբավարար իրազեկվածությունը: Նախատեսվում է շարունակել տնտեսական մեխանիզմների գծով

բարեփոխումների իրականացումը՝ բնական ռեսուրսների տնտեսական գնահատման մեթոդների կատարելագործման միջոցով, աստիճանաբար բնօգտագործման և բնապահպանական դրույքաչափերի մակարդակը մոտեցնելով օգտագործվող բնական ռեսուրսներին և շրջակա միջավայրին պատճառվող վնասի իրական տնտեսական արժեքին (չափերին): Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի N 1192-Ն որոշումը սահմանում է տեխնածին աղտոտված հողերի մոնիթորինգի իրականացման մեթոդաբանությունը: 2011 թվականի սեպտեմբերի 8-ի N 1396-Ն որոշումը կարգավորում է հողի բերրի շերտի նպատակային և արդյունավետ օգտագործման հետ կապված հարաբերությունները, մասնավորապես՝ հողամասերի սեփականատերերի, օգտագործողների պարտականությունները, համայնքի ղեկավարի և մարզպետի իրավասությունը, բերրի շերտի հանման, պահպանման, տեղափոխման և օգտագործման տվյալների հաշվառումն ու գրանցումը: Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի ապրիլի 12-ի N 442-Ն որոշմամբ հաստատվել է 2012-2014 թթ. հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումների ծրագիրը: 2012 թվականի օգոստոսի 23-ի N 1079-Ն որոշմամբ հաստատվել է բնության և շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման կարգը: Ի կատարումն հիշյալ որոշման պահանջների՝ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 24-ի N 365-Ն հրամանով հաստատվել է ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման և ինդեքսավորման կարգը: Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 4-ի N 1297-Ն որոշմամբ սահմանվել է քաղաքացիական պաշտպանության, վտանգավոր տարածքների բացահայտման, ճառագայթային, քիմիական և մանրէաբանական միջոցներից վնասազերծման ու վարակազերծման կարգը:

18. Նշված իրավական ակտերի համեմատական վերլուծությունը վկայում է, որ հողերի պահպանությանը վերաբերող միջոցառումները իրականացվում են հետևյալ ուղղություններով՝ մի կողմից օրենսդրությունը ամրագրում է հողի սեփականատերերի, հողօգտագործողների պարտականությունները, սահմանում է գործունեության սկզբունքներ, չափորոշիչներ, իսկ մյուս կողմից՝ հիշյալ անձանց համար սահմանվում են մեթոդական ուղեցույցներ, ինչը հնարավորություն է տալիս լիարժեք ձևով կարգավորել հողերի պահպանության բնագավառում առաջացող հարաբերությունները: Սակայն անհրաժեշտ է նկատի ունենալ, որ հիշյալ բնագավառի ընդհանուր քաղաքականության մեջ բացակայում է իրականացվող միջոցառումների պլանավորումը, հաճախ կայացվում են իրավիճակային որոշումներ և հաշվի չի առնվում բնապահպանական

միջոցառումների կարճաժամկետ և երկարաժամկետ պլանավորման սկզբունքը: Կարելի է արձանագրել նաև, որ ընդունվող որոշումների մասին պատշաճ ձևով չի իրազեկվում բնակչությունը, ինչը նույնպես նվազեցնում է որոշումների կիրառման արդյունավետությունը: Այդ առումով անհրաժեշտ է կատարելագործել ընդունվող որոշումների լուսաբանման ուղղությամբ տարվող աշխատանքները, ինչը հնարավորություն կտա բարելավել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների համագործակցությունը:

VI. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՆԱՊԱՏԱՑՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

19. ՄԱԿ-ի <<Անապատացման դեմ պայքարի>> կոնվենցիայի 3/COP.8 որոշմամբ կոչ է արվում վնասվող Կողմ երկրներին ներդաշնակեցնել անապատացման դեմ պայքարի գործողությունների իրենց ազգային ծրագրերը Կոնվենցիայի իրականացման 10-ամյա ռազմավարական ծրագրի հետ: Վնասվող Կողմ երկրները պետք է իրենց գործողությունների ազգային ծրագրերը վերածեն ռազմավարական փաստաթղթի, որում հողերի դեգրագացիայի և կայուն հողօգտագործման խնդիրները պետք է հաշվի առնվեն զարգացման ճյուղային ծրագրերում և ռազմավարություններում:

20. Կատարված վերլուծության արդյունքում որոշվել են Հայաստանում անապատացման հիմնախնդիրները և դրանք առաջացնող պատճառներն ու գործոնները: Վերջիններիս կանխարգելմանը/վերացմանը կամ մեղմացմանը կարող են նպաստել հանրապետության սոցիալ-տնտեսական ներկա վիճակի բարելավմանն ուղղված համալիր միջոցառումների իրականացումը, որոնք ընդգրկում են՝

1) օրենսդրության և կառավարման համակարգի կատարելագործումը.

2) բնօգտագործման մեխանիզմների կատարելագործումը.

3) գիտական աշխատանքների ընդլայնումը և մոնիթորինգի համակարգի կատարելագործումը.

4) կրթության համակարգի կատարելագործումը.

5) հասարակության իրազեկության ապահովումը.

6) Ռիո-յի կոնվենցիաների շրջանակներում համատեղ գործողությունների իրականացումը.

7) միջազգային համագործակցության իրականացումը:

21. Համալիր միջոցառումների այս համակարգը ամբողջությամբ արտացոլում է Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների բնույթը, որոնցից հատկապես առանձնացվում են բնապահպանական ուղղվածության այնպիսի կոնվենցիաները, ինչպիսիք են <<Կենսաբանական բազմազանության մասին>>, <<Կլիմայի փոփոխության մասին>> և <<Անապատացման դեմ պայքարի>>

ՄԱԿ-ի կոնվենցիաները: Ելնելով դրանից՝ Հայաստանում անապատացման գործընթացների կանխարգելմանը/վերացմանը կամ մեղմացմանը նպատակաուղղված գործողություններում առանձնակի կարևորություն են ստանում՝

1) կոնվենցիաների շրջանակներում համատեղ ծրագրերի մշակումն ու իրականացումը.

2) տարածաշրջանային և ենթատարածաշրջանային համագործակցությունը:

22. Ժամանակն է, որպեսզի երկրի զարգացման հիմքում ներդրվի <<Կանաչ տնտեսության>> մոդելը: Վերջինս ամրագրում է տնտեսության այնպիսի ճյուղերի զարգացում, որոնք տնտեսապես առավել շահավետ են և երկարատև հիմքով բարելավում են շրջակա միջավայրն ու կյանքի էկոլոգիական պայմանները: <<Կանաչ տնտեսության>> ճյուղերից են՝ էներգիայի վերականգնվող աղբյուրները, բիովառելիքները, էներգաարդյունավետության բարձրացումը, ռեսուրսների խնայողությունը, թափոնների վերամշակումը, էկոլոգիական շինարարությունը, օրգանական գյուղատնտեսությունը, էկոլոգիական զբոսաշրջությունը, էկոհամակարգային ծառայությունները: <<Կանաչ տնտեսության>> զարգացման պարագայում անհրաժեշտ է վերանայել տնտեսության ղեկավարման սկզբունքները, սահմանվեն առավել կոշտ էկոլոգիական չափանիշներ և ներդնել նոր <<կանաչ>> տեխնոլոգիաներ: Անցումը <<Կանաչ տնտեսությանը>> կնպաստի նաև կլիմայի փոփոխություններով պայմանավորված խնդիրների լուծմանը: Այս մոտեցումների հիման վրա Ասիական Զարգացման Բանկի ֆինանսական աջակցությամբ 2014 թ.-ին մշակվել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքային համայնքի զարգացման ծրագրի նախագիծը, որի նպատակն է բարելավել ազգաբնակչության կյանքի որակը և նպաստել կլիմայի գլոբալ փոփոխության դեմ հարմարվողականության միջոցառումների ներդրմանը: Անհրաժեշտ է շարունակել սույն գործընթացը՝ մշակելով համապատասխան ծրագրեր մարզային մակարդակով:

23. Օրենսդրության կատարելագործում. Անապատացման դեմ պայքարի գործընթացում օրենսդրության կատարելագործման խնդիրը համապատասխանում է <<Անապատացման դեմ պայքարի>> կոնվենցիայի 10–ամյա ռազմավարության 2-րդ օպերատիվ նպատակին, որը ենթադրում է՝ հողերի դեգրադացիայի և երաշտի հետևանքների մեղմանն ուղղված որոշումների կայացման համար բարենպաստ իրավիճակի ստեղծում, կայուն հողօգտագործմանն ուղղված ազգային իրավական հիմքերի ներդաշնակեցում: Անապատացման դեմ պայքարի գործընթացում առաջնահերթ նշանակություն ունի օրենսդրությունում բնության պահպանության և բնական պաշարների օգտագործման հարցերի համապատասխանությունը՝ կարևորելով հետևյալ հարցերը.

1) Տնտեսական խթանման մեխանիզմների օգտագործումը, որի համար անհրաժեշտ է օրենսդրությամբ սահմանել անապատացման ենթարկված տարածքների չափանիշները և դրանց իրավական ռեժիմը:

2) Բնապահպանության ոլորտում ֆինանսատնտեսական նոր մեխանիզմների ներդնումը նախատեսված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի ապրիլի 25-ի <<Բնապահպանական ոլորտի նորարարական ֆինանսատնտեսական մեխանիզմի ստեղծման հայեցակարգին հավանություն տալու մասին>> N 16 արձանագրային որոշմամբ, որով նախատեսվում է կիրառության մեջ դնել <<Էկոհամակարգային ծառայություններ>> հասկացությունը: <<Էկոհամակարգային ծառայությունների>> հետ կապված հարցերը բավարար չափով կանոնակարգված չեն, այդ թվում՝ ջրի և մթնոլորտային օդի մաքրումը, հողերի բերրիության ապահովումը և դեգրադացված հողերի վերականգնումը, բույսերի և կենդանիների բնակավայրերի անվտանգության ապահովումը: <<Էկոհամակարգային ծառայությունների վճարների>> սկզբունքների կիրառման համար անհրաժեշտ կլինի մշակել նոր իրավական ակտեր, մասնավորապես՝ էկոհամակարգային ծառայությունների վճարների հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենքի նախագիծ և դրանից բխող իրավական ակտեր:

3) Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից մշակվել է <<Հողային ծածկույթի դասակարգման համակարգը>>, որով նախատեսվում է հողերի բաշխումը կատարել ըստ հետևյալ դասակարգման.

ա. ոչ կանաչ տարածքներ.

բ. ջրային հողեր.

գ. արոտավայրեր.

դ. թփուտներ.

ե. անտառներ.

զ. մշակովի հողեր:

4) Այս դասակարգումը թույլ է տալիս ունենալ հողային ռեսուրսների վիճակի իրական պատկերը, որը ստացվում է տեղային, ինչպես նաև տիեզերական տվյալների հիման վրա: Հողային ծածկույթը նպատակահարմար է գնահատել նաև հեռահար զոնդավորման միջոցով, սակայն հողօգտագործման ձևերի բազմազանությունը և փոփոխությունները սահմանափակում են այդ եղանակով հետազոտման հնարավորությունները: Հետևաբար, հողային ծածկույթի վիճակը գնահատելու համար անհրաժեշտ է օգտագործել տարբեր մեթոդներ:

5) Հայաստանում հողային ծածկույթի համար այսպիսի դասակարգման համակարգ դեռևս ձևավորված չէ, սակայն, օգտագործելով տարբեր տարիների հողային հաշվեկշիռները, մոտավոր կարելի է հաշվարկել և ստանալ հողային ծածկոցի մասին

որոշակի տվյալներ: Այսպես՝ 2008-2011 թթ. Հայաստանում բուսականությունից զուրկ հողերի, թփուտների, անտառների, վարելահողերի քանակը նվազել է, իսկ ջրային հողերը և արոտավայրերը ընդարձակվել են: Բուսականությունից զուրկ հողերի անկումը և արոտավայրերի աճը կապված է հողային կատեգորիաների հստակեցման հետ: Ջրային հողերի ընդարձակումը, անտառների և թփուտների տարածքների կրճատումը հիմնականում պայմանավորված է Սևանա լճի ջրի մակարդակի բարձրացմամբ: Վարելահողերի կրճատման միտումը հողի կատեգորիան փոխելու հետևանք է: Հայաստանի Հանրապետությունում հողերի մոնիթորինգի խնդիրն արդիականացնելու և միջազգային մակարդակին մոտեցնելու նպատակով անհրաժեշտ է՝ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում կատարել համապատասխան լրացում՝ ընդգրկելով <<Հողային ծածկույթի դասակարգման համակարգ>> հասկացությունը: Այն թույլ կտա հողերի մոնիթորինգն արդիականացնել և մոտեցնել միջազգային մակարդակին:

6) Բնապահպանական իրավիճակի արմատական փոփոխությունները երկրում հնարավոր է միայն ակտիվ բնապահպանական քաղաքականության իրականացման միջոցով: Հարցի արմատական լուծման նախընտրելի տարբերակ է <<Բնապահպանական խնդիրների ռազմավարական պլանավորման մասին>> օրենքի ընդունումը, որում կսահմանվեն՝ բնապահպանական խնդիրների ռազմավարական պլանավորման հիմնական սկզբունքները, պլանավորման ժամանակահատվածը, պլանավորման մեխանիզմները, բնապահպանական ռազմավարական ծրագրերի կապը մյուս ռազմավարական ծրագրերի հետ, բնապահպանական ռազմավարական ծրագրերի իրականացման մոնիթորինգի և գնահատման սկզբունքներն ու ընթացակարգերը, բնապահպանական ռազմավարական ծրագրերի մշակողների և իրականացնողների պատասխանատվության և հաշվետվողականության կարգերը, ռազմավարական փաստաթղթերի թափանցիկության և հրապարակայնության ապահովման ընթացակարգերը:

7) Անհրաժեշտ է <<Ազգաբնակչության էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին>> և <<Կրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքներում կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ, որոնք թույլ կտան, ինչպես կրթության ոլորտում, այնպես էլ հասարակության իրազեկության բարձրացման ռազմավարության ծրագրի մշակման ժամանակ ուշադրություն դարձնել համապատասխան հզորությունների ստեղծմանը:

24. Կառավարման համակարգի կատարելագործում. Անապատացման դեմ պայքարի գործընթացում Կառավարման համակարգի կատարելագործման խնդիրը համապատասխանում է <<Անապատացման դեմ պայքարի>> կոնվենցիայի 10–ամյա

ռազմավարության 2-րդ օպերատիվ նպատակին, որը ենթադրում է՝ հողերի կայուն կառավարմանն ուղղված ինստիտուցիոնալ հենքի վերլուծություն, միջճուղային ինստիտուցիոնալ մեխանիզմների ստեղծում կամ ուժեղացում/զարգացում և ապակենտրոնացում: Անապատացման դեմ պայքարի գործընթացի հաջողությունը նախ և առաջ պայմանավորված է բնապահպանության ոլորտում գործողությունների միասնական ռազմավարության իրականացումից: Այդ տեսակետից պետության հիմնական խնդիրն է ամրապնդել բնապահպանական գործունեության կառավարման մեխանիզմը, կատարելագործել էկոլոգիական պլանավորումը և տնտեսական բարեփոխումներ իրականացնելիս ինտեգրել շրջակա միջավայրի և այլ ոլորտների քաղաքականությունը: Արդյունավետ բնօգտագործման և բնապահպանության ներդաշնակ երկմիասնական գործունեությունը ենթադրում է համապատասխան կառավարման համակարգի առկայություն, որը հասարակական գիտակցության բարձր աստիճանի, կատարյալ օրենսդրության, օրենքների գերակայության պայմաններում ապահովում է երկրում բնօգտագործման և բնապահպանության նկատմամբ վերահսկողության ու կարգավորման հակակշիռների գործուն մեխանիզմների աշխատանքը: Կառավարման համակարգի կատարելագործումը ենթադրում է նաև լանդշաֆտային պլանավորման ժամանակ ներդնել այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են՝ գույքագրումը, տարածքի գեոէկոլոգիական գնահատման չափանիշների մշակումը, տարածքային զարգացման նպատակների որոշումը և զարգացման հայեցակարգի մշակումը, գերակայությունների որոշումը և համապատասխան գործողությունների մշակումը: Այստեղ կարևորվում է կառավարման տեղական, տարածքային և հանրապետական մակարդակներում քայլերի հաջորդականության և վերջնական արդյունքների ստացումը: Բնապահպանական և բնօգտագործման պետական քաղաքականության իրականացման ապահովման համար պետական կառավարման համակարգի կատարելագործումը պետք է նպատակաուղղված լինի բնապահպանական խնդիրներով զբաղվող կառույցների գործունեության համակարգմանը, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների ընդլայնմանը, տարաբնակեցման համակարգի կառավարմանը: Բնապահպանական խնդիրներով զբաղվող կառույցների գործունեության համակարգման և միասնական պետական քաղաքականության իրականացման համար անհրաժեշտ է գերակայությունը տալ ռազմավարական նշանակություն ունեցող հետևյալ ուղղությունների զարգացմանը:

1) Էկոլոգիական մոնիթորինգի համակարգի կատարելագործումը. Ներկայումս Հայաստանում շրջակա միջավայրի մոնիթորինգի իրականացմամբ զբաղվում են մի շարք կազմակերպություններ, որոնք աշխատանքները կատարում են տարբեր մակարդակներով և անհրաժեշտ է համակարգել ցուցանիշների հավաքագրումն ու վերամշակման գործընթացը: Էկոլոգիական մոնիթորինգին վերաբերող բնագավառը

կարգավորվում է մի շարք իրավական ակտերով, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունվարի 25-ի N 198-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի N 1440-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի N 1441-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունվարի 22-ի N 120-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունվարի 22-ի N 121-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի փետրվարի 19-ի N 276-Ն որոշումներով և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի հրամանով հաստատված <<Անտառների պետական մոնիթորինգի համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման ձևերը հաստատելու մասին>> 11.10.2007 թ. N 234-Ն հրամանով: Անհրաժեշտ է ձևավորել մոնիթորինգի տվյալների միասնական ու համակարգված տեղեկատվական շտեմարան, որի առկայությունը կապահովի շրջակա միջավայրի և բնական ռեսուսների վիճակի բազմակողմանի գնահատումը: Այդպիսի տեղեկատվությունը կկողմնորոշի պետական կառավարման մարմիններին՝ ոլորտի քաղաքականության ձևավորման ու կառավարման հարցերով որոշումների կայացման գործում: Էկոլոգիական մոնիթորինգի համակարգի կատարելագործումը հնարավորություն կտա սահմանելու Հայաստանի տարածքների էկոլոգիական լարվածության չափանիշները և մշակել համապատասխան գնահատման սանդղակը:

2) Բնօգտագործման և շրջակա միջավայրի պահպանության ոլորտում կառավարման տարբեր մակարդակներում նպատակների հասանելիությունն ապահովող միջոցառումների համակարգի ներդնումը. Հայաստանում բնապահպանական ծրագրերի հիմնական մասը ոլորտային բնույթ ունեն և չեն պարունակում ռազմավարական պլանավորման հիմնական տարրերը: Գոյություն ունեցող բնապահպանական ծրագրերի մեծ մասը ներդաշնակեցված չեն պետական ռազմավարական զարգացման ծրագրերի հետ, բացակայում են բնապահպանական խնդիրների ռազմավարական պլանավորման իրավական հիմքերը: Այդ ծրագրերի մշակմանը և իրականացմանը քաղաքացիական հասարակության և գործարար հատվածի մասնակցությունն անբավարար է և դրանց ներգրավումը ռազմավարական պլանավորման գործընթացում պատշաճ կերպով չի իրականացվում: Անբավարար է նաև ծրագրերի իրականացման մոնիթորինգի և գնահատման համակարգը, հաշվետվողականության, ինչպես նաև այդ փաստաթղթերի թափանցիկության և հրապարակայնության ապահովումը: Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի փետրվարի 6-ի N 5 արձանագրային որոշման համաձայն՝ նախատեսվում է ընդունել բնապահպանական խնդիրների ռազմավարական

պլանավորման հայեցակարգից բխող միջոցառումների ծրագիր: Վերջինս պետք է ուղղված լինի հետևյալ նպատակների իրագործմանը.

ա. ուժեղացնել պետության վերահսկողությունը շրջակա միջավայրի նկատմամբ.

բ. ապահովել անտառապատման և անտառավերականգնման ծավալների հետագա աճը, անապատացման դեմ պայքարը, կենսաբանական և լանդշաֆտային բազմազանության պահպանությունը.

գ. ընդլայնել բնության հատուկ պահպանվող տարածքների համակարգը և կատարելագործել դրանց կառավարման մեխանիզմները.

դ. մշակել և կիրառել նոր մոտեցումներ հասարակության բնապահպանական իրազեկության բարձրացման և էկոլոգիական կրթության ու դաստիարակության հարցերում:

25. Բնօգտագործման տնտեսական մեխանիզմների կատարելագործում. Անապատացման դեմ պայքարում բնօգտագործման տնտեսական մեխանիզմների կատարելագործումը համապատասխանում է <<Անապատացման դեմ պայքարի>> կոնվենցիայի 10–ամյա ռազմավարության 2-րդ օպերատիվ նպատակին, մասնավորապես՝ Բոնի հռչակագրով նախատեսված միջճուղային ինստիտուցիոնալ մեխանիզմների հիմնմանը կամ ուժեղացմանը: Մարդկային հասարակության գոյատևումը պայմանավորված է բնօգտագործման և բնապահպանության երկմիասնական բնույթով, որն օբյեկտիվորեն ենթադրում է բնական ռեսուրսների օգտագործման ու պահպանության անխզելի և համաժամանակյա կապի ապահովում, որն իր հերթին պահանջում է համակարգված հաշվառմամբ ապահովել.

1) մարդկային հասարակության ու բնառեսուրսային էկոհամակարգերի փոխազդեցության և փոխգոյակցության հավասարակշռության պահպանում.

2) արդյունավետ ռեսուրսաօգտագործման և ռեսուրսախնայողության գործընթացների ներդաշնակ զուգորդման համար բնառեսուրսային ներուժի օգտագործման տեխնոլոգիական և արտադրատեխնիկական հենքի բնապահպանական նպատակաուղղվածության կատարելագործում.

3) բնօգտագործողների ֆինանսական միջոցների և այլ նյութական ներդրումների հաշվին նրանց կողմից օրենսդրությամբ նախատեսված բնապահպանական միջոցառումների (ծրագրերի) պարտադիր կատարման իրավական գործուն համակարգի ստեղծում և զարգացում:

26. Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում գործող բնօգտագործման տնտեսական մեխանիզմների համակարգը չի համապատասխանում ժամանակակից մեթոդներին, քանի որ դրույքաչափերի հիմքում ընկած չեն գիտականորեն հիմնավորված սկզբունքներ, իսկ շրջակա միջավայրի տարբեր բաղադրիչներին

հասցված վնասի գնահատման մեթոդաբանական հիմքերը հակասության մեջ են բնապահպանական և բնօգտագործման վճարների համակարգի օրենսդրության հետ: Բնապահպանական և բնօգտագործման վճարների համակարգի և գործող դրույքաչափերի անհամապատասխանության պատճառով աղավաղվում են ինչպես կատարված ծախսերի և օգուտների վերլուծությունները, այնպես էլ հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները: Բնօգտագործման ոլորտում շուկայական հարաբերությունների ծավալման, բազմաձև սեփականության և մրցակցային միջավայրի պայմաններում ավելի են կարևորվում բնօգտագործման բնագավառում տնտեսական մեխանիզմների կիրառումը, որոնք ապահովում են <<Աղտոտողը և օգտագործողը վճարում է>> սկզբունքների իրագործումը և առողջ մրցակցությունը: Հայաստանում առկա էկոլոգիական իրավիճակը բարելավելու և բնության վրա տնտեսության ծանրաբեռնվածությունը մեղմացնելու համար անհրաժեշտ է ապահովել.

1) Հայաստանի բնական ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացում.

2) բնական ռեսուրսների վերարտադրություն և դրանց չվերականգնվող մասի գծով օգտագործման սահմանափակում.

3) շրջակա միջավայրի վրա ազդեցության աստիճանական նվազեցում՝ մինչև էկոլոգիապես թույլատրելի սահմանը.

4) բնօգտագործումից ստացվող պետության եկամուտների զգալի աճ:

27. Այդ նպատակների համար պետք է՝

1) իրականացվի բնական ռեսուրսների հաշվառման և տնտեսական գնահատման համակարգի բարեփոխում, կատարելագործվեն բնօգտագործման լիմիտավորման և լիցենզավորման համակարգերը.

2) իրականացվի հարկային համակարգի աստիճանական բարեփոխում՝ նպատակաուղղված հարկային բեռի տեղափոխմանը ռեսուրսային վճարների վրա և նվազեցնելով այլ հարկատեսակների գծով գործող դրույքաչափերը.

3) կատարելագործվեն բնական ռեսուրսների վերարտադրության և շրջակա միջավայրի պահպանության ֆինանսավորման մեխանիզմները՝ ապահովելով այդ ոլորտներում աշխատանքների և ծառայությունների շուկայի ձևավորումն ու հետագա զարգացումը.

4) ապահովել ռազմավարական նշանակության և խիստ դեֆիցիտային բնական ռեսուրսների կանխատեսման, որոնման և գնահատման աշխատանքների իրականացումը, դրանց ծավալների աստիճանական ավելացումը, իսկ ձևերի հետագա կատարելագործումը.

5) ապահովել բնական ռեսուրսների ուսումնասիրության, վերարտադրության, օգտագործման և պահպանության նոր մեթոդների և տեխնոլոգիաների զարգացումը,

ինչպես նաև երկրորդական ռեսուրսների օգտագործման տեսակարար կշռի ավելացումը, թափոնների օգտագործման մակարդակի բարձրացումը.

6) ուժեղացվի կենսաբազմազանության և լանդշաֆտների պահպանությանը նպատակաուղղված գործունեությունը, ապահովել ԲՀՊՏ-ների և եզակի բնական ռեսուրսներով ու հատկանիշներով տարածքների ցանցի զարգացումը.

7) ապահովել բնապահպանության ոլորտում Հայաստանի ազգային շահերին համապատասխանող արտաքին քաղաքականության իրականացումը:

28. Բնական ռեսուրսների տնտեսական գնահատման մեթոդների և դրանց օգտագործման վճարովիության սկզբունքների ու վարձաչափերի սահմանման մեխանիզմների կատարելագործումը կնպաստի բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործմանը, վերարտադրությանն ու բնական միջավայրի պահպանմանը: Բնօգտագործման ոլորտում շուկայական հարաբերությունների ծավալման, բազմաձև սեփականության և մրցակցային միջավայրի պայմաններում կարևորվում է բնօգտագործման բնագավառում տնտեսական մեխանիզմների կիրառումը, որոնք՝

1) էկոլոգիական առումով կայուն զարգացման հասնելու բանալին են.

2) ավելի արդյունավետ են գործում քան մյուս լծակները.

3) ապահովում են <<Օգտագործողը վճարում է>> սկզբունքի իրագործումը.

4) ապահովում են բնապահպանական ներդրումների և պետական բյուջեի համալրման համար ֆինանսական ռեսուրսների գեներացիան (դրամական հոսքերի ավելացում).

5) համատեղելի են տնտեսական բարեփոխումների ընդհանուր ռազմավարության հետ.

6) ապահովում են բնօգտագործման բնագավառում առողջ մրցակցություն, որը վերջնական արդյունքում հանգեցնում է ռացիոնալ բնօգտագործման.

7) օգնում են սպառողներին և արտադրողներին ընդունելու երկարաժամկետ որոշումներ.

8) օգտակար են զանազան աղբյուրներից աղտոտման հիմնահարցերի լուծման համար:

29. Ջրային ռեսուրսների օգտագործում. Ջրային ռեսուրսների պահպանությունը և արդյունավետ օգտագործման տնտեսական մեխանիզմների կատարելագործումը անապատացման դեմ պայքարի գործընթացում ունի վճռորոշ նշանակություն:

1) Ընդհանուր ջրառը հանրապետությունում կազմում է տնօրինվող պաշարների մոտ 41 տոկոսը: Բնութագրվում է կորուստների զգալի մասնաբաժնով, որը մեծ տոկոս է կազմում հատկապես բնակչության ջրամատակարարման համակարգում՝ ավելի քան 80 %: Վերջին տարիներին ջրառը կայունացել է և տատանվում է 3 մլրդ. խոր.մ-ի

սահմաններում (նկար 11): Ըստ տնտեսության ճյուղերի ամենամեծ ջրօգտագործողը գյուղատնտեսությունն է, որը 2013 թ.-ին կազմել է ջրօգտագործման ընդհանուր ծավալի կեսը (նկար 12): Ձկնաբուծության զարգացումը հանգեցրեց ջրի շատ մեծ ծավալների ստորերկրյա ջրերի օգտագործման՝ 2013 թ.-ին ընդհանուրի 38.3 %: Ստորերկրյա աղբյուրների ջրառը կազմել է ընդհանուր ջրառի 45.5 %: Կեղտաջրերի ոչ բավարար մաքրման արդյունքում տարեկան հազարավոր տոննա աղտոտիչ նյութեր են թափվում բնական ջրատարներ՝ հիմնականում գետեր: 2013 թ.-ին այն կազմել է 215 հազ.տ:



Նկար 11. Ջրառի և ջրօգտագործման դինամիկան ՀՀ-ում



Նկար 12. Ջրօգտագործումն ըստ ուղղությունների, 2013 թ-ին: %-ով ընդհանուրի նկատմամբ

2) Հայաստանի էներգետիկ նշանակության իրատեսական հիդրոպոտենցիալը գնահատվում է 1750 ՄԳՎտ կամ 5,5 մլրդ. Կվտ-ժամ, որից չիրացվածը կազմում է մոտ 500 ՄԳՎտ կամ 2 մլրդ ԿՎտ-ժամ: Տարբեր գնահատականներով տեսական պոտենցիալը տատանվում է 7-8 մլրդ. կՎտժ սահմաններում, այսինքն տեսականու մոտ մեկ երրորդ մասը: Երկու խոշոր գետերի՝ Հրազդանի և Որոտանի տեխնիկապես մատչելի պոտենցիալը գործնականորեն իրացվում է: Երրորդ, համեմատաբար խոշոր համակարգի՝ Փամբակ-Ձորագետ-Դեբեդ պոտենցիալը չի իրացված (բացառությամբ

ՁորաՀԷԿ-26 ՄՎտ): Երկու կասկադների էլեկտրակայանների (Սևան-Հրազդանյան ՀԷԿ-երի կասկադի՝ ոռոգման ռեժիմներով աշխատելու դեպքում) և փոքր ՀԷԿ-երի էլեկտրաէներգիայի նախագծային արտադրությունը կազմում է մոտ 1500 ԳՎտժ, կամ տեխնիկապես մատչելի պոտենցիալի 20 %-ը: Տնտեսապես հիմնավորված հիդրոպոտենցիալի իրագործումը թույլ կտա բավարարել էլեկտրաէներգիայի առկա պահանջարկի 50 %-ը, որը կպաշտպանի Հայաստանը էներգետիկ ճգնաժամերից, և, հետևաբար, կապահովի տնտեսության զարգացումն ու կբարձրացնի անցկացվող բարեփոխումների կայունությունը, կամրապնդի պետության քաղաքական դիրքը:

3) Վերջին տարիներին Արարատյան դաշտում նոր տագնապալի հիմնախնդիր է առաջացել՝ կապված ստորերկրյա (արտեզյան) ջրերի ծավալների փոքրացման և ջրաշերտերի իջեցման հետ: Ինչպես ցույց է տրված <<Մաքուր էներգիա և ջուր>> ծրագրի (ԱՄՆ ՄԶԳ, 2014) շրջանակներում կատարված <<Արարատյան դաշտի ստորերկրյա ջրային ռեսուրսների գնահատման ուսումնասիրություն>> փաստաթղթում, 2013 թ. դրությամբ՝ Արարատյան արտեզյան ավազանի դրական ճնշման գոտում շահագործվել է 1235 հորատանցք՝ 50.5 մ^3/վրկ ջրաելքով, որով խախտվել է հորատանցքերով ջրի օգտագործման համար սահմանված միջին տարեկան 20.8 մ^3/վրկ ջրաքանակը՝ գերազանցելով այն 2.4-4.5 անգամ: Հիմնականում արտեզյան ջրերի օգտագործման ոլորտը ձկնաբուծությունն է, որի կարիքների համար ջրառը կազմել է 35.5 մ^3/վրկ: Արդյունքում՝ արհեստական չորացման ենթարկվեցին վերին հողաշերտերը, նկատելի են դարձել բնական էկոհամակարգերի փոփոխության միտումներ՝ անապատացման երևութների զարգացմանը զուգահեռ ֆլորայի և ֆաունայի տեսակափոխության տեմպերի արագացում: Մյուս կողմից տարածքի որոշ հատվածներում սկսվել են ճիմակալման և ճահճացման գործընթացներ: Սակայն այս երևույթի իրական մասշտաբը և հետևանքները դեռևս ուսումնասիրված չեն, այստեղ անշուշտ մշտական մոնիթորինգի կարիք կա: Արտեզյան ջրերի նախկին մակարդակի վերականգնմանը նպաստելու, ինչպես նաև ոռոգման խնդիրները լուծելու համար անհրաժեշտ է իրականացնել ճիշտ ջրօգտագործում, այն է՝ ուսումնասիրել փոքր, ֆինանսապես արդարացված ջրամբարների կառուցումը, ներդնել ոռոգման արդյունավետ համակարգ (կաթիլային և այլն): Ուսումնասիրել և ներդնել ժամանակակից տեխնոլոգիաներ՝ կախված եղանակային պայմաններից գնահատելու ոռոգման անհրաժեշտությունը (ջրի նկատմամբ բույսի պահանջը):

30. Ընդերքի օգտագործում. Հանրապետության տարածքում հայտնաբերված են ավելի քան 100 տեսակ օգտակար հանածոներ: Հարուստ մետաղային հենքի վրա ստեղծվել են բազմաթիվ մետալուրգիական վերամշակող ձեռնարկություններ և կոմբինատներ, ինչպիսիք են օրինակ՝ Քաջարանի, Կապանի, Ալավերդու, Ախթալայի,

Արարատի և այլն: Առկա են 19 պոչամբարներ: Լեռնահանքային ձեռնարկություններին հանձնված հողերի ընդհանուր տարածքը կազմում է 11600 հա, որից պոչամբարների տակ են շուրջ 1500 հա: Էքստենսիվ զարգացող լեռնահանքային արդյունաբերությունը զգալի վնաս է հասցնում շրջակա միջավայրին: Բնապահպանական տեսակետից առավել վտանգավոր են համարվում պոչամբարները, որոնցում կուտակվող աղտոտիչների երկարատև և ինտենսիվ ազդեցությունը լանդշաֆտի բաղադրիչների վրա հանգեցնում է դրանց ամբողջական դեստրուկցիային և հետագա էրոզիոն գործընթացների ակտիվացմանը, կենսածին արտադրողականության կորստին: Վերափոխվում են մթնոլորտային օդի հատկությունները և գազային կազմը, տեղի է ունենում արդյունաբերական ծագման թունավոր նյութերով աղտոտում: Կտրտված ռելիեֆի պարագայում վթարային իրավիճակներում կարող են ձևավորվել մի քանի կիլոմետր երկարությամբ աղտոտող արտահոսքեր: Օգտակար հանածոյի արդյունահանման նախագծում պետք է ներառել բնության և շրջակա միջավայրի ազդեցության գնահատականը, այդ թվում՝ բնապահպանական կառավարման պլանը և մշտադիտարկումների ծրագրերը, սոցիալական ազդեցության գնահատականը, հեռացվող հողաշերտի և զուգընթաց արդյունահանվող աղքատ հանքաքարի պահեստավորումն ու պահպանությունը: Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով արգելվում է ընդերքի շահագործումը ազգային անվտանգության ապահովման, մարդկանց կյանքի և առողջության, պատմամշակութային արժեքների, բնության և շրջակա միջավայրի պահպանության տեսանկյունից: Ինչ վերաբերում է տեխնածին հանքավայրերին, ապա դրանք Հայաստանի բացառիկ սեփականությունն են և կարող են օրենքով սահմանված կարգով տրամադրվել շահագործման՝ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով: Դրանց շահագործումը կնպաստի մի շարք բնապահպանական խնդիրների լուծմանը, այդ թվում՝ պոչամբարներում կուտակված թափոնների կրճատմանը: Պոչանքային տնտեսությունների անվտանգ շահագործման հիմնադրույթները ամրագրվել են 2011 թ.-ին մշակված <<Հայաստանի Հանրապետության տարածքի պոչամբարների անվտանգ կառավարում>> ձեռնարկում, որն ամփոփում է պոչամբարների շահագործման նվազագույն պահանջները և կիրառելի է դրանց շահագործման հետ կապված բոլոր կառույցներին՝ պոչամբարներ, ամբարտակներ, պատվարներ, նստեցման և պարզեցման հորեր, ջրահեռացման համակարգեր, խողովակաշարեր և այլն: Հանքարդյունաբերության գործունեությամբ պայմանավորված՝ շրջակա միջավայրի աղտոտվածության ուսումնասիրության խնդիրը սերտորեն կապված է մոնիթորինգային դիտարկումների իրականացման հետ: Սակայն տեխնածին աղտոտված տարածքներում մշտադիտարկումների իրականացումը գտնվում է սաղմնային վիճակում: Մոնիթորինգային տվյալների բացակայությունը բացասաբար է անդրադառնում

Հայաստանի Հանրապետության օրենսդիր, գործադիր իշխանության կողմից համապատասխան որոշումների (պոչամբարների վթարային արտահոսքերի վերացում, հողօգտագործման սահմանափակում, հողի ռեկուլտիվացիա և այլն) կայացմանը: Բացակայում է Հայաստանի Հանրապետության ընդերքի ոլորտի միասնական ազգային քաղաքականության և զարգացման ռազմավարությունը, որը հիմնաքար կծառայեր հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ճկուն ու արդյունավետ գործողությունների ծրագրի մշակման համար:

31. Հողօգտագործում. Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 102-րդ հոդվածում նախատեսված են հողամասի նկատմամբ իրավունքների հարկադիր դադարման հիմքերը: Մասնավորապես՝ գյուղատնտեսական նշանակության հողամասի նկատմամբ իրավունքները հարկադիր դադարում են դատական կարգով՝ երեք տարվա ընթացքում չօգտագործելու դեպքում: Սակայն հիշյալ հոդվածը գործնականում չի կիրառվում՝ դատական, հողամասի նկատմամբ իրավունքների վավերացման և պետական գրանցման հետ կապված ծախսերի պատճառով, մինչդեռ հողը չմշակելը նույնպես բացասաբար է անդրադառնում հողի որակական հատկանիշների վրա և նպաստում հողերի դեգրադացմանը: Նկատի ունենալով, որ վարչական մեթոդների կիրառումը կապված է որոշակի բարդությունների հետ, անհրաժեշտ է կիրառել տվյալ հարցի կարգավորման տնտեսական մեխանիզմներ: Մասնավորապես՝

1) իրականացնել գյուղացիական տնտեսությունների խոշորացման գործընթաց (կոոպերացիա, հողամասերի միավորում), որի արդյունքում խոշորացված գյուղացիական տնտեսություններին Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից պետական աջակցության ծրագրերի իրականացման գործընթացում տրվելու է առաջնություն: Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 26-րդ հոդվածի համաձայն քաղաքացիներն առանց պետական գրանցման կամ հաշվառման իրավունք ունեն զբաղվելու ձեռնարկատիրական գործունեությամբ, եթե գյուղատնտեսական արտադրանք արտադրելու նպատակով կնքել են համատեղ գործունեության պայմանագիր, որի առանձնահատկությունների վերաբերյալ դրույթներ նախատեսված են օրենսգրքի 1038.1-ին հոդվածում:

2) Օրգանական գյուղատնտեսական բարձրարժեք արտադրանքի արտադրության ծավալների ավելացում, ինչը լրացուցիչ երաշխիք է ռեսուրսային ներուժի առավել արդյունավետ օգտագործման և գյուղացիական տնտեսությունների համար արտադրանքի արտահանման ավելացման գործում:

3) Գյուղատնտեսական աշխատանքներում մեքենայացման մակարդակի բարձրացում, ինչը կնպաստի գյուղատնտեսական մթերքների արտադրության

ծավալների մեծացմանը, ձեռքի աշխատանքի տեսակարար կշռի նվազեցմանը, ինչպես նաև ծախսերի կրճատմանը:

4) էկոլոգիապես մաքուր (բնական) ճանապարհով հողի ֆիզիկական, քիմիական և կենսաբանական կազմի բարելավում, ինչպես նաև օրգանական գյուղատնտեսության զարգացում:

5) Հողի մշակման ոլորտում նոր տեխնոլոգիաների և նորամուծությունների ներմուծում և տարածում, որոնք առավել քիչ ծախսատար լինելով կարող են ապահովվել առավել բարձր արդյունք:

6) Գյուղատնտեսությունում օգտագործվող հիմնական ռեսուրսների (պարարտանյութ, դիզելային վառելիք, սերմեր), տեխնիկական միջոցների և ոլորտին տրամադրվող վարկերի ձեռքբերման մատչելիության մակարդակի բարձրացմանն ուղղված պետական աջակցության ծրագրերի իրականացում, ինչը կնպաստի հողային ռեսուրսների օգտագործման մակարդակի բարձրացմանը և հողերի վիճակի բարելավմանը:

32. Անհրաժեշտ է ուսումնասիրել վտանգավոր օդերևութաբանական երևույթները, ինչպես նաև դրանք ձևավորող սինօպտիկական պրոցեսները, դրանց տարածաժամանակային փոփոխությունները կլիմայի գլոբալ փոփոխության պայմաններում, Հայաստանի տարածքում նկատվող անոմալ եղանակային պայմանների հաճախականության մեծացման պատճառները: Նշված նպատակին հասնելու համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալը՝

1) կատարել վտանգավոր օդերևութաբանական երևույթների վիճակագրական վերլուծություն, ուսումնասիրել դրանց ակտիվացման և թուլացման պարբերականությունները.

2) ուսումնասիրել, վերջին 60 տարիների կտրվածքով, մթնոլորտի ընդհանուր շրջանառության փոփոխությունները Հայաստանի տարածքում, որը հնարավորություն կտա պարզել վտանգավոր օդերևութաբանական երևույթների աճի պատճառները.

3) ստեղծել վտանգավոր օդերևութաբանական երևույթները բնութագրող ցուցանիշների տեղեկատվական հենք աշխարհագրական տեղեկատվական համակարգերում (ԱՏՀ).

4) քարտեզագրել վտանգավոր օդերևութաբանական երևույթների բաշխվածության առանձնահատկությունները, ինչպես նաև միջին, նվազագույն և առավելագույն մեծությունները՝ ըստ տարածական և վերընթաց օրինաչափությունների.

5) խմբավորել և կատարել վտանգավոր օդերևութաբանական երևույթները ձևավորող սինօպտիկական պրոցեսների դասակարգում՝ հիմք ընդունելով այդ

պրոցեսների ծագումը, տեղաշարժը և Հայաստանի տարածքի եղանակակլիմայական պայմանների վրա ազդեցության սինօպտիկական առանձնահատկությունները:

33. Նշված աշխատանքների կատարման արդյունքում հնարավոր կլինի պարզել գյուղատնտեսական մշակաբույսերի վրա վտանգավոր օդերևութաբանական երևույթների տարածական և ժամանակային ազդեցության փոփոխությունները, պարզ կդառնան այդ երևույթների աճի պատճառները, տարերային երևույթներ ձևավորող սինօպտիկական պրոցեսների ակտիվացման և թուլացման պարբերականությունները և այդ պրոցեսների դինամիկ փոփոխություններն ու պատճառները: Վտանգավոր օդերևութաբանական երևույթներ ձևավորող սինօպտիկական պրոցեսների դասակարգումը, դրանց վիճակագրական վերլուծությունները, ակտիվացման և թուլացման պարբերականությունների ուսումնասիրությունները զգալիորեն կմեծացնեն այդ երևույթների կանխատեսման հավաստիությունը, որը հնարավորություն կտա էապես կրճատել գյուղատնտեսությանը այդ երևույթներից հասցված վնասի չափերը:

34. Հողերի չեզոք դեգրադացիայի սկզբունքների կիրառում. Հողերի չեզոք դեգրադացիային հասնելու համար տարբերակները բազմաթիվ են: Այդ տարբերակների համադրության համար պետք է հաշվի առնել հողերի դեգրադացիայի տիպը, աստիճանը, ընթացքը, չափը, հողային ռեսուրսների հիմքում ընկած ներուժի և ինքնավերականգնման աստիճանը (բնական հատկություններ) և ազգային հատկանիշների, կարողությունների առաջնահերթությունները, ինչպես նաև հողերի դեգրադացիայի կանխարգելումը, հողային ռեսուրսների կայուն կառավարումն ու դեգրադացված հողերի վերականգնումը: Հողերի դեգրադացիայի կանխարգելմանն ու նվազեցմանը կարելի է հասնել հողօգտագործման պլանավորման և տվյալ վայրում հողերի կայուն կառավարման միջազգային փորձի ներդրման միջոցով՝ հաշվի առնելով հողային ռեսուրսի ներուժը և ինքնավերականգնման հնարավորությունը: Հողերի չեզոք դեգրադացիային հասնելու համար կարևոր նշանակություն ունեն հետևյալ փոխկապակցված գործողությունները.

1) որոշել հողերի չեզոք դեգրադացիայի իրականացման տարածական միավորներն ու ֆունկցիոնալ խմբերը.

2) գնահատել հողերի դեգրադացիայի տիպը, չափը և որոշել դեգրադացիայի աստիճանը՝ հիմք ընդունելով ելակետային տվյալները.

3) որոշել հողերի դեգրադացիայի պատճառներն ու դրանց կանխարգելման, նվազեցման և վերացման եղանակները.

4) մշակել հողերի չեզոք դեգրադացիայի մոնիթորինգի ցուցանիշները.

5) զարգացնել հողերի չեզոք դեգրադացիային առնչվող ինստիտուցիոնալ և տեխնիկական կարողությունները, խրախուսման մեխանիզմները և համագործակցությունը.

6) ապահովել միջոլորտային համագործակցությունը և ֆինանսական ռեսուրսների համապատասխան հոսքը հողերի չեզոք դեգրադացիային հասնելու համար:

35. Կենսաբանական պաշարների օգտագործում. Կենսաբանական պաշարների պահպանության և կայուն օգտագործման տնտեսական մեխանիզմների կատարելագործումը անապատացման դեմ պայքարի գործընթացում սկզբունքային նշանակություն ունի, առանց որի անհնար է ապահովել դրանց կայուն օգտագործումը:

1) Հայաստանի կենսաբանական պաշարների հիմնական բաղկացուցիչ մասը կազմում են անտառները: Համաձայն 2011 թվականին Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) կողմից հեռահար զոնդավորման մեթոդով ստացված տվյալների, Հայաստանի Հանրապետության անտառածածկ տարածքների մակերեսը կազմում է 332.333 հա կամ Հայաստանի ընդհանուր տարածքի մոտ 11.17 %-ը: Անտառային էկոհամակարգերի կողմից տրամադրվող ծառայությունների վրա մարդածին ազդեցության ներկա պայմաններում, անտառների գերշահագործման, անկանոն հատումների իրականացման, արածեցման, խոտհունձի, հողազավթումների և այլ պատճառներով, կրճատվում են արժեքավոր անտառային տարածքները, տեղի են ունենում տեսակային կազմի և կառուցվածքային փոփոխություններ, ծառուտները կորցնում են իրենց բնական վերականգնման ունակությունը և իջնում է դրանց արտադրողականությունը: Ապօրինի անտառհատումների կանխարգելման խնդրում դրական ազդեցություն է ունեցել Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 27-ի N 1535-Ն որոշումը, համաձայն որի անտառամերձ բնակավայրերում բնակվող ընտանիքներին թույլատրվում է մթերել և անվճար ձեռք բերել մինչև 8 խմ թափուկ վառելափայտ: Վերջին տարիներին անտառային զանգվածների հատված տեղամասերում և դրանց հարող տարածքներում նկատվում է էկոհամակարգերի անկայունություն՝ ավելացել են հողմատապալ կամ ձնետապալ տարածքները, հողատարման, ձորակառաջացման, սողանքների, էրոզիոն-սելավային գործընթացների ակտիվացման, աղբյուրների չորացման, փոշու ամպերի գոյացման և այլ երևույթներ, որոնք մեծ վնաս են հասցնում համայնքներին և գյուղատնտեսական նշանակության հողատարածքներին: Անտառային էկոհամակարգերի որակական հատկանիշների փոփոխման հետևանք կարող են դիտվել նաև վնասատուների (հատկապես տերևակեր միջատների) զանգվածային համաճարակները, ինչը պահանջում է անտառպաշպանական հրատապ աշխատանքների իրականացում: Ընդհանուր առմամբ 2003-2013 թթ. ընթացքում անտառային վնասատուների և

հիվանդությունների դեմ ավիացիոն քիմիական պայքարի աշխատանքներն իրականացվել են 76786 հա տարածքում: Ավելացել են անտառային հրդեհների ծավալները: Եթե 2003 թ. գրանցվել են հրդեհներ 3.92 հա անտառային հողերում, ապա 2013 թ.՝ 91.575 հա անտառային հողերում: Անտառային հրդեհների գերակշռող մասի առաջացման հիմնական պատճառը հարակից տարածքների գյուղատնտեսական հողատեսքերի այրումն է: Անտառային հրդեհների դեմ պայքարի միջոցառումների արդյունավետ իրականացմանը խոչընդոտում են բարդ ռելիեֆը, անտառային ճանապարհային ցանցի անմխիթար վիճակը, հրդեհների մարման տեխնիկական սարքավորումների բացակայությունը: Ինչպես հայտնի է անտառային էկոհամակարգերի դեգրադացման աստիճանի գնահատման համար չափանիշներ են հանդիսանում՝ հրդեհից մասնակիորեն կամ ամբողջովին ոչնչացված, վնասատուների և հիվանդությունների պատճառով բնական դիմադրողականությունը կորցրած, չորացող կամ արդեն չորացած անտառը, բնական վերաճի ընդունակությունից զուրկ, հիմնովին ծառահատված անտառային տարածքները, էրոզացված մեծ մակերեսի վրա տեղակայված նոսրուտները: Գրեթե բոլոր այդ չափանիշները բնութագրում են Հայաստանի անտառային էկոհամակարգերի ներկա վիճակը, որի շտկումը պահանջում է երկարաժամկետ և հետևողական, բազմակողմանի, կշռադատված և ֆինանսատար աշխատանքների ճիշտ պլանավորում և իրականացում:

2) Կենսաբանական պաշարներից իրենց ուրույն նշանակությունն ունեն արդյունագործական ձկնատեսակները, որոնք հիմնականում կենտրոնացված են Սևանա լճում: Հիմնական արդյունագործական ձկան՝ սիգի, պաշարները խզված են: Վերջին տասնամյակներում շարունակվում է արդյունագործական ձկների քանակական ցուցանիշների նվազման միտումը: Աննշան աճ է գրանցվել 2013 թ.-ին, ինչը 2011-2012 թթ. լճում սիգի բեղուն սերնդի հայտնվելու և ձկների պոպուլյացիայի նոսրացման հետևանքով մարդածին ծանրաբեռնվածության նվազման հետևանք է: Ներկայումս արդյունագործական պաշարները գտնվում են նվազագույն շեմի վրա: Սևանա լճում լայն տարածում գտած հաջորդ արդյունագործական հիդրոբիոնտը գետի երկարաչանչ խեցգետինն է (Pontastacus Leptodactylus Eschscholtz): Վերջինս Սևանա լիճ է ներթափանցել 1980-ական թվականներին՝ պատահական ինտրադուկցիայի արդյունքում: Զբաղեցնելով ազատ էկոլոգիական խորշ, աստիճանաբար հարմարվելով միջավայրի նոր պայմաններին, երկարաչանչ խեցգետինը քանակական զարգացում ապրեց և իր վրա վերցրեց օրգանական տիղմի յուրացման հիմնական դերը: Լճում ձկնային պաշարների կրճատման արդյունքում հիմնական մարդածին ծանրաբեռնվածությունն ընկել է այս հիդրոբիոնտի վրա: 2005 թ.-ից մինչև 2013 թ. խեցգետնի արդյունագործական պաշարները կրճատվել են, սակայն 2013 թ. գրանցվել է նրա քանակի կտրուկ աճ:

3) Հայաստանի հարուստ ագրոկենսաբազմազանությունը, ունենալով էկոհամակարգերի կայունությունը և կենսացենոզների ամբողջականությունն ապահովող բարձր հատկանիշներ, միաժամանակ հանդիսանում է երկրի տնտեսական զարգացման նախապայմանը: Երկրում գոյություն ունեցող վայրի օգտակար բույսերից և կենդանիների էնդեմիկ ցեղերի ներկայացուցիչներից կախման մեջ են գտնվում գուղատնտեսության այնպիսի բնագավառներ, ինչպիսիք են բուսաբուծությունը, անասնաբուծությունը, մեղվաբուծությունը, ձկնաբուծությունը, ինչպես նաև թեթև և սննդարդյունաբերության որոշ կարևոր բնագավառները: Անգնահատելի է ագրոկենսաբազմազանության դերը էկոհամակարգային ծառայությունների քանակական և որակական հատկանիշների պահպանման գործում, հատկապես՝ մշակաբույսերի և ընտանի կենդանիների գենոֆոնդի պահպանության, սելեկցիայի, դեղամիջոցների ստացման և կենսատեխնոլոգիաների միջոցով նոր նյութերի արտադրման համար՝ որպես բնակչության կենսապահովման նախապայման:

4) Կենսաբանական պաշարների պահպանության և արդյունավետ օգտագործման հիմնախնդիրների լուծումը տրված է <<Հայաստանի կենսաբազմազանության ռազմավարություն և գործողությունների ազգային ծրագիր>> փաստաթղթում:

36. Ռեկրեացիոն ինդուստրիա. Ռեկրեացիոն ինդուստրիայի տարբեր գործառույթների տարածա-ժամանակային գիտական հիմնավորվածությամբ պլանավորումը, բնական համակարգերի կայունության աստիճանների թույլատրելի ծանրաբեռնվածության և տարողունակության նորմերի սահմանումը անապատացման գործընթացների կանխարգելման և ազդեցության մեղմացման կարևոր գործոններ են:

1) Ռեկրեացիոն ինդուստրիան պայմանավորված է բնօգտագործման, արդյունաբերության, գյուղատնտեսության, տրանսպորտի, կապի, առևտրի և մշակույթի զարգացման աստիճաններով և միաժամանակ նախադրյալներ է ստեղծում այդ ճյուղերի հետագա զարգացման ու մասնագիտացման համար, կարգավորում է դրանց ներճյուղային հարաբերությունները: Ռեկրեացիոն ինդուստրիայի զարգացումը կնպաստի ոչ միայն տնտեսական շահութաբերության աճին, այլև նոր աշխատատեղերի ստեղծմանը: Այն կխթանի նաև՝

ա. բնակչության կենցաղային, կրթական ու գեղագիտական մակարդակների բարձրացմանը, մշակույթի նոր օջախների, ազգային արվեստի շատ ձևերի զարգացմանը.

բ. հանրապետության տրանսպորտի և ենթակառուցվածքների այլ բնագավառների արագ զարգացմանը.

գ. արտադրական ոլորտ չընդգրկված տարածքների օգտագործմանը և հատկապես բարձր լեռնային լքված գյուղերի բնակեցմանը, որպես զբոսաշրջության սպասարկման կենտրոններ.

դ. հանրապետությունում ոչ արտադրական ճյուղերի և առևտրի ու սպասարկման այլ ծառայությունների լայն ցանցի ստեղծմանը.

ե. հայկական հնագույն ազգային արհեստների ու տնայնագործության աշխուժացմանը.

զ. գյուղատնտեսության բարելավմանը և ջերմոցային տնտեսությունների լայն ցանցի ստեղծմանը:

2) Ռեկրեացիայի և նրան սպասարկող հարակից ճյուղերի զարգացումն ունի մեծ նշանակություն բնակչության նյութական և բարոյահոգեկան կենսամակարդակների բարձրացման, էկոնոմիկայի աշխուժացման, ազգային եկամուտի մեծացման, տարբեր շրջանների զարգացման մակարդակների հավասարեցման հիմնախնդիրների լուծման գործում՝ վերջնական արդյունքում նպաստելով անապատացման մարդածին գործոնների ազդեցության զգալի նվազմանը: Այս առումով, ռեկրեացիայի զարգացմանը նպաստելու համար անհրաժեշտ է.

ա. իրականացնել Հայաստանի ռեկրեացիոն ռեսուրսների կադաստրավորման ուսումնասիրություններ՝ հաշվի առնելով բուսական և կենդանական համակեցությունների խոցելիությունը.

բ. սահմանել լանդշաֆտային տարբեր գոտիներում ռեկրեացիայի զարգացման չափանիշները.

գ. գնահատել ԲՀՊՏ-ների և խախտված էկոհամակարգերի վրա ռեկրեացիոն գործունեության ազդեցությունը և սահմանել այդ տարածքներում ռեկրեացիայի զարգացման չափանիշները.

դ. մշակել ռեկրեացիոն զարգացման կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրեր:

37. ԲՀՊՏ-ների օգտագործում. ԲՀՊՏ-ների արդյունավետ կառավարումն ապահովելու համար նախ անհրաժեշտ է լուծել տարածքների պահպանության կայուն և նպատակային ֆինանսավորման հարցը: ԲՀՊՏ-ների երկարաժամկետ կառավարումն ավելի շատ ծախսեր է պահանջում, քան եկամտի հնարավորություններ տալիս և հնարավոր շահույթների ստացումը առավել կենտրոնացած է տեղի բնակիչների վրա: ԲՀՊՏ-ները պետք է նպաստեն համայնքային զարգացման ծրագրերի իրականացմանը՝ շեշտը դնելով ազգաբնակչության կենսապայմանների բարելավման վրա, ինչը կարող է դրական վերաբերմունք ձևավորել ԲՀՊՏ-ների պահպանության նկատմամբ: Այդ ծրագրերի հաջողությունը հիմնականում պայմանավորված է առկա ֆինանսական

միջոցներով (պետական աջակցություն, դոնոր կազմակերպություններ), ինչպես նաև ակտիվ, շահագրգռված մարդկանցով, ովքեր ցանկություն կունենան ներդրում կատարելու: Պոտենցիալ շահույթները մեծ չափով կախված կլինեն առանձին իրավիճակներից և զարգացումներից: Հետևաբար, յուրաքանչյուր ԲՀՊՏ-ի համար պետք է գնահատվեն շահույթ ստանալու իրատեսական հնարավորությունները: ԲՀՊՏ-ների արդյունավետ կառավարումից հնարավոր է ձեռք բերել տնտեսական շահույթներ, որոնք կարող են լինել ուղղակի կամ անուղղակի, մշտական կամ միանգամյա: Որպես տնտեսական շահույթի ստացման օրինակներ կարող են հանդիսանալ զբոսաշրջության և կանոնակարգված ռեկրեացիայի կազմակերպումը: Հարկ է նշել, որ Հայաստանի ԲՀՊՏ-ների կայուն և շարունակաբար աճող ֆինանսավորումը զգալիորեն պայմանավորված է ԲՀՊՏ-ների կառավարումն իրականացնող կազմակերպությունների աշխատակիցների մասնագիտական պատրաստվածությամբ և իրենց գործառույթների իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական զինվածությամբ: ԲՀՊՏ-ների օգտագործման տնտեսական մեխանիզմների կատարելագործման ուղղությունները տրված են <<Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարություն, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիր>> փաստաթղթում (Հայաստանի Հանրապետության կառավարության 25-ը սեպտեմբերի 2014 թվականի, N 1059-Ա որոշում):

38. Անապատացման դեմ պայքարում գիտական աշխատանքների ընդլայնում և մոնիթորինգի համակարգի կատարելագործում

1) Անապատացման դեմ պայքարում գիտական աշխատանքների ընդլայնումը և մոնիթորինգի համակարգի կատարելագործումը համապատասխանում է ՄԱԿ-ի <<Անապատացման դեմ պայքարի>> կոնվենցիայի 10–ամյա ռազմավարության 3-րդ օպերատիվ նպատակին, որը նախատեսում է գիտատեխնիկական գիտելիքների կիրառմամբ ստեղծել մոնիթորինգի զարգացման հենք և վերլուծել էկոհամակարգերի գործառույթների ու կառուցվածքի վրա ազդեցության միտումները:

2) Անապատացման պատճառները և դրա դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանն ուղղված գիտական հետազոտությունների արդյունքներն այն կարևոր նախադրյալներն են, որոնք հիմք են հանդիսանում անապատացման գործոնների ազդեցության կանխարգելմանը կամ մեղմացմանը նպատակաուղղված պետական քաղաքականության ձևավորման և գործողությունների իրականացման համար: Անհրաժեշտ գիտական համալիր ուսումնասիրությունները պահանջում են նշանակալից կապիտալ ներդրումներ, առաջավոր մեթոդների և տեխնիկական միջոցների կիրառում, բնության պահպանության հարցերին լուրջ մոտեցում, էկոլոգիական իրադրության բարելավում և հնարավոր բացասական երևույթների գիտական կանխագուշակում: Ընդ

որում՝ գիտահետազոտական աշխատանքների հիմնական ուղղությունները Հայաստանում ներկայումս ձևավորված են և կուտակված է բավական արժեքավոր փորձ: Այդ տեսակետից հանրապետությունում անապատացման երևույթների բացահայտման, շրջակա միջավայրի բաղադրիչների վիճակի մոնիթորինգի ուղղությամբ կատարված ուսումնասիրությունները ավանդական բնույթ են ձեռք բերել: Դրանք իրականացվել և իրականացվում են Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայում, մի շարք նախարարություններում (Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության, բնապահպանության, գյուղատնտեսության, էներգետիկայի և բնական պաշարների), գիտական կազմակերպություններում և բարձրագույն ուսումնական հաստատություններում: Անապատացման հիմնախնդիրներին նվիրված դասընթացներ են ներդրվել Երևանի պետական համալսարանում և Հայկական պետական մանկավարժական համալսարանում, հայրենական և արտասահմանյան ամսագրերում հրատարակվել են տասնյակ գիտական հոդվածներ, մենագրություն, պաշտպանվել են թեկնածուական և մագիստրոսական թեզեր:

3) Հանրապետությունում, անապատացման դեմ պայքարի տեսակետից, բնական պաշարների պահպանությանը և արդյունավետ օգտագործմանը վերաբերող գիտական ուսումնասիրությունների գերակայող ուղղություններ կարող են հանդիսանալ՝

ա. տարբեր լանդշաֆտների դինամիկայի քանակական և որակական ցուցանիշների և դրանց վրա մարդու տնտեսական գործունեության ազդեցության բացահայտումը.

բ. շրջակա միջավայրի վրա մարդածին ծանրաբեռնվածության կարգավորման ռազմավարության մշակումը.

գ. մարդածին բիոգեոցենոզների վիճակի էկոլոգիական մոնիթորինգի նոր մեթոդների մշակումը.

դ. երաշտի գնահատման և կանխատեսման նոր համակարգի մշակումը և ներդրումը.

ե. երկրագործության համակարգի կատարելագործումը.

զ. ոռոգելի հողերի երկրորդային աղակալման կանխարգելումը.

է. ագրոանտառմելիորատիվ միջոցառումների մշակումը և ներդրումը.

ը. արոտավայրերի բարելավումը.

թ. լեռնալանջերի արդյունավետ գյուղատնտեսական օգտագործման ուղիների մշակումը.

ժ. կենսաբազմազանության պահպանությունը և կայուն օգտագործումը:

4) Հանրապետությունում անապատացման հիմնախնդիրներին առայժմ բավարար ուշադրություն չեն դարձնում տնտեսագիտությունը, սոցիոլոգիան, տեխնիկական,

քիմիական, երկրաբանական գիտությունները, որոնց խնդիրները պետք է հանդիսանան՝ էկոլոգիական մոդելավորումը, համակարգված վերլուծությունը և անապատացման գործընթացների կանխագուշակումը, անապատացման դեմ պայքարի կոնկրետ ձևերի ու մեթոդների մշակումը: Առանձնակի նշանակություն ունեն սոցիալ-տնտեսական բնույթի ուսումնասիրությունները, որոնք պետք է ցույց տան արտադրողական ուժերի զարգացման, գյուղատնտեսության պատմականորեն ձևավորված ավանդույթների պահպանության և կատարելագործման ուղիները: Անապատացման հիմնախնդիրներն ընդգրկող գիտահետազոտական աշխատանքների իրականացման, արդյունավետության և կիրառական նշանակության բարձրացման գործում կարևոր է պետության ունեցած դերը, որի առաջնահերթ խնդիրներն են՝

ա. տարածքային և միջազգային մակարդակներով համագործակցության խորացումը և համակարգումը՝ առավել ուշադրություն դարձնելով ֆինանսական, մարդկային, կազմակերպչական և տեխնիկական ռեսուրսների հայթհայթմանը.

բ. ամրապնդել կենսաբանական, հողագիտական, գյուղատնտեսական, հիդրոլոգիական, օդերևութաբանական ազգային կենտրոնները.

գ. խրախուսել ժամանակակից տեխնոլոգիաների ձեռք բերման ու հարմարեցման աշխատանքները.

դ. առաջնայնությունը տալ այն գիտական հետազոտությունների թեմաներին, որոնք առնչվում են <<Կենսաբազմազանության մասին>>, <<Կլիմայի փոփոխության մասին>> և <<Անապատացման դեմ պայքարի>> ՄԱԿ-ի կոնվենցիաներին.

ե. ապահովել «Գլոբալ տաքացման» թեմատիկայով համատեղ գիտական ծրագրերի իրականացումը, որը հնարավորություն կտա երկկողմ և բազմակողմ միջազգային համագործակցության շրջանակներում ներառել բնապահպանական կոնվենցիաներով երկրի ստանձնած պարտավորությունների կատարմանը, ինչպես նաև կոլաբորատորների ձեռք բերմանը:

5) Անապատացման տարածաժամանակային պատկերումը, ինտեգրալ տարածական մոդելների ստացումը, տեղեկատվական բազայի կազմումը հնարավոր է աշխարհագրական տեղեկատվական համակարգերի ներդրման միջոցով: Էկոլոգիական մոնիթորինգի նոր մեթոդի մշակման ժամանակ անհրաժեշտ է մեծ տեղ հատկացնել հեռազննման տվյալների կիրառմանը, որոնք արիդ և սեմիարիդ շրջանների երաշտների համար կարող են ապահովել օպերատիվ մոնիթորինգ և կանխատեսում: Անապատացման դեմ պայքարում մոնիթորինգի համակարգի կատարելագործման հարցում առաջնահերթ նշանակություն ունի հողերի մոնիթորինգի արդյունավետ կազմակերպումն ու իրականացումը, որի կարևոր բաղադրիչներն են.

ա. հավատարմագրված լաբորատորիաների կողմից հողերի մոնիթորինգի լաբորատոր հետազոտությունների իրականացումը.

բ. հողերի մոնիթորինգի կազմակերպումը հողերի պահպանության և օգտագործման բնագավառում լիազոր պետական կառավարման մարմնի կողմից՝ համակագործակցելով տարածքային կառավարման մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունն այս բնագավառում.

գ. հողերի մոնիթորինգի իրականացումը հողերը քիմիական և ռադիոակտիվ նյութերով աղտոտվածության, հողատարման, ողողման, ճահճացման, աղակալման, սողանքների և հողի վիճակը վատթարացնող այլ ազդեցությունների նկատմամբ.

դ. հողերի մոնիթորինգի վերաբերյալ ստացված տվյալների և ամփոփ տեղեկատվության մուտքագրումը լիազոր պետական մարմնի կողմից վարվող հողերի մոնիթորինգի տեղեկատվական տվյալների շտեմարանում, որը հանդիսանում է բնապահպանական տեղեկատվության միասնական շտեմարանի բաղկացուցիչ մասը.

ե. հողերի մոնիթորինգի տվյալների մատչելիության ապահովումը:

39. Անապատացման խնդիրներին ուղղված կրթության համակարգի կատարելագործում

1) Անապատացման դեմ պայքարում կրթության համակարգի կատարելագործումը համապատասխանում է <<Անապատացման դեմ պայքարի>> կոնվենցիայի 10–ամյա ռազմավարության 3-րդ օպերատիվ նպատակին, մասնավորապես՝ միջազգային և տեղական մակարդակով անապատացման երևույթներին առընչվող գիտելիքների բացահայտում և դրանց օգտագործման համար հասանելիության կապի ուժեղացում:

2) Հայաստանի կրթության ոլորտում դեռևս առկա են որոշ թերություններ և բացթողումներ՝ <<Կրթություն հանուն կայուն զարգացման>> միջազգային գործընթացին ինտեգրվելու և տեղական մակարդակով գործողություններ իրականացնելու համար: Այդպիսի թերություններից են՝

ա. Հիմնական դպրոցի <<Կենսաբանություն>> և <<Աշխարհագրություն>> առարկաների ուսումնական ծրագրերում քիչ ժամանակ է հատկացված (միայն 9-րդ դասարանի <<Կենսաբանություն>> առարկայի ծրագրում՝ 1 ժամ) <<Կենսաբազմազանության մասին>>, <<Կլիմայի փոփոխության մասին>> և <<Անապատացման դեմ պայքարի>> ՄԱԿ-ի կոնվենցիաներին առնչվող թեմաներին, ինչը խոչընդոտում է լիարժեք բնապահպանական կրթության և դաստիարակության իրականացմանը.

բ. անբավարար է դասավանդման ժամանակակից մեթոդներով զինված կլիմայագետ և ագրոէկոլոգ մասնագիտական կադրերի քանակը.

գ. կրթության և դաստիարակության իրականացման համար անբավարար են անհրաժեշտ նյութական, կազմակերպչական, ֆինանսական հնարավորությունները.

դ. բնապահպանական հիմնահարցերի արդյունավետ իրազեկման համար անբավարար է մասնագետների վերապատրաստման գործընթացը:

3) Այս ամենը խոչընդոտում են սովորողների համակարգված գիտական աշխարհայացքի ձևավորմանը և արդի բնապահպանական հարցերի ճիշտ ընկալմանը: Անապատացման խնդիրներին ուղղված կրթության համակարգի կատարելագործման ուղղություններից է բնապահպանական և կրթական քաղաքականության ներդաշնակ զարգացումը: Սույն գործընթացը ենթադրում է ֆորմալ և ոչ ֆորմալ կրթություն իրականացնելիս կայուն զարգացման բնապահպանական առանցքային թեմաների ներմուծում կրթության համակրգի բոլոր մակարդակներ:

4) Վերոնշյալ գործընթացը կարող է ապահովվել նաև բնապահպանության և կրթության ոլորտների պետական և տարածքային կառավարման, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների վերանայման շնորհիվ: Անհրաժեշտ է նաև խորացնել համագործակցությունը <<Էկոլոգիական կրթության>> ու <<Կրթություն հանուն կայուն զարգացման>> միջգերատեսչական համակարգող հանձնաժողովների և հասարակական կազմակերպությունների միջև: Նշված խնդիրների լուծումը նպատակաուղղված է՝

ա. բնապահպանության և կրթության ոլորտների պետական և տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների կրկնությունների բացառմանը.

բ. կադրերի ճիշտ ընտրությանը.

գ. հասարակական կազմակերպությունների կրթական գործունեության խրախուսման նոր մեխանիզմների ներդրմանը.

դ. բակալավրիատ-մագիստրատուրա-դոկտորանտուրա՝ եռաստիճան ուսուցման համակարգի ուսումնական պլանների, ուսումնական և մեթոդական ձեռնարկների, դասագրքերի և կրթական այլ փաստաթղթերի վերանայման և ստանդարտացման գործընթացի իրականացմանը.

ե. ագրոէկոլոգ և կլիմայագետ մասնագետների պատրաստման գործընթացի որակական և քանակական ցուցանիշների համապատասխանեցմանը հանրապետության սոցիալ-տնտեսական պահանջներին.

զ. կրթական գործընթացն իրականացնող սուբյեկտների ծրագրային, մեթոդական, կադրային և տեղեկատվական հագեցվածության բարելավմանը, գործունեության թափանցիկության և ունկնդիրների հետաքրքրությունների ապահովմանը.

է. կրթական համակարգի երրորդ աստիճանի ուսումնագիտական գործընթացի օպտիմալացմանը՝ ներգրավելով առաջատար բարձրագույն ուսումնական

հաստատությունների լաբորատոր փորձարարական հնարավորությունները և կադրային ներուժը.

ը. կրթական համակարգի բոլոր մակարդակներում անապատացման, կլիմայի փոփոխության և կենսաբազմազանության պահպանության հարցերի գիտամեթոդական ապահովմանը, տեղեկատվական բազաների ստեղծմանը.

թ. գրադարանների փոխկապակցված ցանցի ստեղծմանը:

5) Նշված գործողությունների արդյունավետությանը զգալիորեն կնպաստի շրջակա միջավայրի վերաբերյալ համապատասխան գիտելիքների տարածման գործընթացների ակտիվացումը, որի համար անհրաժեշտ է.

ա. ստեղծել <<Կրթություն հանուն կայուն զարգացման>> ռազմավարության բնապահպանական առանցքային թեմաներով ուսումնական նյութեր և ձեռնարկներ.

բ. կրթության տարբեր մակարդակների համար պատրաստել <<Կենսաբազմազանության մասին>>, <<Կլիմայի փոփոխության մասին>> և <<Անապատացման դեմ պայքարի>> ՄԱԿ-ի կոնվենցիաների վերաբերյալ ինտերակտիվ խաղերի, բուկլետների, գովազդային հոլովակների և այլ հանրամատչելի կրթադաստիարակչական ու տեղեկատվական նյութեր.

գ. ներառել նշված կոնվենցիաներին առնչվող թեմաները մասնագիտական կրթության տարբեր օղակների դասընթացներում:

40. Հասարակության իրազեկության և գործողություններին մասնակցության ապահովում

1) Հասարակության իրազեկության և գործողություններին մասնակցության ապահովումը համապատասխանում է <<Անապատացման դեմ պայքարի>> կոնվենցիայի 10–ամյա ռազմավարության 1-ին օպերատիվ նպատակին, որը ենթադրում է հողերի դեգրադացիայի վերաբերյալ համապետական և տեղական մակարդակներով քարոզչական, տեղեկատվական և լուսավորչական (ռազմավարության հիմնական հասկացությունների, կոնվենցիայի դրույթների և այլնի մասին) աշխատանքների իրականացում՝ նպատակային խմբերի որոշման և համախմբման եղանակով և օգտագործելով զանգվածային լրատվության ու հեռահաղորդակցման միջոցները: Նպատակն է անապատացման դեմ պայքարին ուղղված որոշումների կայացման վերաբերյալ հասարակությունից ստանալ անհրաժեշտ կարծիքներ:

2) Հայաստանի էկոհամակարգերում ստեղծված իրավիճակը թելադրում է, որ էկոլոգիական մտածելակերպը ներկայումս սկզբունքային բեկման անհրաժեշտություն ունի: Չնայած բնապահպանական օրենսդրության կայացման հարցում հանրապետությունը մեծ առաջընթաց ունի, սակայն իրական կյանքում այն կարող է

գործել միայն համընդհանուր էկոլոգիական կրթության և դաստիարակության գործող համակարգի առկայությամբ:

3) Հայաստանում անապատացման դեմ պայքարի գործողությունների արդյունավետությունը նախ և առաջ պայմանավորված է անապատացման դրսևորման հիմնական ձևերի, դրանց խթանող բնական, տնտեսական և սոցիալական պատճառների, ինչպես նաև բնապահպանական օրենսդրության մասին բնակչության իրազեկությամբ: Դրանով կապահովվի հասարակության կողմից շրջակա միջավայրում տեղի ունեցող գործընթացների հետևանքների ընկալումը, որը թույլ կտա բնակչությանը գիտակցորեն ներգրավվել բնապահպանական հիմնախնդիրների լուծման աշխատանքներին: Դրա համար անհրաժեշտ է՝

ա. որոշել շահառու/թիրախային խմբերը՝ հիմք ընդունելով անապատացման երևույթների դրսևորման տարածքներում տեղական ինքնակառավարման մարմինների, համայնքների բնակչության, ձեռնարկատերերի, հասարակական կազմակերպությունների անապատացման վերաբերյալ գիտելիքների և կարիքների գնահատման արդյունքները.

բ. յուրաքանչյուր խմբի համար մշակել գործունեության համապատասխան հայեցակարգ.

գ. ընտրել կամ մշակել հաղորդակցության մեթոդներ, որոնց կիրառումը կենթադրի շահագրգիռ կողմերի մասնակցության մեծ շրջանակ, որտեղ կնշվեն յուրաքանչյուր սուբեկտի գործողությունները և պարտավորությունները, հնարավորություն կտան ավելի թափանցիկ դարձնել թիրախային խմբերին հասցեագրված քարոզչությունը:

4) Անհրաժեշտ է ստեղծել նաև տեղեկատվական միասնական համակարգ, որը պետական մարմիններին հնարավորություն կտա հասարակության տարբեր շերտերից հարցումների միջոցով հավաքագրել էկոլոգիական տեղեկատվությունը, վերլուծել այն և հետո տրամադրել հասարակությանը՝ ապահովելով հասարակության տարբեր շերտերի մասնակցությունը որոշումների կայացմանը: Արդյունքում՝ շահառուները տեղեկացված կլինեն անապատացման միջազգային, տարածաշրջանային և տեղական հիմնախնդիրներին, ինչպես նաև հնարավոր սիներգիզմին՝ կլիմայի փոփոխության հետևանքների մեղմանն ուղղված կենսաբազմազանության հարմարվողականության միջոցառումներին: Տեղեկատվական միասնական համակարգի ձևավորումը և կառավարումը ենթադրում է տեղեկատվության և մոնիթորինգի ցուցանիշների սահմանում, դրանց իրականացման տարեկան և երկարաժամկետ հասցեական ծրագրերի կազմում: Այդ առումով նպատակահարմար է Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կայքում ստեղծել <<Հայաստանում անապատացման դեմ պայքարի>> նոր էջ: Անհրաժեշտ է, որ տվյալների համակարգի

բովանդակությունը համահունչ լինի Եվրոպական բնապահպանական գործակալության տեխնիկական օժանդակությամբ Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության և բնապահպանության նախարարության համատեղ ղեկավարությամբ իրականացվող <<Բնապահպանական միասնական տեղեկատվական համակարգ-Հայաստան>> ծրագրի պահանջներին և բովանդակությանը:

41. Ռիո-յի կոնվենցիաների շրջանակներում համատեղ գործողությունների իրականացում

1) Ռիո-յի կոնվենցիաների շրջանակներում համատեղ գործողությունների իրականացումը համապատասխանում է <<Անապատացման դեմ պայքարի>> կոնվենցիայի 10–ամյա ռազմավարության 3-րդ օպերատիվ նպատակին՝ կոնվենցիաների շրջանակներում գործողությունների համաձայնեցմանը և համակարգմանը: Այն համապատասխանում է նաև 4-րդ օպերատիվ նպատակին՝ Ռիոյի երեք և այլ համապատասխան կոնվենցիաների միջև սիներգիկ կապերի բացահայտմամբ նպաստել հողերի դեգրադացիայի և երաշտի հետևանքների մեղմացման գործընթացներում կարողությունների հզորացմանը:

2) Հայաստանի Հանրապետությունը ներկայումս անդամակցում է բազմաթիվ կոնվենցիաների, որոնց շրջանակներում իրականացվող համատեղ ծրագրերը հնարավորություն կտան խուսափելու այնպիսի կրկնություններից, ինչպիսիք են՝

ա. օրենսդրության կատարելագործումը.

բ. ուսումասիրությունների կառավարումը.

գ. մոնիթորինգի կատարելագործումը.

դ. շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը.

ե. հասարակության տեղեկատվության աստիճանի բարձրացումը.

զ. կադրերի պատրաստումը.

է. վաղ նախազգուշացման և արագ արձագանքման համակարգի զարգացումը:

3) Վերլուծելով Հայաստանի կողմից ստանձնած բնապահպանական նշանակության միջազգային պարտավորությունները՝ ակնհայտ է դառնում դրանց փոխկապակցվածությունը և միմյանց լրացնելը, որը հնարավորություն է տալիս երկկողմ և բազմակողմ գործողությունների համակարգված իրականացման համար: Նման մոտեցումը կնպաստի ոչ միայն անապատացման դեմ պայքարի արդյունավետությանը և դրան ուղղված միջոցների խնայողությանը, այլև միջազգային համագործակցության ընդարձակման համար բարենպաստ պայմանների ապահովմանը: Դրան հասնելու համար անհրաժեշտ է բացահայտել Հայաստանում Ռիո-յի կոնվենցիաների միջև առկա սիներգիկ կապերը և մշակել համատեղ գործողությունների իրականացման ծրագիր:

42. Միջազգային համագործակցության իրականացում

1) Միջազգային համագործակցությունը համապատասխանում է <<Անապատացման դեմ պայքարի>> կոնվենցիայի 10–ամյա ռազմավարության 5-րդ օպերատիվ նպատակին, որով կոչ է արվում երկրներին <<ազգային, երկկողմ և բազմակողմ մակարդակներում համախմբել ֆինանսական և տեխնոլոգիական ռեսուրսները՝ օգտագործելով դրանք ավելի հասցեավորված ու համակարգված>>, որի դեպքում անհրաժեշտ է ներառել բոլոր առկա աղբյուրները և ֆինանսավորման պայմանները, որոնք պետք է ներդաշնակ լինեն միջոլորտային հարաբերություններին:

2) Հայաստանի աշխարհագրական դիրքը պայմանավորում է նրա քաղաքական, տնտեսական և բնապահպանական հիմնախնդիրները, որոնք անապատացման գործընթացների զարգացման և խորացման հարցում ունեն հավասարարժեք նշանակություն: Այդ տեսակետից անապատացման դեմ պայքարին նպատակաուղղված գործողությունները անհնար է լիարժեք իրականացնել առանց բազմակողմանի միջազգային համագործակցության: Միջազգային համագործակցության կարևորությունը ամրագրված է նաև ՄԱԿ-ի <<Անապատացման դեմ պայքարի>> կոնվենցիայի հոդվածներ 11-12-ում, որպես կոնվենցիայի դրույթների իրականացման համար բարենպաստ միջազգային իրադրություն ապահովող գործոն:

43. Անապատացման դեմ պայքարի ռազմավարության առաջնահերթությունները

1) Հաշվի առնելով Հայաստանում անապատացման դեմ պայքարի ռազմավարության խնդիրները, ինչպես նաև սույն փաստաթղթում կատարված վերլուծությունները, որպես ռազմավարական առաջնահերթություններ, կարելի է ընդունել հետևյալները.

ա. անապատացման հիմնախնդիրներին առնչվող օրենսդրության կատարելագործում.

բ. հողերի կառավարման արդյունավետության բարձրացում.

գ. անապատացման հիմնախնդիրների և դրանց լուծման վերաբերյալ հասարակության իրազեկության բարձրացում.

դ. համատեղ գործողություններ Ռիո-յի Կոնվենցիաների շրջանակներում և միջազգային համագործակցություն:

VII. ԱՆԱՊԱՏԱՑՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ 2015-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ

44. Գործողությունների ծրագրի նպատակը. Անապատացման դեմ պայքարի 2015-2020 թթ. գործողությունների ազգային ծրագրի (աղյուսակ 12) նպատակն է ապահովել այս բնագավառում ռազմավարական խնդիրների իրականացմանը նպաստող իրատեսական գործողությունների և դրանց կատարման համար բանական ժամկետների սահմանումը՝ հիմք ընդունելով ՄԱԿ-ի <<Անապատացման դեմ պայքարի>> կոնվենցիայի Կողմ երկրների 8-րդ Կոնֆերանսում ընդունված 10-ամյա ռազմավարական ծրագիրը:

45. Գործողությունների ծրագրի բովանդակությունը. Սույն ծրագիրն ընդգրկում է միջոցառումների չորս խումբ, որոնք համապատասխանում են վերը նշված ռազմավարական առաջնահերթություններին: Յուրաքանչյուր գործողության համար նշվում են նպատակները, կատարողները, կատարման ժամկետները, ֆինանսական ապահովումը և ակնկալվող արդյունքը:

46. Գործողությունների ծրագրի իրականացման ֆինանսավորման աղբյուրները

1) Հայաստանում անապատացման դեմ պայքարի գործողությունների ազգային ծրագրի ֆինանսավորման աղբյուրներ կարող են հանդիսանալ.

ա. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեն.

բ. ազգային մակարդակով գործարարների, հիմնադրամների, ոչ կառավարական և այլ կազմակերպությունների ներդրումները.

գ. միջազգային աղբյուրները:

2) Ծրագրի իրականացումը կարող է կազմակերպվել ինչպես վերը նշված ֆինանսավորման առանձին աղբյուրների, այնպես էլ դրանց համատեղման հաշվին:

47. Գործողությունների ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքները. Սույն ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքները գլոբալ առումով վերաբերվում են հետևյալներին.

1) համապատասխան օրենսդրության կատարելագործմանը.

2) հողերի կառավարման արդյունավետության բարձրացմանը.

3) անապատացման հիմնախնդիրների և դրանց լուծման վերաբերյալ հասարակության իրազեկության բարձրացմանը.

4) Ռիո-յի կոնվենցիաների շրջանակներում համատեղ գործողությունների արդյունավետության բարձրացմանը և միջազգային համագործակցության ընդլայնմանը:

48. Գործողությունների ծրագրի իրականացման ռիսկերը. Սույն ծրագրի իրականացման արդյունավետությունը պայմանավորված է մի շարք հնարավոր ռիսկային գործոնների մեղմացումով կամ կանխարգելումով: Ռիսկային գործոնները, դրանց հնարավոր հետևանքերը և կանխարգելմանն ուղղված անհրաժեշտ գործողությունները բերված են աղյուսակ 13-ում:

Աղյուսակ 13

Ծրագրի իրականացման ռիսկային գործոնները, հետևանքները և դրանց մեղմացմանը կամ կանխարգելմանն ուղղված անհրաժեշտ գործողությունները

հ/հ	**Ռիսկը**	**Հետևանքը**	**Մեղմացման կամ կանխարգելման գործողությունը**	**Գործողության պատասխանատուն**
1.	Ֆինանսավորման բացակայություն	Ծրագիրը չի իրականացվում	**ա/** Պետական բյուջեում համապատասխան ծախսերի նախատեսում. **բ/** Դոնորների հետ բանակցային գործընթացներ.	ՀՀ բնապահպանության նախարարություն. ՀՀ ֆինանսների նախարարություն.
2.	Գործողությունների ազգային ծրագրի վերաբերյալ շահագրգիռ կողմերի անբավարար իրազեկվածություն	Անապատացման դեմ պայքարում մասնակցային գործընթացների կազմակերպման ձախողում	Գործողությունների ազգային ծրագրի նպատակների, նախատեսվող միջոցառումների, ակնկալվող արդյունքների վերաբերյալ իրազեկման աշխատանքներ	ՀՀ բնապահպանության նախարարություն. ՋԼՄ-ներ (համաձայնությամբ).
3.	Ծրագրի իրականացման գործընթացներում շահագրգիռ կողմերի անտարբերություն կամ թույլ ներգրավվածություն	Ծրագիրը չի ծառայում իր նպատակներին	Բացատրական և իրազեկման աշխատանքներ՝ անապատացման սոցիալ-տնտեսական հետևանքների վերաբերյալ	ՀՀ բնապահպանության նախարարություն.
4.	Ծրագրում նշված իրավական ակտերի նախագծերի մշակման, քննարկումների և ընդունման գործընթացների ձգձգումներ	Խոչընդոտվում է անապատացման դեմ պայքարի գործընթացը	Իրավական ակտերի նախագծերի մշակման և քննարկումների իրականացման պատասխանատուների սահմանում և ժամանակացույցի կազմում	ՀՀ բնապահպանության նախարարություն.

49. Գործողությունների ծրագրի իրականացման մոնիթորինգը և գնահատումը

1) Սույն ծրագրի իրականացման մոնիթորինգի և գնահատման նպատակն է ապահովել նախատեսված ժամկետներում դրա արդյունավետ իրականացումը: Այն հնարավորություն կտա դասեր քաղել գործողությունների իրականացման արդյունքներից և անհրաժեշտության դեպքում համապատասխան փոփոխություններ ու

ճշգրտումներ կատարել ծրագրում, կապահովի համապատասխան գործընթացների օբյեկտիվությունը, թափանցիկությունը և կորպորատիվ պատասխանատվությունը:

2) Տարեկան կտրվածքով մոնիթորինգի ենթակա են սույն Ծրագրի շրջանակներում իրականացվող բոլոր գործողությունները: Այդ տեսակետից, որպես մոնիթորինգի չափորոշիչներ, հանդես են գալիս.

ա. յուրաքանչյուր գործողության իրականացման համար նախատեսված ժամկետը.

բ. գործողությունների իրականացման գործընթացների համապատասխանությունը գործողությունների նպատակին.

գ. յուրաքանչյուր գործողության իրականացման համար տարեկան կտրվածքով հատկացված ֆինանսական միջոցների ծախսը.

դ. յուրաքանչյուր գործողության իրականացման համար սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացված հաշվետվությունները.

ե. իրականացվող գործողություններում շահագրգիռ կողմերի ներգրավվածության մակարդակը և կատարված աշխատանքի մասնաբաժինը:

3) Ծրագրի իրականացման մոնիթորինգն ու գնահատումը կատարվում է Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության համակարգում ստեղծված ՄԱԿ-ի <<Անապատացման դեմ պայքարի>> կոնվենցիայի իրականացման համակարգող խորհրդի կողմից:

Աղյուսակ 12

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՆԱՊԱՏԱՑՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ 2015-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

հ/հ	Միջոցառման անվանումը	Նպատակը	Կատարողը	Կատարման ժամկետը	Ֆինանսական ապահովումը	Ակնկալվող արդյունքը
	1. ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ					
1.1	<<Անապատացման ենթարկված տարածքների իրավական ռեժիմի մասին>> օրենքի նախագծի մշակում:	Սահմանել անապատացման ենթարկված տարածքների չափանիշները, իրավական ռեժիմը:	ՀՀ բնապահպանության նախարարություն, ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, ՀՀ տարածքային կյառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն:	2020 թ.	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ:	Անապատացման ենթարկված տարածքների վերականգնում:
1.2	ՀՀ Հողային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի մշակում:	Ապահովել հողերի աղտոտվածության վիճակի մոնիթորինգի իրականացումը: Ներդնել հողային ծածկույթի դասակարգման համակարգի վերաբերյալ անհրաժեշտ դրույթները:	ՀՀ բնապահպանության նախարարություն. ՀՀ գյուղատնտեսության նախարարություն:	2017 թ.	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ:	Հողերի որակական ցուցանիշների վերաբերյալ համակարգված տեղեկատվական տվյալների շտեմարանի ստեղծում և տեղեկատվության մատչելիության ապահովում:
	2. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ					
2.1	ՀՀ բնապահպանության նախարարությանն առընթեր ՄԱԿ-ի <<Անապատացման դեմ պայքարի...>> կոնվենցիայի իրականացման համակարգող խորհրդի ստեղծում: ՀՀ բնապահպանության նախարարի հրաման:	ՄԱԿ-ի <<Անապատացման դեմ պայքարի...>> կոնվենցիայի իրականացման արդյունավետության ապահովում:	ՀՀ բնապահպանության նախարարություն.	2015 թ.	Ֆինանսական ապահովում չի պահանջվում:	ՄԱԿ-ի <<Անապատացման դեմ պայքարի...>> կոնվենցիայի իրականացման արդյունավետությունը բարձրացել է:
2.2	Մոնիթորինգի տվյալների միասնական ու համակարգված տեղեկատվական շտեմարանի ստեղծում:	Շրջակա միջավայրի և բնական ռեսուսների վիճակի բազմակողմանի գնահատման ապահովում:	ՀՀ բնապահպանության նախարարություն	2017 թ.	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ:	Էկոլոգիական լարվածության չափանիշների սահմանում և գնահատման սանդղակի մշակում:

	ՀՀ բնապահպանության նախարարի հրաման:					
2.3	Գյուղացիական տնտեսությունների խոշորացման ծրագրի մասին: ՀՀ կառավարության որոշում:	Հողի արդյունավետ մշակման նոր տեխնոլոգիաների և նորամուծությունների ներմուծում և տարածում:	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն. ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե. ՀՀ բնապահպանության նախարարություն:	2018 թ.	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ:	Գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալների մեծացում, ծախսերի կրճատում:
2.4	Երաշտի մոնիթորինգի և կանխատեսման համակարգի ներդրում: ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի հրաման:	Երաշտի մոնիթորինգի բարելավում, վաղ նախազգուշացման համակարգի ստեղծում, ինչպես նաև տնտեսության պլանավորման բարելավում:	ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն. բնապահպ	2020 թ.	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ:	Երաշտի մոնիթորինգի, վաղ նախազգուշացման և տեղեկատվական կատարելագործված համակարգ:
2.5	Հողերի դեգրադացման դեմ պայքարի միջոցառումների համալիր ծրագրի մասին: ՀՀ կառավարության որոշում:	Հողերի բերրիության ավելացման երկարաժամկետ ապահովում:	ՀՀ բնապահպանության նախարարություն. ՀՀ գյուղատնտեսության նախարարություն. ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն	2018 թ.	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ:	Հողերի աղակալման, ճահճացման և էրոզիայի նվազում, հողերի բերրիության բարձրացում:
2.6	Հողերի չեզոք դեգրադացիայի իրականացման ծրագրի մասին: ՀՀ կառավարության որոշում:	Հողերի չեզոք դեգրադացիայի նպատակային ցուցանիշների որոշում, հողերի դեգրադացիայի կանխարգելում:	ՀՀ բնապահպանության նախարարություն. ՀՀ գյուղատնտեսության նախարարություն. ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն.	2018 թ.	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ:	Դեգրադացված հողերը վերականգնված են և նվազագույնի է հասցված հողերի հետագա դեգրադացումը:
2.7	Անապատացման հիմնախնդիրներին առնչվող գիտական հետազոտությունների գերակա թեմաների որոշում/սահմանում և իրականացում: ՀՀ ԳԱԱ նախագահության	Բնական պաշարների պահպանության և արդյունավետ օգտագործման ապահովում:	ՀՀ բնապահպանության նախարարություն. ՀՀ գյուղատնտեսության նախարարություն. ՀՀ ԳԱԱ (համաձայնությամբ). ՀՀ տարածքային կառավարման և	2018 թ.	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ:	Գիտական հետազոտությունների արդյունքները օգտագործվում են կառավարչական որոշումներ ընդունելիս:

	որոշում:		արտակարգ իրավիճակների նախարարություն.			
2.8	Ռեկրեացիոն զարգացման կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի մասին: ՀՀ կառավարության որոշում:	Ռեկրեացիոն ռեսուրսների կադաստրավորում և ռեկրեացիայի զարգացման չափանիշների սահմանում:	ՀՀ բնապահպանության նախարարություն. ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն. ՀՀ էկոնոմիկայի նախարարություն.	2017 թ.	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ:	Զարգացել են ռեկրեացիոն ենթակառուցվածքները:
2.9	ՀՀ բնապահպանության նախարարության կայքում <<Հայաստանում անապատացման դեմ պայքարի>> նոր էջի ստեղծում: ՀՀ բնապահպանության նախարարի հրաման:	Տեղեկատվական միասնական համակարգի ձևավորումը	ՀՀ բնապահպանության նախարարություն.	2017 թ.	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ:	Ապահովված է հասարակության տարբեր շերտերի մասնակցությունը որոշումների կայացմանը:
	3. Հասարակայնության իրազեկության և գործողություններին մասնակցության ապահովում					
3.1	Անապատացման, հողերի դեգրադացիայի և երաշտների հիմնախնդիրների վերաբերյալ հասարակայնության իրազեկության բարձրացման ծրագրի մասին: ՀՀ կառավարության որոշում:	Անապատացման, հողերի դեգրադացիայի և երաշտների հիմնախնդիրների լուծման գործընթացներում հասարակայնության մասնակցության ապահովում:	ՀՀ բնապահպանության նախարարություն. ՀՀ գյուղատնտեսության նախարարություն. ՀՀ կրթության և գիտության նախարարություն.	2016 թ.	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ:	Տեղեկացված հասարակության ակտիվ ներգրավում անապատացման հիմնախնդիրների լուծման գործընթացներում:
	4. Համատեղ գործողություններ Ռիո-յի Կոնվենցիաների շրջանակներում և միջազգային համագործակցություն					
4.1	Ռիո-յի կոնվենցիաների միջև առկա սիներգիկ կապերի բացահայտում և համատեղ գործողությունների ծրագրի մասին: ՀՀ կառավարության որոշում:	Բարձրացնել Ռիո-յի կոնվենցիաների իրականացմանն ուղղված գործողությունների արդյունավետությունը:	ՀՀ բնապահպանության նախարարություն.	2018 թ.	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ:	Կոնվենցիաների շրջանակներում իրականացվող գործողությունների կրկնություններից խուսափում և նյութական միջոցների տնտեսում:
4.2	Ռիո-ի կոնվենցիաների վերաբերյալ կրթական հաստատությունների աշխատողների մասնագիտական	Ռիո-ի կոնվենցիաների վերաբերյալ գիտելիքների տրամադրում:	ՀՀ բնապահպանության նախարարություն. ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2018 թ.	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ:	Կրթական հաստատությունների աշխատողների մասնագիտական գիտելիքների բարձրացում:

	վերապատրաստման դասընթացների ծրագրի մասին: ՀՀ կառավարության որոշում:					
4.3	Տարածաշրջանային և ենթատարածաշրջանային համատեղ գործողությունների ծրագրերի մշակում: Միջազգային համաձայնագիր:	Տարածաշրջանային և ենթատարածաշրջանային երկրների հետ համագործակցության ընդլայնում:	ՀՀ բնապահպանության նախարարություն. ՀՀ գյուղատնտեսության նախարարություն. ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն:	2018 թ.	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ:	Անապատացման հիմնախնդիրների լուծումն իրականացվում է միջազգային համագործակցության շրջանակներում: